

hww2uwwnwwnwwnww



ԴԱՏԱԿԱՎՈՐՆԵՐԻ ԶԱՄԱՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐԻ ԶԱՄԱՐ

© Հեղինակային իրավունքը՝ ՄԱԿ

ԺՆԵՎ 2007

Բոլոր իրավունքները գրանցված են: Այս հրատարակության որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել որոնողական որևէ համակարգում կամ որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանված, ձայնագրված կամ այլ կերպ փոխանցվել առանց ՄԱԿ-ի նախնական համաձայնության:

Ձեռնարկը նախատեսված չէ վաճառքի համար: Այն առաքվում է պայմանով, որ չի կարող ո՛չ ապառիկ, ո՛չ որևէ այլ կերպ, բացի բնօրինակից, հանձնվել այլոց, ներառյալ՝ առևտրային եղանակով՝ առանց հրատարակողների նախնական թույլտվության և պայմանով, որ հաջորդ հրատարակողը պահպանում է նույն պահանջները: Սույն աշխատանքը կամ դրա առանձին մասերը վերահրատարակելու իրավունք ստանալու դիմումը ողջունվում է և կարող է ներկայացվել ՄԱԿ-ի գրասենյակ: Անդամ պետությունները և նրանց կառավարական կառույցները կարող են թարգմանել և վերահրատարակել այս աշխատանքը առանց թույլտվության, բայց այդ մասին տեղյակ պահեն ՄԱԿ-ի գրասենյակին:

ISBN 978-92-9142-347-7

HR/PUB/07/6

ԲԱՑԱՌՈՒՄԻՑ ԴԵՊՐԻ ՅԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ



Միավորված
ազգերի
կազմակերպություն




Միավորված
ազգերի կազմակերպություն
Մարդու իրավունքների գերագույն
հանձնակատարի գրասենյակ



Միջխորհրդարանական
միություն

ԱՊՐԻԼԻ ԵՐԱՍԻՆԻՆԻՆ



Խոսք Երախտագիտության

Ձեռնարկը պատրաստվել է Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության (DESA/SUՅԿ), ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԻԳՅԳ/OHCHR) և Միջխորհրդարանական միության (ՄԽՄ) հետ համատեղ:

Չեղինակներ՝ Էնդրյու Բիրնես (Հարավային Ուելսի համալսարան, Ավստրալիա), Ալեքս Կոնտե (Սաութհեմփթոնի համալսարան, Միացյալ Թագավորություն), Ժան-Պիեռ Գոննո (ՄԱԿ-SUՅԿ), Լինդա Լարսոն (ՄԱԿ-SUՅԿ), Թոմաս Շինդլմայր (ՄԱԿ-SUՅԿ), Նիոլա Շեֆերդ (ՄԱԿ-SUՅԿ), Սայմոն Ուոլքեր (ՄԻԳՅԳ/OHCHR) և Ադրիանա Ջարալուքուի (ՄԻԳՅԳ/OHCHR)

Օժանդակողներ՝ Գրեհեմ Էդուարդս (Ավստրալիայի խորհրդարանի անդամ), Անդա Ֆիլիպ (ՄԽՄ), Անդերս Բ. Ջոնսոն (ՄԽՄ), Աքսել Լեբլուա (Ներառական տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների համար գլոբալ նախաձեռնություն), Ջեյմս Մուանդիա (Ուգանդայի խորհրդարանի նախկին անդամ), Ջենեթ Լորդ (BlueLaw LLP), Ալեսանդրո Մոթթեր (ՄԽՄ), Քաջ Նորդբլուիստ (Շվեդիայի խորհրդարանի նախկին անդամ), Մոնա Պարե (Քարթհենի համալսարան, Կանադա) և Չենրիետա Բոգոպան-Ջուլու (խորհրդարանի անդամ, Հարավային Աֆրիկա):

Ինչպես նաև՝ Ինքլուժն ինթերնեշնլը, Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հանձնաժողովը Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար (ESCAP), ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ), Համաշխարհային բանկը (ՀԲ) և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) ապահովել են տեքստի նախնական ուղղորդումը և մեկնաբանությունները:

Խմբագիր-խորհրդատու՝ Մերիլին Էջիրոն

Նախաբան

Հաշմանդամություն ունեցող անձինք մնում են յուրաքանչյուր հասարակության ամենամարդինալացված մասը: Թեև մարդու իրավունքների միջազգային շրջանակն էականորեն փոխել է մարդկանց կյանքն աշխարհում, սակայն ոչ մի փոփոխության չի հանգեցրել հաշմանդամություն ունեցող անձանց կյանքում: Անկախ երկրի տնտեսության և մարդու իրավունքների վիճակից՝ նրանք հիմնականում իրենց մարդու իրավունքները հարգելու առումով գտնվում են վերջին գծում: Չունենալով ինքնուրույն լինելու հնարավորություններ՝ հաշմանդամություն ունեցող անձինք ապավինում են մյուսների բարությանը և բարեգործությանը: Վերջին տարիներին աշխարհում ավելի ու ավելի են գիտակցում, որ 650 միլիոն անձանց մարդու իրավունքները մերժելն այլևս անընդունելի է:

Գործելու ժամանակն է: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան միջազգային հանրության պատասխանն էր հաշմանդամություն ունեցող անձանց խտրականության, բացառման և անմարդկային վերաբերմունքի երկարատև պատմությանը: Այն պատմական և հեղափոխական էր շատ առումներով՝ լինելով ամենաարագ մերժվող մարդու իրավունքների մասին երբևէ եղած համաձայնագիր և առաջինը 21-րդ դարում: Կոնվենցիան արդյունք է երեք տարի տևած բանակցությունների, որոնց մասնակցել են քաղաքացիական հասարակությունը, տարբեր երկրների կառավարությունները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում 2006 թ. դեկտեմբերին կոնվենցիան ընդունելուց հետո աննախադեպ թվով երկրներ ցույց տվեցին իրենց նվիրվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքները հարգելու խնդրին՝ ստորագրելով կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը, երբ դրանք բաց էին ստորագրման համար 2007 թ. մարտին:

Կոնվենցիան ապահովում է, որ աշխարհի ամենախոշոր փոքրամասնությունը օգտվի նույն իրավունքներից և հնարավորություններից, ինչ մյուս անձինք: Այն կարգավորում է շատ ոլորտներ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք ենթարկվել են խտրականության, այդ թվում՝ արդարադատության մատչելիությունը, քաղաքական և հասարակական կյանքին մասնակցությունը, կրթությունը, զբաղվածությունը, խոշտանգումներից, շահագործումից և բռնություններից պաշտպանվածությունը, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Կամընտիր արձանագրության համաձայն՝ մասնակից պետությունների այն անձինք, որոնց կարծիքով իրենց իրավունքները խախտվել են, և ովքեր սպառել են ներպետական միջոցները, կարող են հատուցում փնտրել միջազգային անկախ մարմնում:

Կոնվենցիան շատ էր ուշացել: 25 տարի էր անցել 1981 թ. Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվանից, երբ համընդհանուր ուշադրություն հրավիրվեց հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների վրա: Դրան հաջորդող տարիների ընթացքում շատ հասարակություններ հեռացան հաշմանդամություն ունեցող անձանց բարեգործության կամ խղճահարության առարկա համարելուց՝ գիտակցելով, որ հասարակությունն ինքն է հաշմանդամ դարձնում: Կոնվենցիան մարմնավորում է այս վարքագծային փոփոխությունը և կարևոր քայլ էր դեպի հաշմանդամության ընկալման փոփոխությունը և ապահովումը, որ հասարակությունները ճանաչեն, որ բոլոր անձինք պետք է հնարավորություն ունենան հասնելու իրենց ողջ ներուժին:

Այս ձեռնարկը ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի վարչության, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի և Միջխորհրդարանական միության համագործակցության արգասիք է: Ձեռնարկի պատրաստմանը օգնել է նաև խմբագրական հանձնաժողովը, որը բաղկացած էր խորհրդարանականներից, գիտնականներից, գործնական մասնագետներից, որոնցից շատերը հաշմանդամություն ունեցող անձինք էին:

Խորհրդարանները և խորհրդարանականները առանցքային դեր են խաղում մարդու իրավունքների պաշտպանության և դրանց աջակցելու հարցում: Այս ձեռնարկի նպատակն է աջակցել խորհրդարանականներին և մյուսներին կոնվենցիայի կիրարկման հարցում, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք հասնեն բացառումից դեպի հավասարություն վերափոխմանը: Ձեռնարկը նաև միտված է բարձրացնելու կոնվենցիայի և դրա դրույթների վերաբերյալ իրազեկվածությունը, նպաստելու հաշմանդամության խնդիրների գնահատմանը և օգնել խորհրդարանականներին հասկանալու համար այն մեխանիզմները և շրջանակները, որոնք անհրաժեշտ են կոնվենցիան գործնական կիրառության հարթություն տեղափոխելու համար: Ներկայացնելով օրինակներ և ծանոթագրություններ՝ հույս ենք ունեցել, որ ձեռնարկը կծառայի օգտակար գործիք խորհրդարանականների համար ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին աջակցելու և դրանք պաշտպանելու համար:

Շա Չականգ
Տնտեսական և
սոցիալական հարցերի
վարչության գլխավոր
քարտուղարի տեղակալ

Լուիզ Արբուր
ՄԱԿ-ի մարդու
իրավունքների
գերագույն
հանձնակատար

Անդերս Բ. Ջոնսոն
Միջխորհրդարանական
միության
գլխավոր
քարտուղար

Բովանդակություն

Գլուխ 1. Ընդհանուր ակնարկ	1
Չաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացումը. հիմնավոր պատճառներ	1
Կոնվենցիայի կարգավորման հիմնական առարկան	3
Չաշմանդամությունը գտնվում է հասարակության, այլ ոչ թե անձի մեջ	4
Ինչո՞ւ առաջացավ կոնվենցիայի կարիքը	5
Կոնվենցիայով ամրագրված իրավունքներ	5
Զարգացման և հաշմանդամության միջև կապը	6
Գլուխ 2. Կոնվենցիայի մանրամասները	9
Պատմական զարգացումները, որոնք բերեցին նոր կոնվենցիայի ընդունմանը	9
Կոնվենցիան առաջին հայացքից	12
<i>Կոնվենցիայի նպատակը</i>	12
<i>Կոնվենցիայի խնդիրները</i>	13
<i>Չաշմանդամության բնորոշումը</i>	13
Կոնվենցիայում ամրագրված իրավունքները և սկզբունքները	15
<i>Ընդհանուր սկզբունքները</i>	15
<i>Իրավունքները</i>	16
<i>Միջազգային համագործակցություն</i>	19
Մասնակից պետությունների՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները	20
<i>Պաշտպանության, հարգանքի և իրականացման ենթակա պարտավորությունները</i>	22
Կոնվենցիայի համեմատությունը մարդու իրավունքների այլ համաձայնագրերի հետ	22
Գլուխ 3. Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության մշտադիտարկումը	27
Մշտադիտարկման մեխանիզմը կոնվենցիայում	27

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե . . .	28
Պարբերական հաշվետվողականություն	29
Պարբերական հաշվետվողականության նպատակը	30
Պարբերական հաշվետվողականությանը հետևելը	32
Մասնակից պետությունների համաժողովը	32
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մշտադիտարկման այլ մեխանիզմներ	33
Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը	34
Անհատական հաղորդման ընթացակարգ	34
Հետաքննության ընթացակարգ	37
Կամընտիր արձանագրությանը միանալը	39

Գլուխ 4. Կոնվենցիային և կամընտիր

արձանագրությանը միանալը	42
Կոնվենցիային միանալը	42
Կոնվենցիայի ստորագրումը	42
Ի՞նչ է նշանակում ստորագրել կոնվենցիան	43
Պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնություն տալը	44
Վավերացման գործընթացը	44
Վավերացումը տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունների կողմից	45
Միանալը	45
Վավերացման, պաշտոնական հաստատման և միանալու փաստաթուղթը	46
Խորհրդարանի դերը վավերացման գործընթացում	47
Երբ կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը մտնում են ուժի մեջ	47
Կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության վերաբերյալ վերապահումները	49
Վերապահումները փոփոխելը կամ հանելը	50
Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության վերաբերյալ հայտարարությունները	51
Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության վերաբերյալ հայտարարությունների տեսակները	51

Կոնվենցիայի վերաբերյալ հայտարարություններ անելը	51
Կոնվենցիայի ազդեցությունը դրա մասնակից չհանդիսացող կողմերի համար	52
Գլուխ 5. Ազգային օրենսդրությունը և կոնվենցիան	55
Ներպետական օրենսդրությունում կոնվենցիան ներմուծելը	55
Ստորագրման և վավերացման նշանակությունը	55
Ներմուծումը սահմանադրական, օրենսդրական և կարգավորման միջոցառումների միջոցով	58
Հավասարության վերաբերյալ և խտրականությունն արգելող օրենսդրության տեսակները	60
Օրենսդրական միջոցների բովանդակությունը	63
Առանցքային տարրեր	63
Ներմուծվող օրենսդրության կապը կոնվենցիայի հետ	64
Հաշմանդամության այն տեսակները, որոնց պետք է անդրադարձ կատարվի օրենսդրությունում	64
«Անհրաժեշտ հնարավորությունները» որպես օրենսդրության անկյունաքար	65
Հատուկ միջոցներ	72
Պետական մարմինների, մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից դրսևորվող խտրականությունը	74
Օրենսդրական բարեփոխումներ պահանջող առանձնահատուկ ոլորտներ.	74
Ստավոր սեփականության օրենքները և գրքերից, ֆիլմերից և այլ լրատվամիջոցներից օգտվելն ապահովելը	77
Նշանների ազգային լեզուն ճանաչող օրենսդրություն	77
Ազգային օրենքով նախատեսված բողոքարկման ընթացակարգերը	78
Կիրարկմանը նպաստող ընթացակարգային եղանակները	78
Իրականացնեն բազմակողմանի դիտարկում	78
Ապահովեն բոլոր օրենքների համապատասխանությունը կոնվենցիային	81
Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը օրենսդրական գործընթացում	82
Տեղական կամ նահանգային խորհրդարանների ներգրավումը	82

Գլուխ 6. Դրույթներից դեպի պրակտիկա.

Կոնվենցիայի կիրարկումը 84

Բուժում և վերականգնում 84

Մատչելիություն 86

Կրթություն 89

Ներառական կրթության ծախսերը 92

Աշխատանք և զբաղվածություն 93

Իրավունակությունը և աջակցման ենթակա որոշումների ընդունումը 98

Գլուխ 7. Կոնվենցիայի կիրարկման և մշտադիտարկման համար

ազգային ինստիտուտների ստեղծումը 102

Պատասխանատու կառույցներ 103

Համակարգման մեխանիզմները 103

Մարդու իրավունքների ազգային կառույցներ 105

Կոնվենցիայի հարաբերակցությունը մարդու իրավունքների
ազգային կառույցներին 105

Մարդու իրավունքների ազգային կառույցների տեսակները 106

Փարիզյան սկզբունքներ 107

Մարդու իրավունքների ազգային կառույցների
պոտենցիալ գործառույթները 107

Մարդու իրավունքների ազգային կառույցները և
բողոքարկման մեխանիզմները 113

Համապատասխան կառույցի ստեղծում 115

Խորհրդարանական վերահսկողություն 116

Խորհրդարանական հանձնաժողովներ 116

Հետաքննության հանձնաժողովներ 116

Նախարարներին ուղղված հարցեր 118

Գործադիր իշխանությունում խելամիտ նշանակումների հարցը 118

Ոչ կառավարական հանրային մարմինների
նկատմամբ վերահսկողությունը 118

Պատարանները և դատական համակարգի դերը 118

Իրավունքների դատական պաշտպանությունը 119

Ծանոթագրություններ 124

Հրատարակիչների մասին 125

Ընդհանուր ակնարկ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացումը. հիմնավոր պատճառներ

Աշխարհում ապրում է ավելի քան 650 միլիոն հաշմանդամություն ունեցող մարդ: Գումարենք այդ թվին նրանց բազմաճյուղի ընտանիքները, և կստանանք աշխարհում հաշմանդամության խնդիրներին առնչվող 2 միլիարդ ցնցող թիվը: Աշխարհի յուրաքանչյուր մասում, յուրաքանչյուր երկրում հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ ապրում են հասարակության ստորին մակարդակում՝ զրկված կյանքի որոշ հիմնական գործառնություններից: Նրանք դպրոց հաճախելու, աշխատանք գտնելու, իրենց սեփական տունն ունենալու, ընտանիք ստեղծելու, երեխաներ մեծացնելու, հասարակական կյանքով ապրելու կամ քվեարկելու շատ քիչ հույս ունեն: Աշխարհում հաշմանդամություն ունեցող մարդկանց գերակշիռ մասի համար գլխավորապես անմատչելի են խանութները, հասարակական վայրերը, տրանսպորտը և նույնիսկ տեղեկատվությունը:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ աշխարհի ամենախոցելի և ամենախոշոր փոքրամասնությունն են կազմում: Այդ թվերն ինքնին տազնապալի են. աշխարհի ամենաաղքատ մարդկանց մոտավորապես 20 տոկոսը հաշմանդամություն ունեցող անձինք են: Ջարգացող երկրներում հաշմանդամություն ունեցող երեխաների 98 տոկոսը դպրոց չի հաճախում: Փողոցում հայտնված երեխաների մոտավորապես 30 տոկոսը հաշմանդամություն ունի: Որոշ երկրներում հաշմանդամություն ունեցող մեծահասակների կրթվածության մակարդակը ծայրաստիճան ցածր՝ 3, իսկ կանանց դեպքում՝ նույնիսկ 1 տոկոսի է հասնում:

Թեև աղքատ մարդիկ իրենց կյանքի ընթացքում հաշմանդամ դառնալու զգալիորեն ավելի շատ հավանականություն ունեն, հաշմանդամությունն ինքնին նույնպես կարող է հանգեցնել աղքատության, քանի որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հաճախ բախ-

վում են խտրականության և մարզինալացման: Հաշմանդամությունն ուղեկցվում է անգրագիտությամբ, թերսնամբ, մաքուր ջրի անմատչելիությամբ, հիվանդությունների դեմ դիմադրողականության ցածր ցուցանիշներով և առողջության համար վտանգավոր աշխատանքային պայմաններով:

Քանի որ աշխարհի բնակչությունն աճում է, աճում է նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց թիվը: Ջարգացող երկրներում հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ վատ առողջապահական պայմանները, վարակիչ հիվանդությունների տարածվածությունը, բնական աղետները, զինված հակամարտությունները, հետևակային ականների և հրազենի տարածվածությունը մեծ ծավալներով հանգեցնում են խանգարումների և երկարատև վնասվածքների առաջացման: Միայն ճանապարհային վթարները երիտասարդների մոտ ամեն տարի հանգեցնում են միլիոնավոր վնասվածքների և հաշմանդամության դեպքերի: Ջարգացած երկրներում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծնվածներն ապրում են ավելի երկար, ինչը նշանակում է, որ նրանցից շատերը, ի վերջո, իրենց հետագա կյանքում կունենան հաշմանդամություն:

«Մեր երկրներում հաշմանդամությունը դիտվում է որպես բարեգործության խնդիր: Քեզ չեն վերաբերվում որպես մարդու, ով կարող է կյանք ունենալ, աշխատանք գտնել և ինքնուրույն ապրել: Սա ակնհայտորեն դեմ է մեր մարդու իրավունքներին: Մեր երկրներում իրազեկվածության բարձրացման ուղղությանը հսկայական աշխատանք կանելու»:

Մարիա Վերոնիկա Ռեյնա, հենաշարժական համակարգի խանգարում ունեցող գիտնական

Այն փաստը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հիմնականում ապրում են աղքատության մեջ, հաճախ հետևանք է արհամարհանքի և անտարբերության, որն ամրագրվում է զարգացման պետական ծրագրերում և ռազմավարություններում, որոնք արհամարհում և բացառում են երկրի սոցիալ-տնտեսական կյանքում հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածության իրավունքը, նաև անմատչելի են դարձնում այն և չեն աջակցում դրա իրականացմանը:

Այնուամենայնիվ մի շարք զարգացած և զարգացող երկրներում, որոնք ընդունել են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքներն ապահովելուն և պաշտպանելուն ուղղված ամբողջական օրենսդրություն, այդ անձինք ապրում են լիարժեք և անկախ կյանքով՝ որպես ուսանող, աշխատող, ընտանիքի անդամ և քաղաքացի: Նրանք ի վիճակի են այդպես ապրելու, քանի որ հասարակությունը վերացրել է այն ֆիզիկական և մշակութային պատնեշները, որոնք նախկինում խոչընդոտում էին հասարակական կյանքին նրանց լիարժեք մասնակցությունը:

Այս ձեռքբերումները նկատի ունենալով միջազգային հանրությունը միավորվել է՝ վերահաստատելու հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձի ար-

ժամապատվությունը և արժեքը և ապահովելու պետություններին արդյունավետ իրավական գործիքով՝ վերջ դնելու անարդարությանը, խտրականությանը և իրավունքների խախտումներին, որոնց բախվում է հաշմանդամություն ունեցող անձանց մեծ մասը: Այդ գործիքը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան է:

Կոնվենցիայի կարգավորման հիմնական առարկան

«Հաշմանդամություն ունեցող անձ» եզրույթը կիրառվում է բոլոր անձանց համար, ովքեր երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր տեսակի բացասական վերաբերմունքի կամ ֆիզիկական արգելքների հետ փոխազդեցության հետևանքով կարող են խոչընդոտել այդ մարդկանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին: Այնուամենայնիվ սա կոնվենցիայի միջոցով պաշտպանության ենթակա անձանց սպառիչ բնորոշումը չէ և ոչ էլ այս բնորոշումը սահմանափակում է ազգային օրենքով հաշմանդամություն ունեցող մարդկանց ավելի լայն խմբեր նախատեսելուն, այդ թվում՝ կարճատև հաշմանդամություն ունեցող անձինք կամ նախկինում հաշմանդամություն ունեցած անձինք:

Վիճակագրական տվյալներ

- Աշխարհի բնակչության մոտ 10 տոկոսն ունի հաշմանդամություն. սա աշխարհի ամենախոշոր փոքրամասնությունն է: Այս թիվն աճում է բնակչության աճի, բժշկության առաջընթացի, ծերացման տարիքային գործընթացի պատճառով (ԱՀԿ):
- Համաձայն գնահատումների՝ աշխարհի ամենաչքավոր բնակչության 20 տոկոսն ունի հաշմանդամություն, որոնք իրենց համայնքներում դասվում են ամենաչունևորների շարքին (Համաշխարհային բանկ):
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրներում հաշմանդամության ցուցանիշները նշանակալիորեն բարձր են ցածր կրթական մակարդակ ունեցող խմբերում: Միջին հաշվարկներով՝ ցածր կրթական մակարդակ ունեցող անձանց 19 տոկոսն ունի հաշմանդամություն՝ լավ կրթություն ունեցող անձանց 11 տոկոսի դիմաց (ՏՀԶԿ/OECD):
- Հաշմանդամություն ունեցող երեխաների մահացությունը կարող է հասնել մինչև 80 տոկոսի այն երկրներում, որտեղ մինչև հինգ տարեկանների մահացության մակարդակը նվազել է մինչև 20 տոկոս: Որոշ դեպքերում տպավորություն է ստեղծվում, որ հաշմանդամություն ունեցող երեխաները «մեջտեղից հանվում են» (Միջազգային զարգացման գործակալություն, Միացյալ Թագավորություն):

Հաշմանդամություն ունեցող անձը մի հասարակությունում կամ միջավայրում կարող է համարվել այդպիսին, իսկ մյուսում՝ ոչ: Աշխարհի շատ անկյուններում հատուկ պայմաններ և տարբերություններ ունեցող մարդկանց վերաբերյալ կան խորը և կայուն բացասական կարծրատիպեր և նախապաշարմունքներ: Այս վե-

«Բնածին հաշմանդամ ամարդկանցից, ինչպիսին ես եմ, ընտանիքը հաճախ շատ քիչ բան է սպասում, նախ՝ նման սպասումները քիչ են, երկրորդ՝ հասարակությունում առկա ֆիզիկական արգելքները կարող են խոչընդոտել նրանց մատչելիությունը իրենց միջավայր, երրորդ՝ սոցիալական արգելքները կարող են խոչընդոտել նրանց մատչելիությունը իրենց միջավայր»:

Լինդա Մասթանդրեա, պարաօլիմպիական և հաշմանդամության հարցերով զբաղվող իրավաբան

ությունները, որոնք օգտագործում են հաշմանդամություն ունեցող անձինք իրենք իրենց բնորոշելիս, կամ ստիպել է մարդկանց իրենց բնորոշել այնպիսի արտահայտություններով, որոնք նրանց համար հաճելի չեն:

րաբերմունքը պայմանավորում է, թե ո՞վ է համարվում հաշմանդամություն ունեցող անձ և արմատավորում է հաշմանդամություն ունեցող անձանց բացասական կերպարը: Այն լեզուն, որ օգտագործվում է հաշմանդամություն ունեցող անձանց մասին խոսելիս, նշանակալի դեր է խաղում բացասական կարծրատիպերի ստեղծման և պահպանման հարցում: Այնպիսի բառեր, ինչպիսիք են «կաղ» կամ «մտավոր հետամնաց», միանշանակորեն նվաստացուցիչ են: Այլ բառեր, ինչպիսիք են «սայլակին գամված» բառը, ավելի շատ շեշտում են հաշմանդամությունը, քան անձին: Պատմականորեն հասարակությունը հաճախ չի օգտագործել այն արտահայտությունները, որոնք օգտագործում են հաշմանդամություն ունեցող անձինք իրենք իրենց բնորոշելիս, կամ ստիպել է մարդկանց իրենց բնորոշել այնպիսի արտահայտություններով, որոնք նրանց համար հաճելի չեն:

Այս կոնվենցիայի հեղինակները հստակորեն նշում են, որ հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի և իր շրջապատի փոխազդեցության արդյունք, որ

Հաշմանդամությունը գտնվում է հասարակության, այլ ոչ թե անձի մեջ

Անվասայլակից օգտվող մարդը դժվարություն է ունենում ձեռնտու աշխատանք ունենալու հարցում ոչ թե իր վիճակի, այլ այն պատճառով, որ շրջապատում կան արգելքներ, ինչպիսիք են անմատչելի ավտոբուսները կամ աշխատավայրի աստիճանավանդակները, որոնք խոչընդոտում են իր մատչելիությունը:

Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան կարող է դժվարություններ ունենալ դպրոցում իր նկատմամբ ուսուցիչների ունեցած վերաբերմունքի պատճառով, սխալ ուսումնական պլանի և ուսուցման նյութերի պատճառով, ոչ ճկուն դպրոցական հանձնաժողովի պատճառով, նաև ծնողների պատճառով, ովքեր ի վիճակի չեն համակերպվելու այնպիսի աշակերտների հետ, որոնք ունեն այլ ուսումնական կարողություններ:

Մի հասարակությունում, որտեղ շտկող լինգաները մատչելի են ծայրահեղ կարծատեսություն ունեցող անձի համար, այդ անձը չի համարվի հաշմանդամություն ունեցող: Բայց նույն վիճակում գտնվող մեկ ուրիշը մի հասարակությունում, որտեղ ուղղիչ լինգաները հասանելի չեն կհամարվեր հաշմանդամություն ունեցող, հատկապես, եթե անձը չի կարողանում իրականացնել իրեն տրված առաջադրանքները, ինչպիսիք են հսկելը, կարելը կամ գյուղատնտեսությամբ զբաղվելը:

հաշմանդամությունը մի այնպիսի բան չէ, որ ապրում է մարդու մեջ որպես որոշակի խանգարումների հետևանք: Այս կոնվենցիայով ամրագրվում է, որ հաշմանդամությունը զարգացող հայեցակարգ է, և որ օրենսդրությունը կարող է փոփոխվել՝ հանգեցնելով հասարակության մեջ դրական փոփոխությունների:

Ինչո՞ւ առաջացավ կոնվենցիայի կարիքը

Հաշմանդամություն ունեցող անձինք դեռևս հիմնականում ավելի շատ համարվում են սոցիալական պաշտպանության կամ առողջապահական հարաբերությունների «օբյեկտներ», քան իրավունքի «կրողներ»: Հատուկ հաշմանդամություն ունեցող անձանց համար մարդու իրավունքների համընդհանուր իրավական գործիք ընդունելու որոշումը ծնվեց այն փաստից, որ թեև հաշմանդամություն ունեցող անձինք տեսականորեն ունեն մարդու բոլոր իրավունքները, պրակտիկայում նրանք դեռևս զրկված են այն հիմնական իրավունքներից և հիմնարար ազատություններից, որոնք շատերի կարծիքով նրանք ունեն: Կոնվենցիան ըստ էության երաշխավորում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան նույն մարդու իրավունքները, ինչ մյուսները, և ի վիճակի լինեն ապրելու իրենց կյանքը ինչպես լիարժեք քաղաքացիներ, որոնք կարող են արժեքավոր ներդրում ունենալ հասարակական կյանքում, եթե ունենան նույն հնարավորությունները, ինչ մյուսները:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և դրա կամընտիր արձանագրությունը, որոնք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է 2006 թ. դեկտեմբերի 13-ին, համարվում են մարդու իրավունքների միջազգային գործիքների կառուցվածքում վերջերս արված էական լրացումներից (տե՛ս գլուխ 2): 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից ի վեր պետությունները ՄԱԿ-ի հովանու ներքո բանակցել և կնքել են մի շարք միջազգային համաձայնագրեր, որոնք սահմանում են բոլոր մարդկանց համար քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքներ: Այդ համաձայնագրերը սահմանում են այդ իրավունքների պաշտպանության և ապահովման համար ստեղծված հիմնարար սկզբունքները և իրավական դրույթները:

Կոնվենցիայով ամրագրված իրավունքները

Կոնվենցիան լրացնում է մարդու իրավունքների վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային համաձայնագրերը: Այն չի ամրագրում հաշմանդամություն ունեցող անձանց որևէ նոր իրավունք, այն ավելի շուտ հստակեցնում է պետությունների պարտավորությունները և իրավաբանական պարտականությունները, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդու իրավունքներն ապահովելուն և դրանցից հավասարապես օգտվելուն: Կոնվենցիան նշում է այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվեն այնպիսի վերափոխումներ, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել իրենց

իրավունքները, ինչպես նաև այն ոլորտները, որտեղ նրանց իրավունքների պաշտպանությունը պետք է ամրապնդվի, քանի որ այդ իրավունքները պարբերաբար խախտվել են: Այն նաև ամրագրում է համընդհանուր նվազագույն կանոններ, որոնք կիրառվում են յուրաքանչյուրի նկատմամբ և հիմք են ապահովում գործողությունների հետևողական շղթայի համար:

Կոնվենցիայի կիրարկման համար օրենսդրություն և քաղաքականություն, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի վրա որևէ ազդեցություն ունեցող քաղաքական ցանկացած այլ հարց մշակելիս և կիրարկելիս պետությունները պարտավոր են կոնվենցիայով նախատեսված պայմաններում խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց հետ նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով:

Ջարգացման և հաշմանդամության միջև կապը

Կոնվենցիան վավերացնելու պահից սկսած դրանով նախատեսված պարտավորություններն արտացոլվում են պետության ազգային իրավական համակարգում, զարգացման ծրագրերում, բյուջետային և նման այլ քաղաքականություններում: Կոնվենցիան նախանշում է որոշակի գործնական քայլեր, որոնք զարգացման բոլոր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը աջակցելու համար ձեռնարկում են կոնվենցիայի մասնակից պետությունները (տե՛ս գլուխ 5):

Կոնվենցիան նաև ճանաչում է միջազգային համագործակցության զարգացման կարևորությունը ազգային մակարդակում դրա կիրարկմանն ուղղված ջանքերում: Առաջին անգամվա համար կոնվենցիան չի շեշտում հաշմանդամություն ունեցող անձանց համար այնպիսի հատուկ ծրագրերի ստեղծումը, ինչպիսին է վերականգնումը, փոխարենն այն պահանջում է, որ զարգացման բոլոր ծրագրերը, ներառյալ միջազգային համագործակցության միջոցով իրականացվողները, լինեն ներառական և մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Եվ որ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները մասնակցեն զարգացման այս ծրագրերի մշակմանը բոլոր ատյաններում:

Հաշմանդամություն ունեցող անձինք մշտապես զրկվում են հետևյալ հիմնական իրավունքներից.

<ul style="list-style-type: none"> ❑ Կրթության իրավունք ❑ Ազատ տեղաշարժվելու իրավունք ❑ Հասարակության մեջ անկախ ապրելու իրավունք ❑ Աշխատանք ունենալու իրավունք, եթե նույնիսկ լավ որակավորում ունեն ❑ Տեղեկատվության իրավունք 	<ul style="list-style-type: none"> ❑ Առողջապահական ծառայություններից պատշաճ կերպով օգտվելու իրավունք ❑ Քաղաքական իրավունքներ, ինչպիսին է ընտրելու իրավունքը ❑ Ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունք:
---	--

2000 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի հազարամյակի գագաթնաժողովում պետությունների և կառավարությունների ղեկավարները համաձայնեցին աշխատել՝ հասնելու հետևյալ նպատակներին.

ՆՊԱՏԱԿ 1. Ծայրահեղ աղքատության և սովի վերացում

■ Աղքատությունը որպես հաշմանդամության պատճառ. հաշմանդամության դեպքերի ավելի քան 50 տոկոսը կանխելի է և ուղղակիորեն կապված աղքատության հետ: Սա մասնավորապես ճիշտ է՝ պայմանավորված թերսնման, մայրական թերսնման և վարակիչ հիվանդությունների հետ կապված հաշմանդամության հետ:

■ Հաշմանդամությունը որպես աղքատության ռիսկի գործոն. հաշմանդամություն ունեցող անձանց ավելի քան 85 տոկոսն ապրում է աղքատության մեջ:

ՆՊԱՏԱԿ 2. Տարրական համընդհանուր կրթության ձեռքբերում

■ Ջարգացող աշխարհում հաշմանդամություն ունեցող երեխաների մոտ 98 տոկոսը դպրոց չի հաճախում:

ՆՊԱՏԱԿ 3. Գեղերային հավասարության օժանդակություն և կանանց լիազորությունների ընդլայնում

■ Լայնորեն տարածված է այն տեսակետը, որ հաշմանդամություն ունեցող կանայք հասարակության մեջ գտնվում են կրկնակի անբարենպաստ վիճակում. նրանց չեն ներգրավում տարբեր գործողություններում իրենց սեռի և հաշմանդամության պատճառով:

■ Հաշմանդամություն ունեցող կանայք կրկնակի-եռակի ավելի շատ հավանականություն ունեն դառնալու ֆիզիկական կամ սեռական բռնության զոհ, քան հաշմանդամություն չունեցող կանայք:

ՆՊԱՏԱԿ 4. Երեխաների մահացության նվազեցում

■ Հաշմանդամություն ունեցող երեխաների մահացության ցուցանիշները որոշ երկրներում կարող են 80 տոկոսից բարձր լինել, նույնիսկ այն երկրներում, որտեղ հաշմանդամություն չունեցող երեխաների մահացության ցուցանիշները 20 տոկոսից ցածր են:

Նպատակ 5. Մայրական առողջության բարելավում

■ Տարեկան մոտավորապես 20 մլն կին հաշմանդամություն է ձեռք բերում հղիության ընթացքում կամ ծննդաբերության ժամանակ բարդությունների հետևանքով:

■ Նախածննդյան շրջանի զարգացման շեղումները աշխարհում երեխաների հաշմանդամության հիմնական պատճառներից են: Հաշմանդամության մեծ մասն է կանխվում հնարավոր է կանխել:

ՆՊԱՏԱԿ 6. Պայքար ՄԻԱՎ/ՁԻԱԳ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ

■ Հաշմանդամություն ունեցող անձինք հատկապես խոցելի են ՄԻԱՎ/ՁԻԱԳ-ի նկատմամբ, բայց նրանց բնորոշ է այդ հիվանդությունների կանխարգելման կամ բուժման անհրաժեշտ ծառայություններից և տեղեկատվությունից օգտվելու հնարավորության բացակայությունը:

■ Մալարիայի հետևանքով յուրաքանչյուր տասը երեխայից մեկն ունի նյարդաբանական խանգարումներ, ներառյալ ուսման հետ կապված բարդությունները, կողմնորոշման բացակայությունը և էպիլեպսիան:

ՆՊԱՏԱԿ 7. Շրջակա միջավայրի կայունության ապահովում

■ Անբարենպաստ շրջակա միջավայրը հաշմանդամության և առողջական խնդիրների առաջացման նշանակալի պատճառ է:

■ Տրախտման կանխվող կորուստի հիմնական պատճառն է և կարող է կանխվել անվտանգ խմելու ջուր օգտագործելով:

ՆՊԱՏԱԿ 8. Ջարգացման համար զլորբալ համագործակցության ստեղծում

■ Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձինք չեն կարողանում օգտվել նոր տեխնոլոգիաներից, հատկապես տեղեկատվական և հաղորդակցության: Կայքերի մեծ մասը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց, իսկ դրան նպաստող տեխնոլոգիաները շատ թանկ են:

Ես ինչո՞ւ պետք է հետաքրքրված լինեմ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով.

- Հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքները պետք է աջակցության արժանանան նույն պատճառներով, ինչ պատճառով աջակցության են արժանանում բոլոր մյուս մարդկանց իրավունքները:
- Բազմաթիվ երկրներում հաշմանդամություն ունեցող անձինք դժվարություններ են ունենում դպրոց հաճախելիս, աշխատանք գտնելիս, քվեարկելիս, առողջապահական ծառայություններից օգտվելիս:
- Միակ ճանապարհն ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամբողջությամբ օգտվեն իրենց մարդու իրավունքներից, այդ իրավունքներն ազգային օրենսդրությամբ երաշխավորելն է, բոլոր նախարարություններում այդ օրենսդրությանն աջակցելն է հետևողական, համակարգված և շարունակական գործողությունների միջոցով, ինչպես նաև այն, որ իրավական ինստիտուտներն ուժեղացնեն հարգանքը այդ իրավունքների նկատմամբ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց մարզինալացումը և նրանց կախյալ վիճակում պահելը թանկ են մտնում թե՛ նրանց ընտանիքների, թե՛ ընդհանրապես հասարակության վրա: Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և հասարակական կյանքին մասնակցելու հնարավորություն տալը սոցիալապես և տնտեսապես առավել ձեռնտու է:
- Յուրաքանչյուր ոք հնարավոր է հաշմանդամություն ձեռք բերի հիվանդությունների, դժբախտ պատահարների կամ ծերության պատճառով:
- Հաշմանդամություն ունեցող անձինք քվեարկողներ են, հարկատուներ և քաղաքացիներ, ինչպես յուրաքանչյուր մարդ: Նրանք սպասում են ձեր աջակցությանը և ունեն դրա լիարժեք իրավունքը:

Հաշմանդամություն ունեցող անձանց համաշխարհային զարգացման մեջ ներգրավելու կարիքը ակնհայտ է, հատկապես Հազարամյակի զարգացման նպատակների կապակցությամբ: Առանց նրանց մասնակցության անհնար կլինի 2015 թ. կիսով չափ կրճատել աղքատության և չքավորության մակարդակը, ինչը նախատեսված է Հազարամյակի զարգացման 1-ին նպատակով (տես 7-րդ էջի շրջանակը): Նմանապես, յուրաքանչյուր երեխայի համընդհանուր, տարրական անվճար կրթության իրավունքը (Հազարամյակի զարգացման նպատակ 2) չի կարող իրականացվել, քանի դեռ հաշմանդամություն ունեցող երեխաների 98 տոկոսը դպրոց չի հաճախում:

Կոնվենցիայի մանրամասները

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան հաշմանդամության հետ կապված հարցերը կարգավորող մարդու իրավունքների առաջին գործիքը չէ: Սակայն, ի տարբերություն իր նախորդների, այն հաշմանդամություն ունեցող անձանց առաջարկում է պաշտպանության աննախադեպ մակարդակ: Կոնվենցիան մանրամասնում է այն իրավունքները, որոնցից օգտվում են հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք, ինչպես նաև պետությունների և այլ մասնակիցների պարտավորությունը ապահովելու համար այդ իրավունքների հարգանքը:

Պատմական զարգացումները, որոնք բերեցին նոր կոնվենցիայի ընդունմանը

ՄԱԿ-ը նախքան այս կոնվենցիայի վերաբերյալ բանակցությունները և դրա ընդունումը մի քանի անգամ անդրադարձել է մարդու իրավունքների և հաշմանդամության խնդրին: 1982 թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց Հաշմանդամություն ունեցող անձանց մասին գործողությունների համաշխարհային ծրագիրը, որը բոլոր երկրներում, անկախ զարգացման մակարդակից, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսում էր ամբողջական մասնակցություն և հավասարություն սոցիալական կյանքում¹: 1983-1992 տասնամյակը Գլխավոր ասամբլեան հռչակեց «Հաշմանդամություն ունեցող անձանց ՄԱԿ-ի տասնամյակ» և կոչ արեց անդամ պետություններին այդ ժամանակահատվածում իրականացնել Հաշմանդամություն ունեցող անձանց մասին գործողությունների համաշխարհային ծրագիրը²:

1. Տե՛ս Գլխավոր ասամբլեայի 37/52 հանձնարարականով 1982 թ. դեկտեմբերի 3-ին ընդունված Գործողությունների համաշխարհային ծրագրում ամրագրված խնդիրները:

2. Գլխավոր ասամբլեայի 1982 թ. դեկտեմբերի 3-ի 37/52 հանձնարարական:

Հաշմանդամություն ունեցող անձանց մասին գործողությունների համաշխարհային ծրագրի իրականացման առաջին խոշոր վերանայման ընթացքում, որը տեղի ունեցավ Ստոկհոլմում 1987 թ., մասնակիցներն առաջարկեցին նախագծել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների մասին կոնվենցիա: Չնայած տարբեր նախաձեռնություններին, ներառյալ Իտալիայի և Շվեդիայի կառավարությունների և Սոցիալական զարգացման հանձնաժողովի հատուկ զեկուցողի՝ հաշմանդամության խնդրի մասին առաջարկները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ուժեղ աջակցությանը, առաջարկությունը չստացավ բավարար աջակցություն՝ սկսելու նոր կոնվենցիայի շուրջ բանակցությունները:

Կոնվենցիային նախորդող հիմնական փաստաթղթերը

Մարդու իրավունքների միջազգային բիլլ

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը

Հատկապես մարդու իրավունքներին և հաշմանդամությանն առնչվող ՄԱԿ-ի և ԱՅԿ այլ գործիքներ

- Ստավոր հետամնաց մարդկանց իրավունքների մասին հռչակագիր (1971)
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին հռչակագիր (1975)
- Հաշմանդամություն ունեցող անձանց մասին գործողությունների համաշխարհային ծրագիր (1982)
- Հաշմանդամության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման ուղղված գործողությունների մասին Տալլինի ուղեցուցիչներ (1990)
- Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին սկզբունքներ (1991)
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ (1993):

1991 թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց «Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին սկզբունքները», որոնք հայտնի են ՀՀ սկզբունքներ անվամբ: ՀՀ սկզբունքները սահմանում են չափանիշներ և ընթացակարգային երաշխիքներ և ապահովում են պաշտպանություն մարդու իրավունքների ամենալուրջ խախտումների դեմ, որոնք կարող են տեղ գտնել ինստիտուցիոնալ համակարգում, ինչպիսիք են ֆիզիկական սահմանափակումների չկիրառումը կամ անպատշաճ կիրառումը,

հարկադիր մեկուսացումը, հոգեբուժական վիրաբուժությունը և հոգեկան հիվանդությունների ցանկացած այլ անդամնալի բուժում: Ժամանակին նորարարություն հանդիսացող ՀՀ սկզբունքների նշանակությունն այժմ վիճահարույց է:

1993 թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոնները (Ստանդարտ կանոններ): Ստանդարտ կանոնները միտված էին ապահովելու, որ «հաշմանդամություն ունեցող աղջիկները, տղաները, տղամարդիկ և կանայք, որպես հասարակության անդամներ կարողանան իրականացնել նույն իրավունքները և պարտականությունները, ինչ մյուսները», և պահանջում էին պետություններից վերացնել հասարակական կյանքում հաշմանդամություն ունեցող անձանց հավասար մասնակցության խոչընդոտները: Ստանդարտ կանոնները դարձան ՄԱԿ-ի սկզբունքային գործիք, որը ղեկավարում էր մարդու իրավունքներին և հաշմանդամության խնդիրներին ուղղված պետությունների գործողությունները, և կարևոր ուղենիշ, որը բացահայտում էր մարդու իրավունքների առկա գործիքներից բխող պետության պարտավորությունները: Բազմաթիվ երկրներ բխեցրել են իրենց ազգային օրենսդրությունը Ստանդարտ կանոններից: Չնայած հատուկ զեկուցողը մշտադիտարկում է Ստանդարտ կանոնների իրականացումը ազգա-

Ճանապարհ դեպի նոր կոնվենցիան

2001-ի դեկտեմբեր - Մեքսիկայի կառավարության առաջարկը Գլխավոր ասամբլեայում ստեղծելու հատուկ կոմիտե, որը կքննարկի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը պաշտպանող և ապահովող ամբողջական և միասնական միջազգային կոնվենցիայի վերաբերյալ առաջարկները:

2002-ի օգոստոս - Հատուկ հանձնաժողովի առաջին նստաշրջանը, որտեղ քննարկվեց հնարավոր նոր կոնվենցիայի հիմնական պատճառները և քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացները:

2006-ի օգոստոսի 25 - Հատուկ հանձնաժողովի ութերորդ նստաշրջանը, որտեղ ամփոփվեցին կոնվենցիայի և առանձին կամընտիր արձանագրության նախագծի շուրջ բանակցությունները, և ընդունվեցին միջանկյալ տեքստերը, որոնք ենթակա էին տեխնիկական վերանայման:

2006-ի օգոստոսի 13 - ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան միաձայն ընդունեց Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և դրա կամընտիր արձանագրությունը:

2007-ի մարտի 30 - կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը բաց են ստորագրության համար ՄԱԿ-ի Նյու Յորքի գլխավոր նստավայրում:

յին մակարդակում, այնուամենայնիվ Ստանդարտ կանոնները իրավական առումով պարտադիր բնույթ չունեն և չեն պաշտպանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները այնքան ընդգրկուն կերպով, որքան նոր կոնվենցիան:

Մարդու իրավունքների միջազգային գործիքներն ապահովում և պաշտպանում են յուրաքանչյուրի իրավունքները, այդ թվում նաև՝ հաշմանդամություն ունեցող անձանց:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը հայտնի են որպես Մարդու իրավունքների միջազգային բիլլ: Այս երեք փաստաթղթերը միասին ճանաչում են քաղաքացիական, մշակութային և սոցիալական իրավունքները, որոնք անօտարելի են ցանկացած անձի համար, այսպիսով Մարդու իրավունքների միջազգային բիլլը ճանաչում և պաշտպանում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, նույնիսկ եթե այդ անձինք ուղղակիորեն նշված չեն:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան մարդու իրավունքների մասին առաջին համաձայնագիրն էր, որն անվերապահորեն արգելում է հաշմանդամության պատճառով երեխաների խտրականությունը: Այն նաև ճանաչում է հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքը ապրել լիարժեք կյանքով և այդ նպատակին հասնելու համար օգտվել հատուկ խնամքից և աջակցությունից:

Նախքան նոր կոնվենցիայի ընդունումը գոյություն ունեցող մարդու իրավունքների մասին համաձայնագրերը համընդգրկուն կերպով չէին պաշտպանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, և այդ համաձայնագրերով նախատեսված պաշտպանության տարբեր մեխանիզմներով այդ անձանց խնդիրները թերի էին կարգավորվում: Կոնվենցիայի ընդունումը և մարդու իրավունքների պաշտպանության և մշտադիտարկման նոր մեխանիզմների նախատեսումը պետք է նշանակալիորեն բարելավեին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը:

Կոնվենցիան առաջին հայացքից

Կոնվենցիայի նպատակը

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 1-ին հոդվածը ամրագրում է, որ կոնվենցիայի նպատակն է «հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց կողմից մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից ամբողջությամբ և հավասարապես օգտվելուն աջակցելը, դրանք պաշտպանելը և ապահովելը, ինչպես նաև նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքն ապահովելը»:

Կոնվենցիայի խնդիրները

Կոնվենցիան ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական և մշակութային կյանքում, ինչպես նաև պաշտպանում է դրանք: Այն կոչ է անում ոչ խտրական վերաբերմունքի և հավասարության արդարադատության մատչելիության, ինստիտուցիոնալացման, հասարակության մեջ անկախ ապրելու, վարչական գործառույթներ իրականացնելու, դատարանների և ոստիկանության հետ հարաբերություններում, կրթության բնագավառում, առողջապահության մեջ, աշխատավայրում, ընտանեկան կյանքում, մշակութային և սպորտային միջոցառումների ժամանակ և քաղաքական ու հասարակական կյանքին մասնակցելիս: Կոնվենցիան երաշխավորում է, որ հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք այդպիսին ճանաչվեն օրենքով: Այն նաև արգելում է խոշտանգումները, շահագործումը, բռնությունը և չարաշահումները և պաշտպանում է հաշմանդամություն ունեցող անձանց կյանքը, ազատությունը և անվտանգությունը, նրանց ազատ տեղաշարժվելու և արտահայտվելու իրավունքը, ինչպես նաև ապահովում է նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքը:

Հաշմանդամության բնորոշումը

Կոնվենցիան միանշանակորեն չի տալիս «հաշմանդամություն» բառի սահմանումը, իրականում կոնվենցիայի նախաբանը ցույց է տալիս, որ «հաշմանդամությունը» էվոլյուցիոն երևույթ է (ենթակետ ե). կոնվենցիան չի բնորոշում նաև «հաշմանդամություն ունեցող անձ» հասկացությունը: Այնուամենայնիվ, կոնվենցիան հաստատում է, որ այդ հասկացությունն ընդգրկում է այն մարդկանց, ովքեր երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ նյարդային հիվանդություններից, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության հետևանքով խոչընդոտում են հասարակական կյանքին այդ մարդկանց լիակատար մասնակցությունը (հոդված 1):

«Մենք այժմ կիրարկում ենք Հաշմանդամության ազգային ակտը, որն ընդգրկում օրենսդրություն է և պետք է ծառայի հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունը օրենսդրական հենքի վրա դնելուն: Մենք նաև իրականացնում ենք բազմաթիվ ծրագրեր և նախաձեռնություններ՝ բարելավելու համար հաշմանդամություն ունեցող անձանց կրթական ունակությունները, քանի որ մենք հավատում ենք, որ եթե հաշմանդամություն ունեցող անձանց կյանքը պետք է հիմնավորապես փոխվի, ապա դա պետք է արվի կրթության միջոցով: Ուստի մենք խորապես հպարտ ենք, որ հանդիսանում ենք կոնվենցիան վավերացրած առաջին երկիրը»:

Սենատոր Ֆլոյդ Էմերսոն Մորիս,
աշխատանքի և սոցիալական
ծառայությունների պետական նախարար
(Ճամայկա)

Խտրականության բացառում և հավասարություն

Անխտրականության սկզբունքը մարդու իրավունքների անկյունաքարն է, սա սկզբունք է, որը ներառված է նաև մարդու իրավունքների մյուս բոլոր համաձայնագրերում: «Հաշմանդամության պատճառով խտրականությունը» կոնվենցիայում բնորոշված է որպես «հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպատակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ ոլորտում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը, ներառյալ պատշաճ կացարան ունենալը մերժելը»:

Պետությունները պետք է վերջ տան խտրականությանը և՛ իրավունքում, ինչպիսին է, օրինակ՝ օրենսդրության մեջ առկա խտրականություն, և՛ գործնականում, օրինակ՝ երբ խտրականությունը տեղ է գտնում աշխատավայրում: Սակայն պետությունները կարող են դեռևս խտրականություն թույլ տալ՝ հոգուտ հաշմանդամություն ունեցող անձանց, եթե դա անհրաժեշտ է ապահովելու համար հաշմանդամություն ունեցող և չունեցող անձանց հավասար հնարավորությունները:

«Պատշաճ կացարան» նշանակում է անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխությունների կատարում և հարմարությունների ստեղծում, որոնք չեն առաջացնի անհամաչափ և անպատշաճ արգելքներ, այնպես, որ հաշմանդամություն ունեցող անձը կարողանա մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից (հոդված 2): Այս սկզբունքի հիման վրա պետությունը և պետության միջոցով այլ անձինք, ներառյալ մասնավոր հատվածը, պարտավոր են կոնկրետ անձի վիճակը բարելավելուն ուղղված քայլեր ձեռնարկել այնքան ժամանակ, մինչև այդ քայլերը չեն առաջացնում ծանր հետևանքներ:

Օրինակ՝ եթե աշխատողը դժբախտ պատահարի է ենթարկվում աշխատավայրում կամ աշխատանքից դուրս, որը բերում է ֆիզիկական հաշմանդամության, որի հետևանքով աշխատողը ստիպված է անվասայլակ օգտագործել, այդ պահից սկսած գործատուն պարտավոր է հարթակներ կառուցել, անվասայլակներին հարմարեցված զուգարաններ, առանց խոչընդոտների միջանցքներ ունենալ, ստեղծել այլ հարմարություններ և կատարել այլ փոփոխություններ այնպես, որ անձը կարողանա շարունակել իր աշխատանքը որպես ակտիվ աշխատող: Նման հարմարություններ չստեղծելը կարող է դրդել կոնկրետ աշխատողին խտրականության վերաբերյալ հայց ներկայացնել համապատասխան դատական կամ այլ ատյաններ:

Այնուամենայնիվ, գործատուի կողմից ստանձնելիք փոփոխությունները անսահմանափակ չեն, դրանք պետք է միայն լինեն «խելամիտ»: Այսինքն՝ աշխատավայրի անհամաձայնորեն թանկ վերափոխումները չեն կարող լինել պարտադիր, մասնավորապես երբ, օրինակ՝ կոնկրետ ձեռնարկությունը շատ փոքր է կամ ունի այնպիսի կառույցներ, որոնք հեշտությամբ չեն փոփոխվում:

Այն հանգամանքի ճանաչումը, որ «հաշմանդամությունը» զարգացող հասկացություն է, բացահայտվում է այն փաստով, որ հասարակությունը և հասարակության մեջ առկա կարծիքներն անփոփոխ չեն: Ուստի կոնվենցիան չի պարտադրում «հաշմանդամության» ոչ ճկուն հասկացություն, այլ կիրառում է դինամիկ մոտեցում, որը թույլ է տալիս վերափոխումներ կատարել ժամանակի ընթացքում և տարբեր սոցիալ-տնտեսական համակարգերում:

Կոնվենցիայի մոտեցումը հաշմանդամության հարցին նաև շեշտում է այն նշանակալի ազդեցությունը, որ հասարակության վերաբերմունքի և շրջապատի սահմանափակումները կարող են ունենալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման վրա: Այլ խոսքով՝ անվասայլակով մարդը կարող է դժվարություններ ունենալ հասարակական տրանսպորտից օգտվելիս կամ աշխատանք գտնելիս ոչ թե իր վիճակի, այլ այն պատճառով, որ կան շրջապատի հետ կապված արգելքներ, ինչպիսիք են անմատչելի ավտոբուսները կամ աշխատավայրի աստիճանները, որոնք խոչընդոտում են նրան:

Նմանապես, մտավոր հաշմանդամություն ունեցող երեխան դպրոցում կարող է դժվարություններ ունենալ իր նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքի, ոչ ճկուն դպրոցի խորհրդի, հնարավոր է նաև՝ տարբեր կրթական ունակություններ ունեցող աշակերտներին ընտելացնելու ունակություն չունեցող ծնողների պատճառով: Այդ իսկ պատճառով շատ կարևոր են փոխել այդ վերաբերմունքը և շրջապատը, որոնք դժվարացնում են հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին:

Կոնվենցիան ցույց է տալիս, այլ ոչ թե բնորոշում է, թե ովքեր են հաշմանդամություն ունեցող անձինք: Հաշմանդամություն ունեցող անձանց մեջ «ներառվում» են երկար ժամանակ ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական խանգարումներ ունեցող անձինք, այլ խոսքով՝ կոնվենցիան գոնե այդ անձանց պաշտպանում է: Այս բնորոշումը ենթադրում է, որ պետությունները կարող են ընդլայնել պաշտպանության ենթակա անձանց շրջանակը՝ ներառելով՝ օրինակ, կարճատև հաշմանդամություն ունեցող անձանց:

Կոնվենցիայում ամրագրված իրավունքները և սկզբունքները

Ընդհանուր սկզբունքները

Ընդհանուր սկզբունքներն ուղեցույց են պետությունների կամ այլ գործող անձանց համար, ովքեր մեկնաբանում կամ կիրառում են կոնվենցիան: Ութ ընդհանուր սկզբունքներն են.

- հարգանք արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ներառյալ սեփական որոշումներ կայացնելու ազատությունը և անձի անկախության իրավունքի նկատմամբ,
- խտրականության բացառում,
- հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածություն,
- հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը,
- հնարավորությունների հավասարություն,
- մատչելիություն,
- հավասարություն տղամարդկանց և կանանց միջև, և
- հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների և իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ:

Իրավունքները

Քանի որ քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքները, որոնք նշված են կոնվենցիայում, կիրառելի են բոլոր մարդկանց համար, կոնվենցիան կենտրոնանում է այն գործողությունների վրա, որոնք ձեռնարկում են պետությունները, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց համար այս իրավունքներից օգտվելը մյուսների հետ հավասար հիմունքներով: Կոնվենցիան նաև նշում է կանանց և երեխաների առանձնահատուկ իրավունքներ, որոնց իրականացման համար անհրաժեշտ են պետությունների կողմից որոշակի գործողություններ, ինչպիսիք են՝ տվյալների հավաքումը, իրազեկվածության բարձրացումը և միջազգային համագործակցությունը:

Կոնվենցիայով հստակ սահմանված իրավունքներն են.

- առանց խտրականության օրենքի առջև հավասարությունը,
- անձի կյանքի, ազատության և անվտանգության իրավունքը,
- օրենքով հավասարապես ճանաչումը և իրավունակությունը,
- խոշտանգումների չենթարկվելը,
- շահագործման, բռնությունների և չարաշահումների չենթարկվելը,
- ֆիզիկական և մտավոր ամբողջականությունը հարգելու իրավունքը,
- ազատ տեղաշարժվելը և քաղաքացիություն ընտրելը,
- հասարակական կյանքով ապրելու իրավունքը,

- արտահայտվելու և սեփական կարծիք ունենալու իրավունքը,
- անձնական կյանքի գաղտնիությունը հարգելը,
- տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը,
- կրթության իրավունքը,
- առողջության իրավունքը,
- աշխատանքի իրավունքը,
- կյանքի բավարար պայմաններ ունենալու իրավունքը,
- քաղաքական և հասարակական կյանքին մասնակցելու իրավունքը,
- մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Կոնվենցիան ընդունում է, որ որոշ մարդիկ ենթակա են խտրականության ոչ միայն հաշմանդամության պատճառով, այլ նաև սեռի, տարիքի, էթնիկական ծագման և/կամ այլ հիմքերով: Այդ իսկ պատճառով կոնվենցիան երկու հոդված է նվիրել հատուկ խմբերի՝ հաշմանդամություն ունեցող կանանց և երեխաներին:

Կոնվենցիան պետությունների գործողությունների համար որոշակի ոլորտներ է մատնանշում: Իրավունքն ամրագրելը և իրավունքի իրականացումն ապահովելը նույն բանը չեն: Այս պատճառով կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ապահովել համապատասխան միջավայր, որը հնարավորություն կտա, որ հաշմանդամություն ունեցող անձինք լիարժեքորեն օգտվեն իրենց իրավունքներից՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այս դրույթներն են՝

- իրազեկվածության բարձրացում: Այնպես, որ հաշմանդամություն ունեցող և չունեցող անձինք հասկանան իրենց իրավունքները և պարտականությունները,
- մատչելիություն - հիմնավորապես օգտվել բոլոր իրավունքներից և հասարակության մեջ անկախ ապրել,
- վտանգավոր իրավիճակներ և հումանիտար աղետներ - հաշմանդամությունը ծնող պատճառներ, որոնք պահանջում են պետության կողմից կոնկրետ գործողություններ՝ պաշտպանություն ապահովելու նպատակով,
- արդարադատության մատչելիություն - հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց իրավունքները էականորեն պաշտպանելու հնարավորությունը,
- անհատական շարժունակություն - ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց անկախությունը,
- բուժում և վերականգնում - բնածին և ձեռքբերովի հաշմանդամություն

ունեցող անձանց համար առավելագույն անկախություն և կարողություններ ձեռք բերելու հնարավորություն ընձեռելը,

- վիճակագրություն և տվյալների հավաքում - որպես քաղաքականությունների ձևակերպման և կիրառման հիմք աջակցելու և պաշտպանելու համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

Մասնակցություն. սկզբունք և իրավունք

Մասնակցության և ներառման սկզբունքը նպատակ ունի ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց լայն հասարակության կյանքի մեջ, նաև ներգրավել նրանց իրենց վրա ազդեցություն ունեցող որոշումների ընդունման գործընթացում՝ քաջալերելով նրանց լինել ակտիվ իրենց անձնական կյանքում և հասարակության մեջ: Ներառումը երկկողմանի գործընթաց է. հաշմանդամություն չունեցող անձինք պետք է բաց լինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց մասնակցության հանդեպ:

Կոնվենցիան հատկապես ճանաչում է քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքը, օրինակ՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցելը, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, օրինակ՝ մշակութային, մարզական և վերականգնողական միջոցառումներին մասնակցելը: Այսպիսով, մասնակցելու իրավունքի իրականացումը երբեմն պահանջում է պետության որոշակի գործողություններ: Օրինակ՝ կույր մարդը կարող է ցանկանալ Բրայլի համակարգով քվեարկության պարագաներ, ինչպես նաև կարող է ցանկանալ անձնական օգնություն քվեախցում, որպեսզի իր ընտրությունը հստակ լինի: Եթե ընտրատեղամասը թեքահարթակ չունի կամ շատ հեռու է տնից, անվասայլակով մարդը կարող է մեկուսացվել քվեարկությունից, ինչով խոչընդոտվում է նրա՝ քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքը:

Տղամարդկանց և կանանց հավասարությունը

Հաշմանդամություն ունեցող կանայք կարող են խտրականության ենթարկվել առնվազն երկու՝ սեռի հիմքով և հաշմանդամության հիմքով: Տղամարդկանց և կանանց հավասարության սկզբունքը պահանջում է պետություններից ապահովել հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև՝ վերացնելու անհավասարությունը կոնվենցիայի դրույթները կիրառելիս: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը առանձնահատուկ կերպով նշում է, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթակա են խտրականության բազմաթիվ ձևերի՝ սեռի հիմքով և երբեմն նաև այլ հիմքերով նույնպես: Հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև ոչ միայն գերակա սկզբունք է մարդու իրավունքների բնագավառում ՄԱԿ-ի աշխատանքների համար, այլ նաև ինքնին իրավունք է:

Մատչելիություն

Մատչելիության սկզբունքը նպատակ ունի վերացնելու այն արգելքները, որոնք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձանց իրականացնել իրենց իրավունքները: Խնդիրը վերաբերում է ոչ միայն ֆիզիկական միջավայրի մատչելիությանը, այլ նաև տեղեկատվության, տեխնոլոգիաների մատչելիությանը, ինչպիսին է ինտերնետը, հեռահաղորդակցությունը, տնտեսական և սոցիալական կյանքը: Թեքահարթակների կառուցումը, բավարար լայն և առանց խոչընդոտների միջանցքները և դռները, դռներին բռնակների տեղադրումը, Բրայլի համակարգով և դյուրընթեռնելի ձևաչափով տեղեկատվության մատչելիությունը, սուրդոթարգմանիչների և սուրդոթարգմանության կիրառումը, ինչպես նաև աջակցության և օգնության առկայությունը կարող են ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձի համար մատչելի լինի իր աշխատատեղը, ժամանցի վայրը, քվեախցիկը, փոխադրամիջոցը, դատարանը և այլն: Առանց տեղեկատվության մատչելիության և ազատ տեղաշարժվելու հնարավորության հաշմանդամություն ունեցող անձանց այլ իրավունքները նույնպես սահմանափակվում են:

Միջազգային համագործակցություն

Միջազգային համագործակցությունը լայնորեն ճանաչվում է որպես կենսական նշանակություն ունեցող, հաշմանդամություն ունեցող անձանց կողմից մարդու իրավունքներից լիարժեքորեն օգտվելու հարցում: Կոնվենցիան հստակորեն ընդունում է այս կապը և պարտավորեցնում է մասնակից պետություններին համագործակցել այլ պետությունների և/կամ համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ հետևյալ հարցերում.

- կարողությունների զարգացում, մասնավորապես տեղեկատվության, փորձի, ուսուցման ծրագրերի և լավագույն գործելակերպի փոխանակում և տրամադրում,
- հետազոտությունների և գիտատեխնիկական գիտելիքների մատչելիության ապահովում,
- տեխնիկական և տնտեսական աջակցություն՝ մասնավորապես նպաստելով մատչելիությանը և օժանդակող տեխնոլոգիաների կիրառում:

Միջազգային համագործակցության վերաբերյալ առանձին հոդված սահմանելով՝ կոնվենցիան ընդգծում է նման ջանքերի անհրաժեշտությունը, ներառյալ միջազգային զարգացման ծրագրերը, այն առումով, որ դրանք լինեն մատչելի և ներառական հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Նկատի ունենալով, որ բազմաթիվ երկրներում աղքատության մեջ ապրող անձանց շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց տոկոսն ավելի բարձր է, քան հասարակության այլ խմբերում, զարգացման ծրագրերի ծրագրման և կիրարկման մեջ հաշմանդամություն ունեցող անձանց չներգրավելը միայն էլ ավելի կխորացնի հասարակության մեջ առկա անհավասար և խտրական վիճակը:

Կոնվենցիան հաստատում է, որ ոչ միայն մասնակից պետությունները դերակատարություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ապահովելու հարցում միջազգային համագործակցությունը խթանելու մեջ, այլ նաև քաղաքացիական հասարակությունը, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունները, Համաշխարհային բանկը և զարգացման այլ բանկերը և տարածաշրջանային կազմակերպությունները, ինչպիսիք են Եվրոպական հանձնաժողովը, Աֆրիկյան միությունը և այլն:

Մասնակից պետությունների՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները

Ինչպես նշվում է կոնվենցիայի 4-րդ հոդվածում, կոնվենցիան վավերացրած պետությունը պարտավորվում է ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացումը առանց որևէ խտրականության: Ստորև ներկայացված աղյուսակը մանրամասնում է այն կոնկրետ գործողությունները, որոնք ձեռնարկում են պետություններն այդ պարտավորությունը կատարելու համար:

Յուրաքանչյուր պետություն քայլեր է ձեռնարկում աստիճանաբար իրականացնելու համար տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները՝ օգտագործելով առկա բոլոր ռեսուրսները: Այս պարտավորությունը, որն ընդհանրական ձևով կոչվում է աստիճանական իրականացում, ցույց է տալիս, որ հաճախ այս իրավունքների լրիվ իրականացումն ապահովելը որոշակի ժամանակ է պահանջում, օրինակ՝ երբ կարիք կա ստեղծել կամ կատարելագործել սոցիալական ապահովության կամ առողջապահության հա-

«Որպես հաշմանդամություն ունեցող կին, ինչպես զարգացող երկրներում ապրող այլ հաշմանդամ կանայք, մենք ենթարկվում ենք եռակի խտրականության մեր հաշմանդամության, սեռի և աղքատության պատճառով, ուստի այս կոնվենցիան պետք է շատ օգտակար լինի, որ մենք համոզվենք, որ օգտվում ենք մեր իրավունքներից այնպես, ինչպես մյուս անձինք»:

Վենուս Իլագան, հաշմանդամություն ունեցող կանանց միջազգային կազմակերպություն (Ֆիլիպիններ)

Մասնակից պետությունների ձեռնարկելիք միջոցառումները

- Ձեռնարկել օրենսդրական և վարչական միջոցներ աջակցելու համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացմանը:
- Ընդունել օրենսդրություն կամ ձեռնարկել այլ քայլեր խտրականությունը վերացնելու ուղղությամբ:
- Պաշտպանել և աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացմանը ռազմավարություններում և ծրագրերում:
- Ձեռնպահ մնալ ցանկացած գործողության մասնակցելուց, որը խախտում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:
- Ապահովել պետական հատվածի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարգումը:
- Ապահովել մասնավոր հատվածի և անհատների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարգումը:
- Ջրագացնել և կիրառել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի առարկաները, ծառայությունները և տեխնոլոգիաները, և քաջալերել մյուսներին դրանց կիրառման ուղղությամբ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել մատչելի տեղեկատվություն օժանդակող տեխնոլոգիաների մասին:
- Ապահովել համապատասխան ուսուցում հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին:
- Ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց և խորհրդակցել նրանց հետ նրանց վերաբերող օրենսդրության և քաղաքականության մշակման և կիրառման ուղղությամբ, մասնակից դարձնել նրանց որոշումների ընդունմանը:

մակարդեր: Թեև աստիճանական իրականացումը մասնակից պետություններին, հատկապես զարգացող երկրներին, տալիս է որոշակի ճկունություն կոնվենցիայով սահմանված նպատակներին հասնելու համար, այնուամենայնիվ, այն չի ազատում պետություններին այդ իրավունքները պաշտպանելու պարտավորությունից: Օրինակ՝ պետությունը չպետք է հարկադրաբար վտարի հաշմանդամություն ունեցող անձին, կամայականորեն հրաժարվի սոցիալական ապահովությունից կամ հրաժարվի պահպանել նվազագույն աշխատավարձը:

Ի տարբերություն տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքները ենթակա չեն աստիճանական զարգացման: Այլ կերպ՝ պետությունները պաշտպանում են այդ իրավունքները և աջակցում դրանց անմիջապես:

**Պաշտպանության, հարգանքի և
իրականացման ենթակա պարտավորությունները**

Կոնվենցիայում անուղղակի ձևով կան երեք առանձին պարտավորություններ բոլոր մասնակից պետությունների համար՝

Չարգելու պարտավորություն - մասնակից պետությունները ձեռնպահ են մնում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացմանը խոչընդոտելուց: Օրինակ՝ պետությունները չպետք է իրականացնեն բժշկական փորձեր հաշմանդամություն ունեցող անձանց վրա առանց նրանց համաձայնության կամ անձին դպրոցից հեռացնեն հաշմանդամության պատճառով:

Պաշտպանելու պարտավորություն - մասնակից պետությունները կանխում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումները երրորդ անձանց կողմից: Օրինակ՝ պետությունները պահանջում են մասնավոր գործատուներից ապահովել արդարացի և բարենպաստ աշխատանքային պայմաններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ներառյալ ընդունելի պայմաններով աշխատավայրի ապահովումը: Պետությունները ջանքեր են գործադրում պաշտպանելու համար հաշմանդամություն ունեցող անձանց վատ վերաբերմունքից կամ չարաշահումներից:

Իրականացման հետ կապված պարտավորություններ - մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան օրենսդրական, դատական կամ այլ միջոցներ այս իրավունքների ամբողջական իրականացման ուղղությամբ (տե՛ս նախորդ էջի աղյուսակը): Օրինակ, թե ինչպես են այս պարտավորություններն իրականացվում գործնականում, ներկայացված է հաջորդ էջի աղյուսակում:

**Կոնվենցիայի համեմատությունը մարդու իրավունքների
այլ համաձայնագրերի հետ**

Կոնվենցիան լրացնում է մարդու իրավունքների մյուս միջազգային համաձայնագրերը: Այն չի ամրագրում հաշմանդամության ունեցող անձանց որևէ նոր մարդու իրավունք, այն ավելի շատ հստակեցնում է պետությունների պարտավորությունները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հավասար իրականացումը հարգելու և ապահովելու ուղղությամբ: Մարդու իրավունքների մասին միջազգային գործիքները, որոնք ընդունվել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրից և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրից հետո, հստակեցնում են այն քայլերը, որոնք պետությունները ձեռնարկում են ապահովելու համար այդ իրավունքների հարգումը առանձնահատուկ իրավիճակներում: Օրինակ՝ կան համաձայնագրեր, որ հատուկ պաշտպանում են երեխաներին կամ ներգաղթյալ աշխատողներին և նրանց ընտանիքներին, կամ արգելում են խոշտանգումները, կամ

պաշտպանում են սեռական կամ ռասայական խտրականությունից: Նոր կոնվենցիան կենտրոնանում է այն քայլերի վրա, որոնք ձեռնարկում են պետությունները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նկատմամբ հարգանքը:

Օրենքի առջև հավասարություն. սկզբունքի մշակում

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (հոդված 16):

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասությունների ճանաչման իրավունք:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (հոդված 12)

1. Մասնակից պետություններն վերահաստատում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամենուրեք ունեն իրավահավասար պաշտպանության իրավունք:
2. Մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն իրավունակություն կյանքի բոլոր ոլորտներում:
3. Մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնեն այն աջակցությունը, որը կարող է պահանջվել րանց իրավունակությունը կիրառելիս:
4. Մասնակից պետություններն ապահովում են, որ իրավունակության կիրառմանն առնչվող միջոցներով սահմանվեն համապատասխան և արդյունավետ երաշխիքներ՝ կանխելու համար չարաշահումները՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն: Նման երաշխիքներն ապահովում են, որ իրավունակության կիրառմանն ուղղված միջոցներով հարգվեն անձի իրավունքները, կամքն ու նախասիրությունները, զերծ լինեն շահերի բախումից և չափից մեծ ազդեցությունից, համահունչ լինեն անհատի անձնական հանգամանքներին և մշակվեն դրանց համապատասխան, կիրառվեն հնարավորինս կարճ ժամկետներում և ենթարկվեն կանոնավոր վերահսկողության իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատական մարմնի կողմից: Այդ երաշխիքները պետք է համահունչ լինեն այն ազդեցությանը, որ նման միջոցները գործում են անձի իրավունքների և շահերի վրա:
5. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ, որպեսզի ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքը իրենց սեփականությունը տնօրինելու կամ ժառանգելու, սեփական ֆինանսական գործարքները վերահսկելու և բանկային վարկերից, հիփոթեքից և ֆինանսական վարկավորման այլ միջոցներից օգտվելու համար, ինչպես նաև երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք կամայականորեն չեն զրկվի իրենց սեփականությունից:

Չարգելու, պաշտպանելու և իրականացնելու պարտավորություններ. ինչպե՞ս կարող են դրանք վերափոխվել գործողությունների

Խոշտանգումների անթույլատրելիություն

Չարգել. պետությունը չպետք է հաշմանդամություն ունեցող անձին ենթարկի խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի իր ենթակայության տակ գտնվող բանտերում:

Պաշտպանել. պետությունն ապահովում է, որ մասնավորի կողմից կառավարվող բանտերում կամ հոգեբուժական հաստատություններում չկիրառվի խոշտանգում կամ նման այլ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

Իրականացնել. պետությունը բանտերի և առողջապահության ոլորտի աշխատողներին ապահովում է պատշաճ ուսուցմամբ և տեղեկատվությամբ, որպեսզի հարգվեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

Առողջության իրավունք

Չարգել. իշխանությունները չպետք է բժշկական փորձերի ենթարկեն հաշմանդամություն ունեցող անձին առանց նրա ազատ և տեղեկացված համաձայնության:

Պաշտպանել. պետությունն ապահովում է, որ մասնավոր առողջապահական հաստատությունները որևէ անձի հաշմանդամության պատճառով խտրականություն չենթարկեն կամ առողջապահական ծառայություններ տրամադրելուց չհրաժարվեն:

Իրականացնել. պետությունը բարձրացնում է առողջապահության հասանելիությունը, որակը և մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Արտահայտվելու իրավունք

Չարգել. պետությունը չպետք է հրաժարվի տեղեկատվություն տրամադրել հաշմանդամություն ունեցող անձին կամ խոչընդոտել նրան իր կարծիքն ազատորեն արտահայտելու հարցում:

Պաշտպանել. պետությունը չպետք է թույլ տա մասնավոր կազմակերպություններին խոչընդոտներ ստեղծել հաշմանդամություն ունեցող անձի կողմից իր կարծիքն ազատորեն արտահայտելու համար:

Իրականացնել. պետությունը հեշտացնում է շարժունների լեզվի, պարզ լեզվի և Բրայլի համակարգի կիրառումը և պաշտոնական հարաբերություններում ստեղծում խոշոր տառատեսակով և այլընտրանքային հաղորդակցության միջոցներ:

Կրթության իրավունք

Չարգել. դպրոցների տնօրինությունը չպետք է հեռացնի հաշմանդամություն ունեցող անձին հաշմանդամության պատճառով:

Պաշտպանել. պետությունն ապահովում է, որ մասնավոր դպրոցներն իրենց ուսումնական ծրագրերն իրականացնելիս խտրականության չենթարկեն հաշմանդամություն ունեցող անձանց:

Իրականացնել. պետությունն ապահովում է, որ անվճար միջնակարգ կրթությունն աստիճանաբար հասանելի լինի բոլորի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Աշխատանքի իրավունք

Չարգել. պետությունը հարգում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ արհմիություններ հիմնելու իրավունքը:

Պաշտպանել. պետությունն ապահովում է մասնավոր հատվածի կողմից հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքի իրավունքը հարգելը:

Իրականացնել. պետությունն առկա միջոցներով հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում է մասնագիտական ուսուցում:

խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող եմ բարձրացնել կոնվենցիայի սկզբունքների վերաբերյալ իրազեկվածությունը.

- Բարձրացրո՛ւ կոնվենցիայի խնդիրը խորհրդարանում:
- Վերանայի՛ր օրենքների նախագծերը կոնվենցիայի հետ համապատասխանությունը գնահատելու համար:
- Կապեր պահպանի՛ր քաղաքացիական հասարակության խմբերի, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանող և իրավապաշտպան կազմակերպությունների հետ:
- Քննարկի՛ր կոնվենցիան տեղական ընտրազանգվածի հետ հանդիպումների և այցելությունների ընթացքում, ինչպես նաև տեղական դպրոցներում, կուսակցական ժողովներում և այլն:
- Անդրադարձի՛ր կոնվենցիային հանրային հավաքների ժամանակ, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը (դեկտեմբերի 3-ին):
- Կոնվենցիան քննարկելու նպատակով հանդիպումներ կազմակերպիր խորհրդարանականների հետ:
- Կազմակերպիր հեռուստատեսային և ռադիոասուլիսներ կոնվենցիայի վերաբերյալ:
- Կոնվենցիայի վերաբերյալ հոդվածներ գրիր թերթերում, ամսագրերում, հանդեսներում և այլ մամուլում:
- Պահանջի՛ր, որ կոնվենցիան թարգմանվի ազգային լեզուներով և լայնորեն տարածվի:
- Պահանջի՛ր, որ կոնվենցիան հասանելի լինի մատչելի ձևաչափերով:
- Ապահովի՛ր, որ խորհրդարանը հավատարիմ մնա կոնվենցիային հաշմանդամություն ունեցող իր անդամների և աշխատակազմի հարցում:
- Պաշտպանի՛ր մարդու իրավունքների և հաշմանդամության հարցերով կոմիտեի ստեղծումը, որը կարող է դերակատարություն ունենալ կոնվենցիայի մշտադիտարկման հարցում, և ապահովի՛ր, որ մյուս խորհրդարանական հանձնաժողովները հաշվի առնեն հաշմանդամությանն առնչվող խնդիրները:
- Ապահովի՛ր, որ խորհրդարանի յուրաքանչյուր անդամ ունենա կոնվենցիայի և կամընտիր արձանագրության օրինակ:
- Աջակցի՛ր կոնվենցիային և կամընտիր արձանագրությանը քո քաղաքական աշխատանքում, հատկապես քո ընտրատարածքում:
- Անցկացրո՛ւ խորհրդարանական լսումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ:

Վերը բերված աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպես նոր կոնվենցիան վերցրեց մի իրավունք, որն ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, այն է՝ հավասար իրավունակության իրավունքը և ընդլայնեց ու մշակեց այն՝ շեշտը դնելով հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց վրա: Հավասար իրավունակության իրավունքը հիմնարար իրավունք է ոչ միայն ինքնին որպես իրավունք, այլ նաև որպես նախապայման այլ իրավունքների լիարժեք իրականացման համար, քանի որ միայն իրավունակության միջոցով կարող են դատարանում պաշտպանվել իրավունքները (դատական պաշտպանության միջոց), անձը կարող է պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել (աշխատանքի իրավունք, մյուսների հետ հավասար), գնել և վաճառել գույք (անձնական կամ կոլեկտիվ սեփականության իրավունք), ամուսնանալ (ամուսնության և ընտանիք կազմելու իրավունք):

Հաշմանդամություն ունեցող անձինք շատ հաճախ մերժվում են հավասար իրավունակության հարցում սոսկ այն պատճառով, որ հաշմանդամություն ունեն: Հաշմանդամություն ունեցող որոշ անձանց ծնունդը չի գրանցվում, հաշմանդամություն ունեցող որոշ անձանց իրավունակությունն էլ ամբողջությամբ և առանց դրա անհրաժեշտության փոխանցվում է խնամակալներին, որոնք չարաշահում են իրենց իրավունքները: Այս իրավիճակը շտկելու համար կոնվենցիան հստակորեն նկարագրում է իրավունքի բովանդակությունը և այն քայլերը, որ պետությունները պետք է ձեռնարկեն, որպեսզի այդ իրավունքը չոտնահարվի:

Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության մշտադիտարկումը

Իրավական առումով պարտադիր բնույթ ունեցող մարդու իրավունքների բոլոր միջազգային համաձայնագրերն ունեն մշտադիտարկման բաղադրիչ, և այս կոնվենցիան բացառություն չէ: Ինչպես մարդու իրավունքների այլ միջազգային համաձայնագրերում առկա մշտադիտարկման մեխանիզմները, կոնվենցիայում ուրվագծված ընթացակարգն աջակցում է կառուցողական երկխոսությանը պետությունների հետ, ապահովելու համար կոնվենցիայի դրույթների արդյունավետ կիրառումը: Մշտադիտարկումը ենթադրում է նաև անհատների իրավունքը բողոքելու և իրավական պաշտպանություն գտնելու: Մշտադիտարկման մեխանիզմները խթանում են հաշվետվողականությունը և դրա արդյունքում զարգացնում են կողմերի ունակությունները իրենց առաքելությունը և պարտականությունները կատարելու համար:

Մշտադիտարկման մեխանիզմը կոնվենցիայում

Կոնվենցիան մշտադիտարկում է ապահովում թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում:

Ազգային մակարդակում մասնակից պետությունները կառավարությունում նշանակում են մեկ կամ ավելի պատասխանատու անձանց՝ ղեկավարելու կոնվենցիայի կիրարկման հետ կապված խնդիրները: Մասնակից պետությունները նաև քայլեր են ձեռնարկում կառավարությունում համակարգող մարմնի ստեղծման կամ կազմավորման ուղղությամբ, որը կնպաստի կոնվենցիայի կիրարկմանը: Նմանապես մասնակից պետությունները պահպանում, հզորացնում կամ հիմնում են մի անկախ ինստիտուտ, ինչպիսին է մարդու իրավունքների ազգային ինստիտուտը՝ կոնվենցիայի կիրարկմանն աջակցելու, պաշտպանելու և մշտադիտարկելու համար (ազգային

մշտադիտարկման վերաբերյալ ավելի շատ տեղեկատվություն զետեղված է 7-րդ գլխում):

Միջազգային մակարդակում կոնվենցիան մշտադիտարկումն ապահովվում է անկախ փորձագետների կոմիտե ստեղծելու միջոցով, որը կոչվում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերի կոմիտե: Կոմիտեն քննարկում է մասնակից պետությունների կողմից պարբերաբար ներկայացվող զեկույցները: Այս զեկույցների հիման վրա կոմիտեն աշխատում է մասնակից պետությունների հետ և կատարում է ամփոփիչ դիտարկումներ և առաջարկություններ այդ մասնակից պետություններին:

Եթե կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը պետությունը վավերացրել է առանձին, ապա այն հնարավորություն է տալիս կոմիտեին իրականացնել մշտադիտարկման երկու լրացուցիչ եղանակներ՝ անհատական հաղորդումների ընթացակարգ, որի միջոցով կոմիտեն ստանում է հաղորդումներ (զանգատներ) անհատներից, որոնց կարծիքով՝ պետությունը խախտել է կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքները, և հետաքննության ընթացակարգ, որի միջոցով կոմիտեն հետաքննում է կոնվենցիայի աղաղակող և պարբերական ոտնահարումները և տվյալ մասնակից պետության համաձայնությամբ իրականացնում է տարածքային առաքելություններ՝ հետաքննությունն առավել խորությամբ անցկացնելու համար:

Կոնվենցիան նաև նախատեսում է մասնակից պետությունների համաժողով, որը քննարկում է կոնվենցիայի կիրարկման վիճակը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե

Կոնվենցիան թույլատրում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի ստեղծումը կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո: Կոմիտեն քննարկում է պետությունների կողմից ներկայացված պարբերական զեկույցները, քննում անհատական հաղորդումները, վարում հետաքննությունները և ձևակերպում ընդհանուր դիտարկումներ և առաջարկություններ:

Կոմիտեն սկզբում կազմված կլինի 12 անկախ փորձագետներից, իսկ երբ 60 երկիր վավերացնի կոնվենցիան, այդ թիվն աճում է մինչև 18: Մասնակից պետությունների համաժողովն ընտրում է կոմիտեի անդամներին: Կոմիտեի անդամներն ընտրվում են՝ հիմք ընդունելով նրանց պատրաստակամությունը և փորձառությունը մարդու իրավունքների և հաշմանդամության ոլորտում, նաև հաշվի առնելով աշխարհագրական հավասարաչափ բաշխումը, քաղաքակրթության տարբեր ձևերի և հիմնական իրավական համակարգերի ներկայացվածությունը, զենդեբային հավասարակշռությունը և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը կոմիտեի կազմում:

Պետությունները խորհրդակցում են հաշմանդամություն ունեցող անձանց հետ և ներգրավում նրանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններին կոմիտեում նշանակելու համար ներկայացուցիչներ ընտրելիս:

Պարբերական հաշվետվողականություն

Կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից պետություն կոմիտեին ներկայացնում է նախնական համապարփակ զեկույց կոնվենցիայի կիրարկման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերալ: Յուրաքանչյուր պետություն ներկայացնում է իր նախնական զեկույցը իր համար կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Նախնական զեկույցը՝

- կոնվենցիայի կիրարկման համար սահմանում է սահմանադրական, իրավական և վարչական շրջանակներ,
- բացատրում է կոնվենցիայի յուրաքանչյուր դրույթը կյանքի կոչելու համար ընդունված քաղաքականությունն ու ծրագրերը,
- վեր հանում ցանկացած առաջընթաց հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման հարցում, որը եղել է կոնվենցիայի վավերացման և կիրարկման արդյունք:

Յուրաքանչյուր պետություն ներկայացնում է հերթական զեկույցներ նվազագույնը չորս տարին մեկ անգամ, կամ երբ կոմիտեն պահանջում է այդպիսի զեկույց: Հերթական զեկույցները՝

- պատասխանում են կոմիտեի կողմից իր նախկին զեկույցների եզրափակիչ դիտարկումներում նշված մտահոգություններին կամ այլ հարցերի,
- հաշվետու ժամանակահատվածում մատնացույց են անում այն առաջընթացը, որն առկա է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման հարցում և
- հաշվետու ժամանակահատվածի համար մատնանշում են այն խոչընդոտները, որոնց հանդիպում են կառավարությունները և այլ մասնակիցները կոնվենցիայի կիրարկման ընթացքում:

Կոմիտեն զեկույցների բովանդակության վերաբերյալ կազմում է ուղեցույցներ: Առաջին զեկույցը լինում է համապարփակ, այլ կերպ ասած՝ այն ընդգրկում է կոնվենցիայի բոլոր դրույթների կիրառումը: Հետագա զեկույցներում կարիք չի լինի կրկնել նախկինում ներկայացված տեղեկատվությունը: Մասնակից պետությունները պատրաստում են իրենց զեկույցները բաց և թափանցիկ ձևով և

խորհրդակցում հաշմանդամություն ունեցող անձանց հետ և ներգրավում նրանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններին:

Պարբերական զեկույցների պատրաստումը՝

- խթանում է պետություններին ձեռնարկել մարդու իրավունքներին և հաշմանդամությանը վերաբերող ազգային օրենսդրության, քաղաքականության և ծրագրերի համապարփակ վերանայում,
- ապահովում է, որ յուրաքանչյուր պետություն պարբերաբար մշտադիտարկի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման վիճակը,
- խթանում է կառավարություններին ստեղծել առաջնահերթություններ և ցուցանիշներ, որոնց միջոցով նրանք կարող են գնահատել կատարումը,
- ապահովում է կառավարություններին այնպիսի չափանիշներով, որոնց միջոցով կարող են համեմատվել հերթական զեկույցները,
- ապահովում է հանրային քննարկումների և կառավարության գործողությունների ստուգման հնարավորություն և
- ցույց է տալիս կիրառման ժամանակ եղած դժվարությունները, որոնք այլ պարագաներում կարող էին աննկատ մնալ:

Պարբերական հաշվետվողականության նպատակը

Պարբերական հաշվետվողականությունը մի եղանակ է, որով պետություններին աջակցություն է ցույց տրվում կոնվենցիայով նախատեսված իրենց պարտավորությունները կատարելու հարցում, այն նաև միջոց է, որը հնարավորություն է տալիս կառավարությանը, մարդու իրավունքների ազգային կառույցներին և քաղաքացիական հասարակությանը գնահատել երկրում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները հարգելու մակարդակը: Կոմիտեին ներկայացված պարբերական զեկույցը՝

- ապահովում է գործիք, որի օգնությամբ կառավարությունները, մարդու իրավունքների ազգային կառույցները և քաղաքացիական հասարակությունը կկարողանան ավելի լավ հասկանալ կոնվենցիայում ամրագրված նպատակները և իրավունքները,
- բարձրացնում է իրազեկվածությունը կոնվենցիայի և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ կապված երկրում առկա իրավիճակի վերաբերյալ,

- հնարավորություն է տալիս պետություններին օգտվելու կոնվենցիայի կիրարկման կատարելագործման վերաբերյալ միջազգային անկախ կոմիտեի փորձաքննությունից,
- ընդգծում է երկրում առկա դրական գործելաոճը և փորձը,
- հնարավորություն է տալիս պետություններին օգտվելու այլ պետությունների դրական գործելաոճից և փորձից, քանի որ բոլոր պարբերական զեկույցները և կոմիտեի ամփոփիչ դիտարկումները բաց փաստաթղթեր են,
- ապահովում է պետություններին, մարդու իրավունքների ազգային կառույցներին և քաղաքացիական հասարակությանը ապագա գործողությունների, ներառյալ օրենսդրության, քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ պաշտոնական ուղեցույցներով և
- ցույց է տալիս այն ոլորտները, որոնցում ցանկալի է միջազգային համագործակցությունը, մասնավորապես ՄԱԿ-ի միջոցով:

Հաշվետվողականության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը. Հարավային Աֆրիկայի փորձը

Կոմիտեն և կոնվենցիայի համար նախատեսված հաշվետվողականության մեխանիզմները նման են Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ծների վերացման մասին կոնվենցիայով (ԿՆԽԲՁՎԿ) նախատեսված մեխանիզմներին: Խորհրդարաններն այս զեկույցները վերահսկելու տարբեր եղանակներ ունեն: Օրինակ՝ Հարավային Աֆրիկայում ԿՆԽՎ կոմիտեին ուղղված բոլոր ազգային զեկույցները (ավելին՝ միջազգային մշտադիտարկող բոլոր մարմիններին ուղղված զեկույցները) քննարկվում են խորհրդարանում, և խորհրդարանը համոզվում է, որ զեկույցները պարունակում են բազմազան տեսակետներ, ներառյալ քաղաքացիական հասարակության մտտեցումները: Հետևաբար, խորհրդարանն իրականացնում է բանավեճեր և հանրային լսումներ, հրավիրում է նախարարների և պահանջում է փաստաթղթեր ու զեկույցներ մի շարք գերատեսչություններից և քաղաքացիների խմբերից: Հարավային Աֆրիկայում խորհրդարանի անդամները ներգրավված են ազգային պատվիրակություններում, որոնք մասնակցում են ԿՆԽՎ կոմիտեի աշխատանքներին՝ այդպիսով ապահովելով իրենց լավ պատկերացումը հետագա առաջարկությունների վերաբերյալ: Խորհրդարանը նաև ղեկավար դեր է խաղում համոզվելու համար, որ այդ առաջարկներն ազգային մակարդակում իրականացվում են¹:

1. Մեջբերված է «Խորհրդարանը և ժողովրդավարությունը 21-րդ դարում: Դրական փորձի ուղեցույց» (ԺՆԱ, Միջխորհրդարանական միություն, 2006):

Երեխայի իրավունքների կոմիտեն և հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքները

Երեխայի իրավունքների կոմիտեն եղել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հետ կապված պայմանագրային մարմիններից ամենաակտիվը մարդու իրավունքների և հաշմանդամության ոլորտում: Այն պարբերաբար տեղեկատվություն է պահանջում պետություններից իրենց երկրում հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների իրականացման վիճակի վերաբերյալ: 2006 թ. սեպտեմբերին Երեխայի իրավունքների կոմիտեն նշել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները դեռևս լուրջ դժվարություններ ունեն կոնվենցիայում թվարկված իրենց իրավունքներից օգտվելու հարցում: Կոմիտեն շեշտում է, որ իրավունքներից լրիվ օգտվելու խոչընդոտն ինքնին հաշմանդամություն չէ, այլ սոցիալական, մշակութային, վերաբերմունքի հետ կապված և ֆիզիկական արգելքները, որոնց հաշմանդամություն ունեցող երեխաները բախվում են ամեն օր: Կոմիտեն ուղեցույց է տվել պետություններին՝ աջակցելով ծնունդների գրանցմանը, ընտանեկան վիճակի մասին տեղեկատվության մատչելիությանը, այլընտրանքային խնամքին, առաջնային առողջապահությանը և սոցիալական ապահովությանը, կրթությանը և ժամանցին, անչափահասների արդարադատությանը և շահագործումն ու չարաշահումը կանխարգելելուն:

Պարբերական հաշվետվողականությանը հետևելը

Երբ կոմիտեն քննարկում է զեկույցը և ձևակերպում իր եզրափակիչ դիտարկումներն ու առաջարկությունները, այն կարող է արդեն փոխանցել իր հետևությունները ՄԱԿ-ի տարբեր մասնագիտացված հաստատություններին, հիմնադրամներին և ծրագրերին տեխնիկական համագործակցության ձևաչափով դրանց հետևելու համար: ՄԱԿ-ի շատ կառույցներ կան, որոնց մանդատը ներառում է հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված միջոցառումները, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ԱՄԿ-ը, ԱՀԿ-ը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ/UNDP) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ինչպես նաև Համաշխարհային բանկը: Ներգրավելով այս և այլ կազմակերպություններին՝ պետությունները և կոմիտեն կարող են օգնել ապահովվելու, որ պարբերական հաշվետվողականությունը բերի տևական բարեփոխումների հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման հարցում:

Մասնակից պետությունների համաժողովը

Կոնվենցիան վավերացրած պետությունները պարբերաբար հանդիպում են մասնակից պետությունների համաժողովում՝ քննարկելու կոնվենցիայի կիրարկման հետ կապված ցանկացած հարց: Մասնակից պետությունների համաժողովի առաջին հանդիպումը տեղի է ունենում կոնվենցիան ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո: Կոնվենցիան չի կարգավորում համաժողովի ձևավորման կարգը և գործառույթները:

խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող եմ օգնել պարբերական հաշվետվողականության արդյունավետության ապահովմանը.

Խորհրդարանականները կարևոր դեր ունեն կառավարությունների հաշվետվություններում արտացոլված և կոնվենցիայից բխող իրենց պարտավորությունների կատարումն ապահովելու հարցում: Խորհրդարանականները կարող են՝

- ապահովել, որ կառավարությունը ժամանակին պատրաստի իր նախնական և հետագա զեկույցները,
- պնդել, որ զեկույցները կազմվեն հաշմանդամություն ունեցող անձանց լրիվ ներգրավմամբ, լսումների միջոցով կամ խորհրդակցական այլ ձևաչափերով,
- զեկույցի ուշացման դեպքում բացատրություն պահանջել կառավարությունից և անհրաժեշտության դեպքում կիրառել խորհրդարանական ընթացակարգեր՝ ստիպելու, որ պետությունը գործի հաշվետվողականության իր պարտավորություններին համահունչ,
- ակտիվորեն ներգրավված լինել զեկույցի պատրաստմանը՝ լինելով տարբեր խորհրդարանական հանձնաժողովների անդամ,
- ապահովել, որ զեկույցը ներառի խորհրդարանի կողմից ձեռնարկված ցանկացած միջոց՝ հօգուտ հաշմանդամություն ունեցող անձանց,
- պնդել, որ կոմիտեի եզրափակիչ դիտարկումները լայնորեն տարածվեն,
- խրախուսել համապատասխան նախարարություններին կոմիտեի եզրափակիչ դիտարկումներն իրականացնելու համար,
- խորհրդարանում հարցեր ուղղել համապատասխան նախարարներին՝ բացահայտելու համար կոնվենցիայի կիրարկման նշանակալի արգելքները,
- տարածել կոմիտեի կողմից իր եզրափակիչ դիտարկումներում բարձրացված հարցերը՝ խորհրդարանական և հանրային քննարկումների միջոցով:

Չհաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մշտադիտարկման այլ մեխանիզմներ

Մարդու իրավունքների բոլոր համաձայնագրերը պաշտպանում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, ինչը նշանակում է, որ փորձագետների անկախ կոմիտեները, որոնք ստեղծված են ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ համաձայնագրերով, նույնպես դեր ունեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մշտադիտարկման հարցում, յուրաքանչյուր առանձին համաձայնագրի սահմաններում: Օրինակ՝ Մարդու իրավունքների կոմիտեն իրա-

վասություն ունի մշտադիտարկելու հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքացիական և քաղաքական իրավունքները Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից պետություններում: Երեխայի իրավունքների կոմիտեն իրավասություն ունի մշտադիտարկել հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների իրականացումը:

Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը

Կամընտիր արձանագրությունը մի իրավական գործիք է, որը կապված է գոյություն ունեցող կոնվենցիայի հետ և կարգավորում է հարցեր, որոնք բավարար չեն կարգավորվում մայր կոնվենցիայի կողմից: Այն հիմնականում, բայց ոչ միշտ, բաց է վավերացման կամ միացման համար միայն այն պետությունների համար, որոնք մայր կոնվենցիայի մասնակից են: Այն «կամընտիր» է այն իմաստով, որ պետությունները պարտավոր չեն դառնալ արձանագրության անդամ, նույնիսկ եթե նրանք մայր կոնվենցիայի մասնակից են: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը ներդնում է երկու ընթացակարգ՝ ամրապնդելու համար կոնվենցիայի կիրարկումը, դրանք են՝ անհատական հաղորդման ընթացակարգը և հետաքննության ընթացակարգը:

Անհատական հաղորդման ընթակարգ

Անհատական հաղորդման ընթացակարգը կամընտիր արձանագրության մասնակից պետություններում թույլ է տալիս անհատներին և անհատների խմբերին բողոքներ ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին, այն մասին, որ պետությունը խախտել է կոնվենցիայով նախատեսված իր պարտավորություններից որևէ մեկը: Այդ գանգատը հայտնի է որպես «հաղորդում»: Կոմիտեն հետո քննարկում է գանգատը, ձևակերպում իր տեսակետներն ու առաջարկությունները և ուղարկում է դրանք կոնկրետ պետությանը: Այդ տեսակետները և առաջարկությունները հայտնվում են կոմիտեի՝ Գլխավոր ասամբլեային ուղղված հանրային զեկույցում: Անհատական

«Կամընտիր արձանագրությունն անկասկած կնպաստի կոնվենցիայի մշտադիտարկման առկա համակարգին: Կարևորն այն է, որ այն կօգնի հստակեցնելու՝ ի՞նչ է պահանջվում և ի՞նչ չի պահանջվում պետություններից՝ տուժած անհատներին արդյունավետ հատուցում ապահովելիս: Վերջիվերջո, ես հույս ունեմ, որ կամընտիր արձանագրությունը կլինի իրավունքների չափազանց կարծր խմբերի վերացմանն ուղղված մեկ քայլ և դեպի քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքների նկատմամբ միասնական մոտեցում»:

Լուիզ Արբուր, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար

հաղորդման ընթացակարգերը հիմնականում թղթային կամ գրավոր ընթացակարգեր են, այլ կերպ՝ ո՛չ բողոք ներկայացնողը, ո՛չ էլ պետությունն անձամբ հանդես չեն գալիս կոմիտեի առջև, բոլոր առաջարկությունները կատարվում են գրավոր:

Ոչ բոլոր հաղորդումներն են ընդունելի համարվում: Կոմիտեն հաղորդումը համարում է անընդունելի, երբ

- այն անանում է,
- այն հանդիսանում է կոնվենցիայի դրույթների խախտում կամ անհամատեղելի է դրանց հետ,
- նույն բողոքն արդեն իսկ քննվել է կոմիտեի կողմից,
- առկա բոլոր ներպետական միջոցները սպառված չեն եղել,
- այն լավ հիմնավորված կամ բավարար փաստարկված չէ,
- Վկայակոչված փաստերը տեղի են ունեցել կամ վերացվել են մինչև տվյալ պետության համար կոնվենցիայի ուժի մեջ մտնելը:

Անհատական հաղորդման ընթացակարգը

Անհատական հաղորդման ընթացակարգը բաղկացած է հետևյալ քայլերից.

- Կոմիտեն ստանում է բողոքը:
- Կոմիտեն քննարկում է բողոքի ընդունելիության հարցը: Երբեմն բողոքի ընդունելիությունը քննարկվում է զանգատի բովանդակության հետ մեկտեղ, այլ կերպ ասած՝ որոշում է ընդունվում, որ բողոքն ընդունելի է (ընդունելիություն), և միևնույն ժամանակ որոշում է ընդունվում, թե արդյոք պետությունը խախտե՞լ է կամ չի խախտել իր պարտավորությունները (ըստ էության քննարկում):
- Կոմիտեն բողոքը գաղտնի ուղարկում է պետությանը:
- Վեց ամսվա ընթացքում պետությունը ներկայացնում է խնդիրը պարզաբանող գրավոր բացատրություններ ու փաստարկներ և ցույց է տալիս, թե ինչ վերականգնողական և/կամ այլ քայլեր են ձեռնարկվել:
- Բողոքողին հնարավորություն է տրվում մեկնաբանել պետության դիտարկումները:
- Կոմիտեն կարող է խնդրել պետությանը ձեռնարկել լրացուցիչ միջոցներ պաշտպանելու համար բողոքողի իրավունքները:
- Կոմիտեն քննում է բողոքը փակ նիստում:
- Կոմիտեն առաջարկություններ և դիտողություններ է անում, եթե այդպիսիք կան, պետությանը և բողոքողին, ու հաճախ պահանջում է պետություններից ապահովել տեղեկատվություն՝ արդյունքում ձեռնարկած քայլերի վերաբերյալ,

- Կոմիտեն հրապարակում է իր առաջարկությունները և դիտողությունները իր զեկույցում: Այլ կոմիտեները, որոնք ունեն անհատական հաղորդման ընթացակարգ, ավելի ու ավելի հաճախ են խնդրում պետություններին զեկույցներ ներկայացնել իրենց այն քայլերի մասին, որոնք ձեռնարկվել են ի պատասխան իրենց առաջարկությունների և հանձնարարականների:

Մարդու իրավունքների կոմիտեն քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց անհատական հաղորդումները

Մարդու իրավունքների կոմիտեն, որը մշտադիտարկում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի գործողությունը, արդեն իսկ քննարկել է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող անհատական հաղորդումներ:

«Համիլտոնն ընդդեմ ճամայկայի» գործով (1995) Մարդու իրավունքների կոմիտեն քննարկել է մահապատժի դատապարտվածների խցում պահվող հաշմանդամություն ունեցող դատապարտյալի նկատմամբ վերաբերմունքը և պահման պայմանները: Դիմողի երկու ոտքերը անդամալուծված էին և նա մեծ դժվարությամբ էր մագլցելով բարձրանում իր մահճակալի վրա: Մարդու իրավունքների կոմիտեն որոշեց, որ բանտի ղեկավարության կողմից դատապարտյալի հաշմանդամությունը հաշվի չառնելը և նրա համար պատշաճ միջոցներ չձեռնարկելը խախտում է դիմումատուի՝ մարդասիրական վերաբերմունքի, անձի արժանապատվությունը հարգելու իրավունքը, ուստի այդ գործողությունները հակասում են դաշնագրի 10(1)-րդ կետին:

«Կլեմենտ Ֆրանսիսն ընդդեմ ճամայկայի» գործով (1994) Մարդու իրավունքների կոմիտեն հաստատել է, որ պետությունն անուշադրության է մատնել մահապատժի դատապարտված բանտարկյալի հոգեկան առողջության վատթարացող վիճակը և անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկել նրա հոգեկան հիվանդությունը բուժելու ուղղությամբ՝ դրանով իսկ խախտելով տուժողի իրավունքները, որոնք սահմանված են դաշնագրի 7-րդ և 10(1)-րդ կետերով:

«Շ.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով (1999) իրանցի փախստականը կալանավորվել է Ավստրալիայի իշխանությունների կողմից, մինչ նրանք քննարկում էին նրա ապաստան ստանալու դիմումը: Մարդու իրավունքների կոմիտեն որոշեց, որ բողոքողի՝ շարունակական կալանքի տակ գտնվելը, առանց հաշվի առնելու նրա հոգեկան առողջության վատթարացումը, հանդիսանում է դաշնագրի 7-րդ կետով սահմանված նրա իրավունքի (խոշտանգումների կամ դաժան, անմարդկային վերաբերմունքի անթույլատրելիություն) խախտում: Մարդու իրավունքների կոմիտեն նաև նշել է, որ դիմողին իրանի Իսլամական Հանրապետություն արտաքսելը, որտեղ նա հավանականություն չունի ստանալու միակ արդյունավետ դեղորայքը և բուժումը, 7-րդ հոդվածի խախտում է:

Հետաքննության ընթացակարգ

Եթե կոմիտեն ստանում է հավաստի տեղեկատվություն, որ մասնակից պետությունը թույլ է տվել կոնվենցիայի դրույթների կոպիտ կամ պարբերաբար խախտումներ, այն կարող է հրավիրել պետությանը համագործակցելու այդ տեղեկատվության քննարկման հարցում՝ ներկայացնելով իր դիտարկումները: Մասնակից պետության դիտարկումները և ցանկացած այլ հավաստի տեղեկատվություն քննարկելուց հետո կոմիտեն կարող է իր մեկ կամ մի քանի անդամների նշանակել՝ շտապ հետաքննություն վարելու և զեկույց պատրաստելու համար:

Հանձնարարության դեպքում և կոնկրետ պետության համաձայնությամբ՝ հետաքննությունը կարող է ներառել այցելություն խնդրո առարկա երկիր: Հետաքննության բացահայտումները քննարկելուց հետո կոմիտեն այդ բացահայտումներն իր մեկնաբանություններով հանդերձ փոխանցում է պետությանը, որը վեցամսյա ժամկետում պետք է ներկայացնի իր դիտարկումները կոմիտեին: Հետաքննությունը գաղտնի է և իրականացվում է տվյալ պետության հետ սերտ համագործակցությամբ:

Վեցամսյա ժամկետի ավարտից հետո, որի ընթացքում պետությունը կարող էր ներկայացնել իր դիտարկումները, նրան հրավիրում են մանրամասնորեն ներկայացնելու այն միջոցները, որոնք ձեռնարկվել են հետաքննությանը պատասխանելու ուղղությամբ: Կոմիտեն կարող է պետությունից պահանջել հավելյալ տեղեկատվություն: Այնուհետև կոմիտեն Գլխավոր ասամբլեային ուղղված իր զեկույցում հրապարակում է իր բացահայտումների սեղմագիրը: Տվյալ պետության համաձայնությամբ կոմիտեն կարող է նաև հրապարակել հետաքննության վերաբերյալ նրա ամբողջական զեկույցը:

Կամընտիր արձանագրությունը վավերացրած պետությունը կարող է «շրջանցել» հետաքննության ընթացակարգը: Այլ կերպ ասած՝ արձանագրությունը ստորագրելու, վավերացնելու կամ դրան միանալու ժամանակ պետությունը կարող է հայտարարել, որ չի ճանաչում կոմիտեի՝ հետաքննություն իրականացնելու իրավունքը: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ պետությունը «շրջանցում» է հետաքննության ընթացակարգը, միևնույն է՝ կամընտիր արձանագրության բոլոր անդամները պարտավոր են ընդունել անհատական հաղորդման ընթացակարգը: Մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերի մեծ մասը նույնպես նախատեսում է կամընտիր հաղորդման ընթացակարգեր: Բոլոր այս ընթացակարգերն ունեն որոշակի նշանակություն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների համար: Անհատական հաղորդման ընթացակարգեր² են նախատեսում հետևյալ միջազգային գործիքները.

2. ՄԱԿ-ի անդամ պետությունները ներկայումս մշակում են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության նախագիծը: Այդ նախագիծը նախատեսում է և՛ անհատական հաղորդման, և՛ հետաքննության ընթացակարգ:

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան

Անհատական հաղորդման և հետաքննության ընթացակարգերն առաջին հայացքից

Անհատական հաղորդման ընթացակարգը.

- Ապահովում է առանձնահատուկ հատուցման հնարավորություն կոնկրետ դեպքերում, երբ պետությունը խախտում է հաշմանդամություն ունեցող անձի իրավունքները, և որևէ ազգային ընթացակարգով որևէ հատուցում չի ստացվում:
- Ապահովում է միջազգային ատյաններ դիմելու հնարավորություն հաշմանդամություն ունեցող այն անձանց համար, ովքեր ազգային մակարդակում չեն կարողացել պաշտպանել իրենց իրավունքները,
- Թույլ է տալիս կոմիտեին ընդգծել առավել արդյունավետ պաշտպանության միջոցների անհրաժեշտությունը,
- Թույլ է տալիս կոմիտեին ստեղծել դատական նոր մարմին քննարկելու համար, թե որքանով է արդյունավետ իրականացվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը,
- Աջակցում է պետություններին հասկանալու համար կոնվենցիայով նախատեսված իրենց

պարտավորությունների էությունը և դրանով աջակցում է նրանց այդ պարտավորությունների իրականացման հարցում:

Հետաքննության ընթացակարգը.

- Հնարավորություն է տալիս կոմիտեին անդրադառնալու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պարբերաբար և տարածված խախտումներին,
- Հնարավորություն է տալիս կոմիտեին միջոցներ առաջարկել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության կառուցվածքային պատճառների վերացման ուղղությամբ,
- Հնարավորություն է տալիս կոմիտեին ներկայացնել լայնածավալ առաջարկություններ հասնելու համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նկատմամբ հարգանքի ավելացման,
- Հնարավորություն է տալիս կոմիտեին աշխատել պետության հետ վերացնելու համար հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքներից լիարժեք օգտվելուն խանգարող խոչընդոտները:

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը
- Բոլոր ներգաղթած աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան
- Բռնությամբ անհետացած և անհետ կորած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան (դեռևս ուժի մեջ չի մտել)

Միջազգային հետևյալ փաստաթղթերը պարունակում են հետաքննության ընթացակարգ.

- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը
- Բռնությամբ անհետացած և անհետ կորած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան (դեռևս ուժի մեջ չի մտել)

Թեև վերը նշված բոլոր համաձայնագրերը դրանք վավերացրած պետություններում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց համար բաց են հաղորդումների առումով, այնուամենայնիվ դրանցից ոչ մեկը հատկապես չի կենտրոնանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա, և թեև այս բոլոր կոմիտեներն ունեն մարդու իրավունքների փորձագետներ, նրանք պարտադիր չեն իրականացնում մարդու իրավունքների և հաշմանդամության հարցերով փորձաքննություն: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունն ապահովում է ընթացակարգեր, որոնք հատկապես կենտրոնանում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վրա:

Կամընտիր արձանագրությանը միանալը

Կամընտիր արձանագրությունը քաջալերում է պետություններին կոնվենցիան արդյունավետորեն կիրառելու, տեղերում իրավական պաշտպանության առավել շատ հնարավորություն տալու, խտրական օրենքները և պրակտիկան վերացնելու համար և հանդիսանում է պարտավորության մի լրացուցիչ շերտ, որն ապահովում է լրացուցիչ երաշխիքներ, որպեսզի պետությունները հաշվետու լինեն կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունների համար:

Կամընտիր արձանագրությունը գործիք է, որը պետությունն օգտագործում է հետևյալ նպատակներով՝

- կատարելագործել հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության առկա մեխանիզմները,

- լրացնել պաշտպանության առկա մեխանիզմները,
- խորացնել պետության պատկերացումը այն քայլերի վերաբերյալ, որ նա պետք է ձեռնարկի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանելու և դրանց աջակցելու ուղղությամբ,
- պաշտպանել պետության գործողություններն այն դեպքերում, երբ կոմիտեն կեզրակացնի, որ որևէ խախտում տեղի չի ունեցել,
- խտրականություն պարունակող օրենքներում, քաղաքականությունում և գործելաոճում փոփոխությունների խթանում,
- մարդու իրավունքների չափանիշների մասին իրազեկվածության բարձրացում՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ:

Կամընտիր արձանագրությունը ստորագրելու, վավերացնելու կամ դրան միանալու ընթացակարգը նույնն է, ինչ կոնվենցիայինը, չնայած կամընտիր արձանագրությունն ուժի մեջ է մտնում 10-րդ վավերացումից կամ միանալուց հետո՝ ի տարբերություն կոնվենցիայի, որն ուժի մեջ է մտնում 20-րդ վավերացումից կամ միանալուց հետո: 4-րդ գլխում քննարկվում են կոնվենցիայի ստորագրման և վավերացման կամ դրան միանալու ընթացակարգերը:

Կոնվենցիային աջակցող ՄԱԿ-ի քարտուղարությունը

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին կաջակցի ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը, որը գտնվում է Ժնևում, Շվեյցարիա: Մասնակից պետությունների համաժողովին կաջակցի Տնտեսական և սոցիալական հարցերի վարչությունը, որը գտնվում է Նյու Յորքում:

Կոնտակտային տվյալներ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե՝
 ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ

UNOG-OHCHR
 1121 Ժնև 10
 Շվեյցարիա
 Էլ. փոստ: crpd@ohchr.org
(խնդրում ենք թեմայի տողում նշել՝ «Տեղեկատվության խնդրանք»)

Մասնակից պետությունների համաժողով
 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի քարտուղարություն

խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող եմ բարձրացնել կամընտիր արձանագրության մասին իրազեկվածությունը.

- Բացահայտել կառավարության նտադրությունը մասնակցելու ուղղությամբ, նման նտադրության բացակայության դեպքում պարզել պատճառները:
- Խորհրդարանում հարցեր բարձրացնել կամընտիր արձանագրության հետ կապված կառավարության ձեռնարկելիք գործողությունների կապակցությամբ:
- Հարցի հետ կապված ներկայացնել սեփական օրինագծեր:
- Խրախուսել կամընտիր արձանագրության մասին խորհրդարանական քննարկումներ:
- Համախմբել հասարակական կարծիքը կազմակերպված հանրային արշավների և բանավեճերի միջոցով՝ օգտագործելով հեռուստատեսությունը, ռադիոն, տպագիր մամուլը և հանրային հանդիպումները:
- Ապահովել կամընտիր արձանագրության թարգմանությունն ազգային լեզվով և դրա լայնորեն տարածումը:
- Ապահովել կամընտիր արձանագրության և դրա ընթացակարգերի վերաբերյալ պարզ տեղեկատվության մատչելիությունը տեղական լեզուներով և հասանելի ձևաչափերով:
- Կազմակերպել կամընտիր արձանագրության վերաբերյալ քննարկումներ կամ տեղեկատվական սեմինարներ խորհրդարանականների, կառավարության անդամների և քաղաքացիական հասարակության համար կամ աջակցել դրանց կազմակերպմանը:
- Կապ պահպանել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող և իրավապաշտպան կազմակերպությունների հետ:
- Օգտագործել հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը (դեկտեմբերի 3)՝ որպես առիթ քաջալերելու կամընտիր արձանագրության ստորագրումը և վավերացումը:
- Քաջալերել հաշմանդամություն ունեցող այն անձանց, որոնց իրավունքները խախտվել են, համապատասխան կերպով օգտագործել կամընտիր արձանագրությունը:

Տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն

ՄԱԿ-ի տաղավար 2

Նյու Յորք, NY, 10017

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ֆաքս՝ +1-212-963-0111

Էլ. փոստ՝ enable@un.org

ԳԼՈՒԽ 4

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԵՎ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԸ

4

Միջոցները, որոնցով միջազգային համաձայնագրերը դառնում են ազգային օրենսդրության մաս, տարբերվում են՝ կախված խորհրդարանական համակարգից և ազգային ընթացակարգերից: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում պետությունները ձեռնարկում են մի շարք քայլեր կոնվենցիայի և կամընտիր արձանագրության մասնակից դառնալու համար: Այս միջոցները միջազգային իրավունքի ստանդարտ պրակտիկա են:

Կոնվենցիային միանալը

Կոնվենցիայի ստորագրումը

Պետությունը դառնում է կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության մասնակից՝ այն ստորագրելով և վավերացնելով կամ միանալով դրանց: Տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը դառնում է կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության անդամ՝ այն ստորագրելով և պաշտոնական հաստատելով իր մտադրությունը կամ միանալով դրան: Կամընտիր արձանագրության ստորագրման և վավերացման նախապայմանը կոնվենցիան վավերացրած լինելն է:

Կոնվենցիայի մասնակից դառնալու առաջին քայլը այն ստորագրելն է: Պետությունները և տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները, ինչպիսին է Եվրոպայի միությունը, կարող են ստորագրել կոնվենցիան: Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետություն կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություն կարող է ստորագրել նաև կամընտիր արձանագրությունը: Ամեն դեպքում, երբ երկիրը միանում է կոնվենցիային կամ կամընտիր արձանագրությանը, այն նախապես ստորագրելու անհրաժեշտություն չկա: Պետությունը կարող է կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը ստորագրել ցանկացած ժամանակ: Ստորագրումը կազմա-

կերպվում է Արտաքին հարաբերությունների գրասենյակում, ՄԱԿ-ի Նյու Յորքի նստավայրում: Չնայած որոշ համաձայնագրեր ստորագրության բաց ժամկետ չեն սահմանում, այս կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը բաց են ստորագրության համար անորոշ ժամկետով:

Ո՞վ կարող է ստորագրել կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը

Պետությունների ղեկավարները, կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի նախարարներն իրավասու են ստորագրելու կոնվենցիան պետության անունից, առանց լիազորագրի:

Պետության այլ ներկայացուցիչներ, որոնք ցանկանում են ստորագրել կոնվենցիան, պետք է վերը նշված պաշտոնատար անձանցից որևէ մեկի կողմից տրված պատշաճ լիազորություն ունենան, որը հստակորեն կլիազորի կոնվենցիայի և կամընտիր արձանագրության ստորագրումը դրանում նշված անձի կողմից:

Պետությունները կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները, որոնք ցանկանում են ստորագրել կոնվենցիան և/կամ կամընտիր արձանագրությունը լիազորված անձի միջոցով, նախապես ապահովում են պահանջվող լիազորագրերի պատճենները հետևյալ հասցեով՝

Արտաքին հարաբերությունների գրասենյակ

ՄԱԿ-ի նստավայր

Նյու Յորք, Նյու Յորք

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հեռ.՝ +1 212 963 50 47

Ֆաքս՝ +1 212 963 36 93

Էլ. փոստ: treaty@un.org

Ի՞նչ է նշանակում ստորագրել կոնվենցիան

Կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը նախատեսում են ստորագրման պարզ ընթացակարգ: Դա նշանակում է, որ որևէ իրավաբանական պարտավորություններ չեն դրվում պետության կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության վրա կոնվենցիան ստորագրելուց հետո: Այնուամենայնիվ, կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը ստորագրելով՝ պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը ցույց է տալիս իր մտադրությունը կոնվենցիայով պարտավորված լինելու ուղղությամբ հետագա քայլեր ձեռնարկելու մասին: Ստորագրելը նաև պարտավորություն է առաջացնում ստորագրման և վավերացման կամ պարտավորված լինելու մասին համաձայնության միջև ընկած ժամանակահատվածում ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կհակասեն կոնվենցիայի նպատակին և առարկային:

Պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնություն տալը

Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության մասնակից լինելու համար պետությունը կոնկրետ գործողության միջոցով ցույց է տալիս այս երկու փաստաթղթերում ամրագրված իրավունքները և պարտավորությունները ստանձնելու իր կամքը: Այլ կերպ՝ նա արտահայտում է իր համաձայնությունը կոնվենցիայով և կամընտիր արձանագրությամբ պարտավորված լինելու վերաբերյալ:

Կոնվենցիայով և կամընտիր արձանագրությամբ պետության պարտավորված լինելու մասին համաձայնությունն արտահայտվում է մի քանի եղանակներով՝

- վավերացում (պետությունների համար),
- միանալ (պետությունների և տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունների համար),
- պաշտոնական հաստատում (տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունների համար):

Կոնվենցիայով և կամընտիր արձանագրությամբ պարտավորված լինելու համաձայնությունը մի գործողություն է, որով պետությունները ցույց են տալիս իրենց կամքը ստանձնելու փաստաթղթերով նախատեսված իրավական պարտավորությունները:

Վավերացման գործընթացը

■ Վավերացումը միջազգային մակարդակում

Կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը՝ երկուսն էլ նախատեսում են, որ պետություններն արտահայտեն իրենց համաձայնությունը պարտավորված լինելու վերաբերյալ՝ վավերացման ենթակա իրենց ստորագրությամբ: Միջազգային մակարդակում վավերացվելուց հետո պետությունը դառնում է իրավական առումով պարտավորված տվյալ կոնվենցիայով:

■ Վավերացումը ազգային մակարդակում

Միջազգային մակարդակում վավերացումը չպետք է շփոթել ազգային մակարդակում վավերացման հետ: Ազգային մակարդակում պետությունը կարող է վավերացնել կոնվենցիան համաձայն իր սեփական սահմանադրական կամ օրենսդրական դրույթների, մինչև միջազգայնորեն պարտավորված լինելու մասին իր համաձայնությունն արտահայտելը: Օրինակ՝ սահմանադրությունը կարող է պահանջել, որ խորհրդարանը քննարկի կոնվենցիայի դրույթները և որոշի դրա վավերացման հարցը նախքան միջազգային մակարդակում որևէ այնպիսի գործողություն ձեռնարկելը, որը ցույց կտա, որ պետությունը համաձայն է կոնվենցիայով պարտավորված լինե-

լուն: Այսուհանդերձ, ազգային մակարդակում վավերացումը ինքնին բավարար չէ պետության՝ միջազգային մակարդակում իրավաբանորեն պարտավորված լինելու մտադրությունը հավաստելու համար: Այդ իսկ պատճառով վավերացումը միջազգային մակարդակում դեռևս անհրաժեշտ է՝ անկախ ազգային ընթացակարգերից:

Վավերացումը տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունների կողմից

Կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը թույլ են տալիս տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություններին, ինչպիսին է Եվրոպայի միությունը, արտահայտել իրենց պարտավորված լինելու համաձայնությունը ստորագրելու և պաշտոնական հաստատման միջոցով: Պաշտոնական հաստատումն ունի նույն գործնական նշանակությունը, ինչ վավերացումը: Այսպիսով, պաշտոնական հաստատմամբ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը իրավաբանորեն պարտավորված է լինում կոնվենցիայով և/կամ կամընտիր արձանագրությամբ:

Միանալը

Պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը կարող է նաև կոնվենցիայով կամ կամընտիր արձանագրությամբ պարտավորված լինելու իր համաձայնությունն արտահայտել՝ միանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Ստորագրման, վավերացման, պաշտոնական հաստատման և միանալու միջև տարբերությունները

- **Ստորագրումը** ցույց է տալիս պետության մտադրությունը կոնվենցիայով և/կամ կամընտիր արձանագրությամբ պարտավորված լինելու ուղղությամբ հետագայում քայլեր ձեռնարկելու վերաբերյալ: Ստորագրելը նաև պարտավորություն է ստեղծում ստորագրման և պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնություն տալու միջև ընկած ժամանակատվածում ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կհակասեն կոնվենցիայի նպատակին և առարկային:
- **Վավերացումն** իրավաբանորեն պարտավորեցնում է պետությանը կիրարկելու կոնվենցիան և/կամ կամընտիր արձանագրությունը՝ հաշվի առնելով վավեր վերապահումները, մեկնաբանությունները և հայտարարությունները:
- **Պաշտոնական հաստատումը** տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությանն իրավաբանորեն պարտավորեցնում է կիրարկել կոնվենցիան և/կամ կամընտիր արձանագրությունը:
- **Միանալը** պարտավորեցնում է պետությանը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությանը իրականացնել կոնվենցիան և/կամ կամընտիր արձանագրությունը:

Միանալն առաջացնում է նույն իրավական հետևանքները, ինչ վավերացումը, սակայն ի տարբերություն վավերացման, որին իրավաբանական պարտավորություն ստեղծելու համար նախորդում է ստորագրումը միջազգային իրավունքի նորմերի համաձայն, միանալը պահանջում է միայն մեկ քայլ, այն է՝ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելը:

Վավերացման, պաշտոնական հաստատման և միանալու փաստաթուղթը

Երբ պետությունը ցանկանում է վավերացնել կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը կամ միանալ դրանց, կամ երբ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը ցանկանում է պաշտոնապես հաստատել կամ միանալ, պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը ձևակերպում է վավերացման, պաշտոնական ընդունման կամ միանալու փաստաթուղթ, որը պետք է ստորագրվի պետության գլխի, կառավարության ղեկավարի կամ արտաքին գործերի նախարարի կողմից:

Այս փաստաթղթի համար պարտադիր ձև գոյություն չունի, այն պետք է ներառի՝

- կոնվենցիայի և/կամ կամընտիր արձանագրության անվանումը, կնքման վայրը և ժամանակը,
- փաստաթուղթը ստորագրող անձի լրիվ անունը և պաշտոնը,
- պետության անունից կառավարության աներկբա մտադրությունը իրեն կոնվենցիայով և/կամ կամընտիր արձանագրությամբ պարտավորված համարելու մտադրության, ինչպես նաև դրանց դրույթներն անշեղորեն կատարելու մասին,
- պետության գլխի, կառավարության ղեկավարի կամ արտաքին գործերի նախարարի կամ տվյալ ժամանակահատվածում այդ պաշտոններն զբաղեցնող այլ անձանց, ինչպես նաև վերը նշված պաշտոնյաների կողմից տրված լիազորագրով հանդես եկող անձանց ստորագրությունը (միայն պաշտոնական կնիքը բավարար չէ):

Վավերացման, պաշտոնական հաստատման կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթն ուժի մեջ է մտնում միայն, երբ պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը ՄԱԿ-ի Նյու Յորքի նստավայրում ի պահ է հանձնում այն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Պետությունները կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները հանձնում են այդ փաստաթղթերը ՄԱԿ-ի համաձայնագրերի բաժին, որպեսզի հավաստվի այդ գործընթացների պատշաճ կատարումը (տե՛ս Համաձայնագրերի բաժնի վերը բերված կոնտակտային տվյալները):

Անհրաժեշտության դեպքում պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը իր նախաձեռնությամբ ապահովում է այդ փաստաթղթերի թարգմանությունը անգլերեն և/կամ ֆրանսերեն, եթե դրանք այլ լեզուներով են: Դա կօգնի համոզվելու, որ փաստաթղթերին պատշաճ կարգով ընթացք է տրվել:

Խորհրդարանի դերը վավերացման գործընթացում

Խորհրդարանն առանցքային դեր է խաղում վավերացման գործընթացում: Մինչ գործադիր իշխանությունը ի դեմս պետության գլխի, կառավարության ղեկավարի և արտաքին գործերի նախարարի ստորագրում և վավերացում են համաձայնագրերը, շատ երկրներում վավերացման վերջնական որոշումը ընդունում է խորհրդարանը, որը պետք է հաստատի այդ վավերացումը: Սա հիմնականում լինում է ռոմանո-գերմանական իրավունքի ավանդույթներ ունեցող երկրներում: Սակայն ընդհանուր իրավունքի ավանդույթներ ունեցող շատ երկրներում համաձայնագրերի կնքումը հիմնականում վերապահված է գործադիր իշխանությանը, և վավերացման գործընթացում խորհրդարանների դերն ավելի սահմանափակ է: Քանի որ միջազգային համաձայնագրերի թիվն աճում է, և քանի որ ներպետական օրենսդրության և քաղաքականության ներգրավմամբ ավելի շատ հարաբերություններ են կարգավորվում դրանցով, բոլոր երկրների խորհրդարաններն ավելի շատ հետաքրքրություն են ցուցաբերում գործադիրի՝ համաձայնագրեր կնքելու արտոնության նկատմամբ: Տե՛ս այս բաժնի վերջում զետեղված ստուգողական թերթիկը, որում ներկայացված են խորհրդարանականների՝ այս առնչությամբ իրականացվելիք հնարավոր գործողությունները:

Երբ կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը մտնում են ուժի մեջ

Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելու պահից դրանք մասնակից պետությունների համար դառնում են իրավաբանորեն պարտադիր:

Չնարավոր է, որ կոնվենցիան և կամընտիր արձանագրությունն ուժի մեջ մտնեն տարբեր ժամանակ, քանի որ այս երկու փաստաթղթերը ուժի մեջ մտնելու տարբեր ընթացակարգեր են նախատեսում՝

- կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման կամ միանալու մասին 20-րդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո 30-րդ օրը,
- կամընտիր արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման կամ միանալու մասին 10-րդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո 30-րդ օրը:

Խորհրդարանի դերը վավերացման գործընթացում

Վավերացման գործընթացում խորհրդարանի դերը տարբեր երկրներում տարբեր է: Ավստրալիայում խորհրդարանը վերանայում է համաձայնագիրը վավերացնելու ուղղությամբ կառավարության ձեռնարկած քայլերը: Սրա համաձայն՝ համաձայնագրի հետ կապված ցանկացած գործողություն, ինչպիսին է վավերացումը, մտցվում է խորհրդարանի օրակարգ կառավարության կողմից քայլեր ձեռնարկելուց նվազագույնը 15 ցիստ առաջ: Խորհրդարանի օրակարգ մտնելուց հետո ներկայացվող համաձայնագրի տեքստին կցվում է ազգային շահերի վերլուծությունը (ԱՇՎ), որում բացատրվում է, թե ինչու է կառավարությունն անհրաժեշտ համարում վավերացումը: ԱՇՎ-ն պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

- ներկայացվող համաձայնագրի տնտեսական, էկոլոգիական, սոցիալական և մշակութային ազդեցությունը,
- համաձայնագրով նախատեսված պարտավորությունները,
- համաձայնագրի ներպետական կիրարկումը,
- համաձայնագրի կիրարկման հետ կապված ֆինանսական ծախսերը,
- շրջանների, արդյունաբերության ոլորտի, համայնքների և այլ շահագրգիռ խմբերի հետ իրականացված խորհրդակցությունները:

Համաձայնագրերի հանձնաժողովը քննարկում է ԱՇՎ-ն և այլ փաստաթղթեր, որից հետո հրապարակում է իր դիտարկումներն ազգային մամուլում և իր էլեկտրոնային կայքում՝ հրավիրելով շահագրգիռ ցանկացած անձի ներկայացնել դիտողություններ կամ առաջարկություններ: Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է հանրային լսումներ և խորհրդարանին զեկույց է ներկայացնում, որում ամրագրում է իր եզրակացությունը, թե արդյոք Ավստրալիան պե՞տք է վավերացնի այդ կոնվենցիան կամ ձեռնարկի այլ քայլեր:

Ավստրալիայում կառավարությունը կարող է որոշել վավերացնել համաձայնագիրը, նույնիսկ եթե համաձայնագրերի հանձնաժողովը առարկել է դրա դեմ, նույն կերպ կառավարությունը կարող է որոշել չվավերացնել կոնվենցիան ի հակառակ հանձնաժողովի: Այնուամենայնիվ, այս գործընթացը հանդիսանում է հասարակական և խորհրդարանական հսկողության կարևոր միջոց համաձայնագրերը վավերացնելու վերաբերյալ կառավարության որոշումների նկատմամբ:

Քանի որ կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը մտնում է ուժի մեջ միջազգային, ազգային և տարածաշրջանային մակարդակներում, յուրաքանչյուր վավերացնող պետության կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության համար կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու 30-րդ օրը:

Վավերացման գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ Արտաքին հարաբերությունների գրասենյակի էլեկտրոնային կայքը՝ <http://untreaty.un.org>:

Կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության վերաբերյալ վերապահումները

Վերապահումն արձագանք է, որի նպատակն է բացառել կամ փոփոխել կոնվենցիայի դրույթը կոնկրետ պետության կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության համար: Այդ արձագանքը կարող է անվանվել «վերապահում», «հայտարարություն», «համաձայնություն», «պարզաբանող հայտարարություն» կամ «պարզաբանող արձագանք»: Ինչպես էլ այն ձևակերպվի կամ անվանվի, միևնույն է, ցանկացած արձագանք, որը բացառում կամ փոփոխում է կոնվենցիայի դրույթի իրավաբանական ազդեցությունը, ըստ էության համարվում է վերապահում: Վերապահումը կարող է հնարավորություն տալ այն պետությանը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությանը մասնակցել կոնվենցիային կամ կամընտիր արձանագրությանը, որը հակառակ դեպքում չէր ցանկանա կամ հնարավորություն չէր ունենա մասնակցելու դրանց:

Պետությունները կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները վերապահում կարող են անել ստորագրման, վավերացման, պաշտոնական հաստատման կամ միանալու ժամանակ: Երբ վերապահումն արվում է ստորագրման ժամանակ, այն դեռևս դեկլարատիվ հայտարարության բնույթ ունի և պետք է գրավոր ձևակերպմամբ հաստատվի, երբ պետությունն արտահայտի պարտավորված լինելու մասին իր համաձայնությունը:

Պետությունները կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները կարող են վերապահում անել նաև վավերացումից, պաշտոնական հաստատումից կամ միանալուց հետո:

Վերապահումներ, որոնք չեն թույլատրվում

Ե՛վ կոնվենցիան, և՛ կամընտիր արձանագրությունը թույլ են տալիս վերապահումներ: Այնուամենայնիվ, կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության նպատակի և առարկայի հետ անհամատեղելի վերապահումներ չեն թույլատրվում:

Վերապահումների վերաբերյալ առարկությունները

Երբ վերապահումը դրվում է շրջանառության մեջ, մյուս պետություններն ունեն 12 ամիս, որի ընթացքում նրանք կարող են առարկել այդ վերապահման դեմ, սկսած այն օրվանից, երբ վերապահման մասին ծանուցումն ի պահ է հանձնվել, կամ այն օրվանից, երբ պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունն արտահայտել է իր համաձայնությունը կոնվենցիայով պարտավորված լինե-

լու մասին՝ կախված այն բանից, թե դրանցից ո՞րն է ավելի ուշ եղել:

Երբ պետությունը 12-ամսյա ժամկետի ավարտից հետո ի պահ է հանձնում վերապահման դեմ առարկությունը գլխավոր քարտուղարին, նա շրջանառության մեջ է դնում այն որպես «հաղորդակցություն»:

Սովորաբար, երբ պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը ձևակերպում է վերապահումը, այն ներառվում է վավերացման, պաշտոնական հաստատման կամ միանալու փաստաթղթի մեջ կամ կցվում դրան և առանձին ստորագրվում պետության գլխի, կառավարության ղեկավարի կամ արտաքին գործերի նախարարի կամ այն անձի կողմից, ով ունի այդ նպատակով վերը նշված պաշտոնատար անձանց կողմից տրված պատշաճ լիազորություն:

Երբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ստանում է վերապահումը, նա, սովորաբար էլեկտրոնային փոստով, տեղեկացնում է այլ պետություններին ձևակերպման օրվա մասին: Երբ գլխավոր քարտուղարը ստանում է վերապահումը վավերացման, պաշտոնական հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո և այն համապատասխանում է ստորև բերված պահանջներին, գլխավոր քարտուղարը շրջանառության մեջ է դնում վերապահումը բոլոր պետությունների միջև:

Վերապահումները փոփոխելը կամ հանելը

Առկա վերապահումը կարող է փոփոխվել: Փոփոխությունը կարող է բերել վերապահումը մասնակիորեն հանելուն կամ որոշակի դրույթներում նոր բացառություններ կամ փոփոխություններ նախատեսելուն: Փոփոխության այս վերջին տեսակը նման է նոր վերապահման: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը շրջանառության մեջ է դնում այս փոփոխությունները և այլ պետություններին տրամադրում է 12 ամիս, որի ընթացքում նրանք կարող են առարկել դրա դեմ: Առարկությունների բացակայության դեպքում գլխավոր քարտուղարը փոփոխությունն ի պահ է ընդունում: Եթե կա առարկություն, փոփոխությունը չի ընդունվում:

Պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը ցանկացած ժամանակ կարող է հանել կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության վերաբերյալ իր կատարած վերապահումը: Վերապահումը հանելը պետք է ձևակերպվի գրավոր և ստորագրվի պետության գլխի, կառավարության ղեկավարի կամ արտաքին գործերի նախարարի կամ այն անձի կողմից, ով ունի վերը նշված պաշտոնատար անձանց կողմից տրված պատշաճ լիազորություն: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը շրջանառության մեջ է դնում վերապահումը վերացնելու մասին ծանուցումը բոլոր պետությունների միջև:

Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության վերաբերյալ հայտարարությունները

Կոնվենցիայի և կամընտիր արձանագրության վերաբերյալ հայտարարությունների տեսակները

Կոնվենցիայով կողմերը կարող են հայտարարություններ անել միայն մեկնաբանող հայտարարության ձևով: Կամընտիր արձանագրությամբ կողմերը կարող են անել և՛ մեկնաբանող հայտարարություններ, և՛ կամընտիր հայտարարություններ:

■ Մեկնաբանող հայտարարություններ

Պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունը կարող է հայտարարություն անել նաև այն մասին, թե նա ինչպես է մեկնաբանում կամ հասկանում կոնվենցիայի կոնկրետ դրույթը:

Այդ փաստաթղթերը կոչվում են «հայտարարություններ» կամ «մեկնաբանող հայտարարություններ»: Ի տարբերություն վերապահումների՝ այս հայտարարությունները նպատակ չունեն բացառելու կամ փոփոխելու կոնվենցիայի իրավական հետևանքները: Հայտարարության նպատակը կոնկրետ դրույթների կամ ամբողջ կոնվենցիայի նշանակությունը պարզաբանելն է:

■ Կամընտիր հայտարարություններ

Սա հայտարարությունների լրացուցիչ ձև է և թույլատրվում է կամընտիր արձանագրությամբ: Կամընտիր արձանագրությունը սահմանում է երկու ընթացակարգ՝ համակարգ, որը թույլ է տալիս անհատներին հայց ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին՝ հայտնելով կոնվենցիայի խախտման մասին (անհատական հաղորդման ընթացակարգ) և համակարգ, որը թույլ է տալիս կոմիտեին իրականացնել հետաքննություններ, երբ նա ստանում է հավաստի տեղեկատվություն այն մասին, որ մասնակից պետության կողմից տեղի են ունենում կոնվենցիայով նախատեսված իրավունքների կոպիտ և շարունակական խախտումներ (հետաքննությունների ընթացակարգ): Պետությունները և տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները, որոնք վավերացնում են կամընտիր արձանագրությունը, կարող են ստորագրման, վավերացման կամ միանալու պահին հայտարարել, որ իրենք չեն ճանաչում հետաքննության ընթացակարգերի հետ կապված կոմիտեի իրավասությունը:

Կոնվենցիայի վերաբերյալ հայտարարություններ անելը

Հայտարարությունները հաճախ ի պահ են հանձնվում ստորագրման ժամանակ կամ վավերացման, պաշտոնական հաստատման կամ միանալու մասին

փաստաթղթերն ի պահ հանձնելիս: Մեկնաբանող հայտարարությունները, ի տարբերություն վերապահումների, իրավաբանական ուժ չունեն և այդպիսով չեն պահանջում ստորագրություն որևէ պաշտոնատար անձի կողմից, քանի որ այն հստակորեն բխում է տվյալ պետությունից: Այնուամենայնիվ, նախընտրելի է, որ նման հայտարարությունը ստորագրվի պետության գլխի, կառավարության ղեկավարի կամ արտաքին գործերի նախարարի կամ վերը նշված պաշտոնատար անձանց կողմից դրա համար պատշաճ լիազորված անձի կողմից:

Քանի որ կամընտիր հայտարարություններն ազդում են պետության կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպության իրավական պարտավորությունների վրա, դրանք պետք է ստորագրվեն պետության գլխի, կառավարության ղեկավարի կամ արտաքին գործերի նախարարի կամ վերը նշված պաշտոնատար անձանց կողմից դրա համար պատշաճ լիազորված անձի կողմից:

Երբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ստանում է հայտարարությունը, նա ուղարկում հայտարարության տեքստը բոլոր պետություններին նաև էլ. փոստի միջոցով՝ դրանով իսկ հնարավորություն տալով այդ պետություններին ներկայացնել իրենց եզրակացությունները հայտարարության կարգավիճակի վերաբերյալ:

Հայտարարությունը, որը վերապահում է պարունակում և անհամատեղելի է կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության նպատակի և առարկայի հետ, թույլատրելի չէ: Նման դեպքում պետությունը կարող է տեղեկացնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին իր առարկության վերաբերյալ: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը շրջանառության մեջ է դնում իր ստացած բոլոր առարկությունները: Հայտարարությունների վերաբերյալ առարկությունները հիմնականում կենտրոնանում են այն հարցի վրա, թե արդյոք այդ փաստաթուղթը միայն մեկնաբանող հայտարարություն է, թե՞ իրականում այն վերապահում է, որը կփոփոխի կոնվենցիայի իրավական ազդեցությունը: Առարկող պետությունը երբեմն պահանջում է, որ հայտարարություն անող պետությունը «պարզաբանի» իր մտադրությունը: Այն դեպքում, երբ հայտարարություն անող պետությունը համաձայնում է, որ ինքը հայտարարության փոխարեն ըստ էության վերապահում է ձևակերպել, նա կարող է հանել իր վերապահումը կամ պնդել, որ իր փաստաթուղթը միայն հայտարարություն է: Վերապահումների նման հայտարարությունները նույնպես հնարավոր է փոփոխել կամ հանել:

Կոնվենցիայի ազդեցությունը դրա մասնակից չհանդիսացող կողմերի համար

Ընդհանրապես, պետությունները պետք է վավերացնեն կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը իրենց տարածքում: Բայց եթե նույնիսկ պետությունը կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության մասնակից չէ, կոնվենցիայի դրույթները միևնույն է, կարող են նշանակու-

Ինչպե՞ս կարող եմ օգնել, որ իմ կառավարությունը ստորագրի և վավերացնի կամ միանա կոնվենցիային և կամընտիր արձանագրությանը.

- Ստուգե՛ք՝ արդյոք ձեր կառավարությունն ունի՞ կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը ստորագրելու և վավերացնելու մտադրություն:
- Եթե ոչ, ապա անհապաղ օգտագործեք խորհրդարանական ընթացակարգերը՝ բացահայտելու համար այդ անգործության պատճառները: Օրինակ՝ բանավոր կամ գրավոր հարց ուղղեք ձեր կառավարությանը՝ պարզելու համար նրա վավերացնելու մտադրությունը կամ չվավերացնելու պատճառները:
- Հաշվի առեք այս հարցի կապակցությամբ խորհրդարանի քննարկմանը սեփական օրինագծեր ներկայացնելու ձեր իրավունքը:
- Աջակցե՛ք այս հարցի կապակցությամբ խորհրդարանական քննարկումների անցկացմանը:
- Ակտիվացրե՛ք հանրային կարծիքը հանրային իրազեկման արշավների միջոցով և տարածեք կոնվենցիայի և կամընտիր արձանագրության վավերացմանը նպաստող տեղեկատվություն:
- Եթե ստորագրման գործընթացը սկսվել է, ստուգե՛ք՝ արդյոք ձեր կառավարությունը մտադի՞ր է վերապահումներ անել կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության կապակցությամբ, եթե այո, ապա պարզե՛ք՝ վերապահումներն անհրաժե՞շտ են և արդյոք համատեղելի՞ են կոնվենցիայի և կամընտիր արձանագրության նպատակի և առարկայի հետ: Եթե մտածում եք, որ դրանք անհիմն են, քայլեր ձեռնարկեք, որ կառավարությունը հետ կանգնի իր այդ գործողություններից:
- Եթե վավերացվել է, ստուգե՛ք՝ արդյոք ձեր կառավարության կողմից կատարված որևէ վերապահում ուժի մե՞ջ է, թե՞ ոչ, և արդյոք դրա անհրաժեշտությունը դեռևս կա: Եթե կարծում եք, որ չկա, քայլեր ձեռնարկեք դրանք հանելու ուղղությամբ:
- Հանդգվե՛ք, որ հանրային ծառայողները, պետական պաշտոնյաները և հասարակությունն ընդհանրապես տեղյակ են, որ պետությունը վավերացրել է կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը կամ միացել է դրանց:
- Եթե ձեր երկիրը վավերացրել է կոնվենցիան կամ միացել է, բայց դեռ չի վավերացրել կամընտիր արձանագրությունը, պարզեք պատճառները և քայլեր ձեռնարկեք նպաստելու կամընտիր արձանագրության վավերացման խոչընդոտների վերացմանը կամ ուղղմանը և քաջալերեք կամընտիր արձանագրության անհապաղ վավերացումը:

թյուն ունենալ նրա համար: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից կոնվենցիայի ընդունումը առանց քվեարկության ցույց է տալիս, որ միջազգային հանրությունը գիտակցում է հաշմանդամություն ունեցող անձանց աջակցելու և նրանց պաշտպանելու անհրաժեշտությունը: Ի վերջո, կոնվենցիան դրանով ունի բարոյական հեղինակություն և կարող է օգտագործվել պետությունների ղեկավարման մեջ, և նույնիսկ կարող է բերել շեշտակի բարեփոխումների, եթե չգտնվի բավարար քաղաքական կամք այն վավերացնելու համար: Երբ կառավարությունը որոշում է իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, խորհրդարանականները կարող են կիրարկել կոնվենցիան՝ որպես միջազգայնորեն ճանաչված չափանիշ, որի ուժով կարող են վերանայվել ազգային օրենսդրությունը և քաղաքականությունը: Կոնվենցիան կարող է նաև օգտագործվել որպես նոր օրենսդրություն մշակելու մոդել:

Պետությունները դեռևս ունեն մարդու իրավունքների միջազգային այլ համաձայնագրերից և ընդհանուր միջազգային իրավունքից բխող պարտավորություններ աջակցելու մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանելու դրանք, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները: Օրինակ՝ բոլոր պետությունները գոնե վավերացրել են մարդու իրավունքների մեկ առանցքային համաձայնագիր, որը նշանակում է, որ բոլոր պետությունները համաձայնել են արգելել խտրականությունը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Նմանապես, պետությունները պարտավոր են հարգել մարդու սովորական միջազգային իրավունքները և միջազգային իրավունքի անվերապահ հորմերը, ինչպիսին է, օրինակ՝ խոշտանգումների արգելքը:

Ծանոթագրություն

Սույն գլխի բովանդակության մեջ օգտագործվել են ՄԱԿ-ի արտաքին հարաբերությունների գրասենյակի «Համաձայնագրերի ուղեցույցի» 3-րդ գլխի նյութերը: Ուղեցույցը տեղադրված է հետևյալ կայքում.

<http://untreaty.un.org/English/TreatyHandbook/hbframeset.htm>

Ազգային օրենսդրությունը և կոնվենցիան

Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք է այն, որ որևէ միջազգային համաձայնագրի մասնակից պետությունը պետք է ապահովի, որ իր ներպետական օրենսդրությունը և պրակտիկան համապատասխանեն համաձայնագրի պահանջներին: Որոշ դեպքերում կոնվենցիան կարող է տալ ընդհանուր ուղեցույցներ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ: Այլ դեպքերում կոնվենցիան պարունակում է հատուկ ամրագրումներ: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան այդ երկու տեսակի դրույթներն էլ սահմանում է: Այդ առումով խորհրդարանն ունի կարևորագույն դերակատարություն կոնվենցիայով պահանջվող օրենսդրական բնույթի միջոցառումներ ապահովելու ուղղությամբ:

Կոնվենցիայի բազմաթիվ դրույթներ ձևակերպմամբ և բովանդակությամբ նման են մարդու իրավունքների վերաբերյալ այլ համաձայնագրերին, որոնց մասնակցում է տվյալ պետությունը: Օգտակար կլինեն այդ համաձայնագրերի ուժի մեջ մտնելու ընթացքն ուսումնասիրելը՝ պարզելու համար այն քայլերը, որոնք պահանջվում են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան կիրարկելու համար:

Ներպետական օրենսդրությունում կոնվենցիան ներմուծելը

Ստորագրման և վավերացման նշանակությունը

4-րդ գլխում մանրամասն բացատրվում են կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը ստորագրելու և վավերացնելու ընթացակարգը և նշանակությունը: Կոնվենցիան կիրարկելու համար օրենսդրական միջոցները քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ.

- կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը

ստորագրելու կամ վավերացնելու միջև ժամանակային սահմանափակում չկա,

- կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության ստորագրումը պարտավորեցնում է պետությանը ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել այդ փաստաթղթերի նպատակին և առարկային,
- կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը վավերացնելը առնվազն նշանակում է պետության պարտավորություն այս փաստաթղթերով պարտավորված լինելու և իր պարտավորությունները բարեխիղճ կատարելու վերաբերյալ:

«Ուզանդան մարտի 30-ին կոնվենցիան ստորագրած 82 պետություններից մեկն էր, և վավերացման գործընթացն ընթացքի մեջ է: Երբ կոնվենցիան կիրարկվի, այն կդառնա նշանակալի օրինակ գործարկելու համար հաշմանդամության վերաբերյալ մարդու իրավունքների մոդելը՝ սահմանելով արժանապատվության, խտրականության արգելքի, լրիվ մասնակցության, հարգանքի, հավասարության և մատչելիության սկզբունքները և կնպաստի հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց իրավունքներին և ներգրավմանը»:

Ջեյմս Մուանդա, նախկին խորհրդարանական (Ուզանդա)

Կոնվենցիայով սահմանված հիմնարար պարտավորություններից մեկն այն է, որ ազգային օրենսդրությունը պետք է երաշխավորի կոնվենցիայում թվարկված իրավունքների ապահովումը: Խորհրդարանի անդամները, այսպիսով, դա պետք է համարեն լավագույն միջոց կոնվենցիայում երաշխավորված իրավունքները ազգային օրենսդրությամբ կյանքի կոչելու համար: Ընտրված մեթոդները կարող են տարբերվել՝ հաշվի առնելով առանձին երկրների սահմանադրական և իրավական համակարգերը:

- Որոշ երկրներում կոնվենցիան, միջազգային մակարդակում վավերացվելուն պես, կարող է ինքնաբերաբար դառնալ ազգային օրենսդրության մաս: Այլ խոսքով՝ կոնվենցիան կարող է ուղղակիորեն կիրարկվել ազգային դատարանների կամ այլ մարմինների կողմից:
- Իսկ որոշ երկրներում օրենսդիրը կարող է ընդունել վավերացման փաստաթուղթը ազգային մակարդակում: Սա կարող է ունենալ կոնվենցիան ազգային օրենսդրության մեջ ներմուծելու ազդեցություն: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ խորհրդարանականները վավերացնում են կոնվենցիան (ազգային վավերացում), որոշ դրույթներ մինչև ուժի մեջ մտնելը դեռևս կարող են պահանջել օրենսդրական միջամտություն: Սա մասնակիորեն կախված է նաև նրանից, թե որքանով են առանձնահատուկ կոն-

վենցիայով նախատեսված պարտավորությունները. որքան առանձնահատուկ է պարտավորությունը, այնքան քիչ է հավանականությունը, որ կարիք կլինի այն կիրարկող օրենսդրության:

- Այլ դեպքերում, ներառյալ ընդհանուր իրավունքի բազմաթիվ երկրներում, համապարտադիր իրավունքներ և պարտավորություններ կառաջացնեն կոնվենցիայի միայն այն դրույթները, որոնք ուղղակիորեն ներմուծվել են ազգային օրենսդրության մեջ:

Գործողություններ, որոնք ուղղված են ապահովելու նոր ընդունվող և քննարկվող օրենքների համապատասխանությունը կոնվենցիային

Կառավարությունները կարող են ունենալ նոր հաստատված կամ արդեն գոյություն ունեցող մարմին, ինչպիսին է հավասարության հարցերով հանձնաժողովը, մարդու իրավունքների ազգային ինստիտուտը կամ հաշմանդամության հարցերով հանձնաժողովը, որը կիրականացնե օրենսդրության համապարփակ վերանայումը: Այս գործընթացը պետք է ներառի՝

- ներգրավել փորձագետներ կառավարության վարչություններից և նախարարություններից, քաղաքացիական հասարակությունից և հաշմանդամություն ունեցող անձանցից կամ նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններից,
- հաստատել և մշտադիտարկել վերանայման ավարտի ժամկետները և
- ստեղծել խորհրդարանական հանձնաժողով հսկելու այդ գործընթացը և պարբերաբար ուսումնասիրելու ցանկացած օրենսդրական նախաձեռնություն, որպեսզի ապահովվի դրա համապատասխանությունը սահմանադրությանը:

Հավասարության սահմանադրական երաշխիքները՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց հետ

Հիմնարար իրավունքների և ազատությունների մասին 1982 թ. կանադական խարտիայի 15-րդ բաժինը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք հավասար է օրենքի առջև և օրենքին համապատասխան առանց խտրականության ունի օրենքով հավասարապես պաշտպանված լինելու և դրանից օգտվելու իրավունք, մասնավորապես առանց ռասայի, ազգության կամ էթնիկական ծագման, մաշկի գույնի, կրոնի, սեռի, տարիքի կամ հոգեկան կամ ֆիզիկական հաշմանդամության վրա հիմնված խտրականության»:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է. «Հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են նույն իրավունքներից, ինչ մյուս քաղաքացիները քաղաքացիական, մշակութային և սոցիալական ոլորտներում, ինչպես նաև ընտանեկան կյանքում», դրույթը սահմանում է նաև, որ «արգելվում է խտրական վերաբերմունք ցուցաբերել, վիրավորել կամ հետապնդել հաշմանդամություն ունեցող անձանց»:

Գերմանիայի Ղաշնային Հանրապետության հիմնական օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ բոլոր անձինք հավասար են օրենքի առջև և որևէ մեկը չի կարող անբարենպաստ վերաբերմունքի արժանանալ իր հաշմանդամության պատճառով:

Ֆիջիի 1997 թ. սահմանադրության (Վերանայված ակտ) 38-րդ բաժինը սահմանում է. «Անձը չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ենթարկվի անարդարացի խտրականության՝ կապված իր իրական կամ ենթադրյալ հատկանիշների կամ հանգամանքների հետ, ներառյալ ... հաշմանդամությունը»:

Ուգանդայի 1995 թ. սահմանադրությունը նախագծվել է հասարակական տարբեր խմբերի մասնակցությամբ, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձինք: Այդ մասնակցությունն արտացոլվել է մի շարք սահմանադրական դրույթներում, որոնք երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց հավասարությունը և աջակցում են դրան:

21-րդ հոդվածը սահմանում է, որ անձի նկատմամբ «չպետք է խտրականություն դրսևորվի սեռի, ռասայի, էթնիկ ծագման, ցեղային պատկանելության, ծննդի, հավատքի կամ կրոնի, կամ սոցիալական, տնտեսական դրության, քաղաքական հայացքների կամ հաշմանդամության պատճառով»:

32(1)-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունը պետք է «դրական քայլեր ձեռնարկի հօգուտ այն խմբերի, որոնք մարզինալացվել են սեռի, տարիքի, հաշմանդամության կամ որևէ այլ պատմական, ավանդույթային կամ սովորույթային պատճառով՝ նպատակ ունենալով շտկել նրանց նկատմամբ եղած անհավասար վիճակը»:

Հարավային Աֆրիկայի սահմանադրության 9-րդ հոդվածը սահմանում է, որ «... հավասարությանն աջակցելու համար կարող են ձեռնարկվել օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կոչված կլինեն պաշտպանել և աջակցել այն անձանց կամ անձանց խմբերին, որոնք ենթարկվում են անարդարացի խտրականության»:

Ներմուծումը սահմանադրական, օրենսդրական և կարգավորման միջոցառումների միջոցով

Բացառությամբ այն դեպքերի, երբ երկրի օրենքներն արդեն իսկ ամբողջությամբ համապատասխանում են կոնվենցիայի պահանջներին, պետությունը, որպես կանոն, պետք է փոփոխի գործող օրենսդրությունը կամ ընդունի նոր օրենքներ կոնվենցիան գործողության մեջ դնելու համար:

Իրականում պետք է լինի համապարփակ և հստակ իրավական փաստաթուղթ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև մանրակրկիտ օրենսդրություն այդ երաշխիքները գործնականում իրականացնելու ուղղությամբ: Չափազանց կարևոր է, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ճանաչումը և պաշտպանությունը պատշաճ կերպով արտացոլված լինեն երկրի գլխավոր օրենքում՝ սահմանադրությունում կամ հիմնական օրենքներում: Սա կապահովի հնարավոր ամենաբարձր իրավական պաշտպանությունը և ճանաչումը: Սա կնպաստի հաշմանդամությունը որպես խտրականու-

թյան բացառման հիմք դիտարկելու կամ ազգային սահմանադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները միանշանակորեն պաշտպանելուն՝ կա՛մ որպես հավասարության ընդհանուր երաշխիքի մի մաս, կա՛մ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող առանձնահատուկ դրույթների տեսքով:

Դրանից հետո խորհրդարանը կարող է ներմուծել ամբողջ կոնվենցիան ներպետական օրենսդրության մեջ: Այս դեպքում արդյունավետ կարող է լինել համապատասխան օրենքում հստակ ամրագրելը, որ կոնվենցիայի դրույթներն ունեն ինքնուրույն գործողություն, այսինքն՝ նրանք կարող են ուղղակիորեն կիրառվել ներպետական դատարաններում և այլ ատյաններում:

Ինչևէ, նույնիսկ եթե կոնվենցիան ամբողջությամբ ներդրվել է ներպետական օրենսդրության մեջ, սա իրականում բավարար չէ այդ դրույթների լրիվ կիրառման համար, սովորաբար այս դեպքում դեռևս պահանջվում է կիրարկող օրենսդրություն, ներառյալ առանձնահատուկ ոլորտների մանրամասն օրենքներ, ինչպիսին է աշխատանքային հարաբերություններում խտրականությունն արգելող օրենքը:

Բացի այդ, օրենսդրի համար կարող է միշտ հնարավոր կամ հարմար չլինել հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ իրավունքներից հավասարապես օգտվելու ուղղված կանոնների և չափանիշների մանրամասն սահմանումը: Պետությունը, բացի օրենսդրությունից, նաև պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և կարգավորիչ նախաձեռնություններ, որպեսզի իր գործունեությունը համահունչ դարձնի այն դրույթներին, որոնք պահանջում են ձեռնարկել «անհրաժեշտ միջոցներ» այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են շինություններին և տրանսպորտային համակարգերին ֆիզիկական մատչելիությունը կամ մատչելիությունը տեղեկատվական կամ հաղորդակցության տեխնոլոգիաներին (կոնվենցիայի 4-րդ հոդված): Քանի որ խորհրդարանները չեն կարող կյանքի կոչել այս մանրամասն միջոցառումները, առավել ճիշտ կլինի ընդունել այնպիսի օրենսդրություն, որը թույլ կտա այս բնագավառների սահմանումը և պահանջել, որ այդ չափանիշները ներկայացվեն օրենսդրին ի գիտություն և/կամ հաստատման համար:

Խտրականության արգելման օրենսդրության նկատմամբ տարբեր մոտեցումներ

Առնվազն 40 երկրներ ընդունել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ օրենքներ: Այդ օրենքների մի մասի առաջնային նպատակը խտրականությունը արգելքն է, մյուս օրենքները սահմանում են պետության և հասարակության դրական պարտավորությունը ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական բարեկեցությունը և նրանց օգտվելը սոցիալական աջակցության ծառայություններից: Բազմաթիվ երկրներ այդ երկու տեսակի օրենքներն էլ ունեն:

Չաշմանդամություն ունեցող անբրիկացիների մասին ակտը (ՉԱԱ) արգելում է խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ աշխատանքային հարաբերություններում, հանրային ծառայություններում և տրանսպորտի բնագավառում, ինչպես նաև հանրային վայրերում: Աշխատանքային հարաբերությունների համատեքստում ՉԱԱ-ն ըստ էության արգելում է խտրականությունը մասնագիտական որակավորում ունեցող հաշմանդամ անձանց նկատմամբ, ովքեր կարողանում են իրականացնել իրենց պաշտոնից (կամ այն պաշտոնից, որ նրանք ցանկանում են զբաղեցնել) բխող աշխատանքային պարտականությունները, համապատասխան հարմարությունների օգնությամբ կամ առանց դրանց և որոնք չափազանց մեծ դժվարություններ չեն պատճառում իրենց գործատուին¹:

Չնդկաստանում Չաշմանդամություն ունեցող անձանց մասին 1995 թ. (Չավասար հնարավորությունների, իրավունքների պաշտպանության և լիարժեք մասնակցության ապահովում) ակտը որդեգրել է առավել ընդգրկուն մոտեցում. այն օգտագործում է և՛ խտրականության արգելման ոճը, և՛ նաև քվոտավորման համակարգի միջոցով աջակցում է դրական խտրականությանը՝ հօգուտ հաշմանդամություն ունեցող անձանց, հանրային և մասնավոր ձեռնարկությունների ուսումնական և աշխատանքային ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովելով որոշակի թվով տեղեր: Այն նաև խրախուսանք է նախատեսում այն կազմակերպությունների համար, որոնք աջակցում են հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքին և ցուցաբերում են արտոնյալ վերաբերմունք՝ հարկային զիջումների, սուբսիդիաների և դրամաշնորհների միջոցով²:

1996 թ. **Կոստա Ռիկան** ընդունեց **Չաշմանդամություն ունեցող անձանց հավասարության մասին թիվ 7600 օրենքը**: Այս օրենքը պետության վրա դնում է հստակ պարտավորություններ աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին և երաշխավորում է հավասարությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և աշխատանքը:

Չավասարության վերաբերյալ և խտրականությունն արգելող օրենսդրության տեսակները

Չաշմանդամության պատճառով խտրականության բոլոր տեսակների արգելման և հաշմանդամություն ունեցող անձանց հավասար և արդյունավետ պաշտպանության պարտավորությունը (կոնվենցիայի 5-րդ հոդված) պահանջում է, որ և՛ այդ արգելքը ներառված լինի ազգային օրենսդրությունում, նախընտրելի է նաև՝ ազգային սահմանադրություններում, և՛ որ մասնավոր և հանրային կյանքի բոլոր բնագավառներին վերաբերող մանրամասն օրենսդրական ակտեր ընդունվեն: Այն որոշակի ձևը, որ այս դրույթները պետք է ընդունեն, կախված կլինի գոյություն ունեցող օրենքներից և մասնակից պետության իրավական համակարգից:

1. Վերցված է՝ DESA compilation: <http://www.un.org/esa/socdev/enable/discom102.htm#19#19>

2. Վերցված է՝ DESA compilation: <http://www.un.org/esa/socdev/enable/discom102.htm#19#19>

Որոշ երկրներ ունեն խտրականության դեմ համապարփակ, ընդհանուր օրենքներ, որոնք նախատեսում են բազմաթիվ հիմքերով խտրականության արգելման դեպքերը, այլ երկրներ ունեն առանձին օրենքներ, որոնք նախատեսում են խտրականության տարբեր ձևեր, ինչպիսիք են սեռի, տարիքի, ամուսնական դրության վրա հիմնվածները, կամ նախատեսում են խտրականությունը որոշակի բնագավառներում, օրինակ՝ աշխատանքային հարաբերություններում:

Կարծիքներից մեկն այն է, որ ընդունվի հաշմանդամության պատճառով խտրականության արգելման մասին ընդհանուր բնույթի օրենք, բայց որը նաև ապահովի որոշակի բնագավառների մանրամասն կարգավորումներ հանրային և մասնավոր կյանքում:

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ կարելի է ընդունել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հավասարության մասին օրենք, ինչպիսիք են որոշ պետությունների ընդունած գենդերային հավասարության մասին օրենքները: Այս կարգի օրենքները չեն սահմանափակվում խտրականությունն արգելելով, այլ նաև սահմանում են խնդիրների լայն շրջան՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Օրինակ՝ Հնդկաստանում Հաշմանդամություն ունեցող անձանց մասին (հավասար հնարավորությունների, իրավունքների պաշտպանության և լիարժեք մասնակցության ապահովման) ակտը (1995) հաշմանդամության հարցերը կարգավորելու համար սահմանում է ծավալուն քաղաքականության շրջանակ և սահմանում է ազգային և պետական մակարդակում մի շարք մարմիններ, որոնք պետք է իրականացնեն դա, կարգավորում է հաշմանդամության կանխարգելման և վաղ հայտնաբերման հարցը, աշխատանքային հարաբերություններում և կրթության ոլորտում հավասարության խնդիրը, ներառում է նաև դրական քայլերը, սոցիալական ապահովությունը, մատչելի տրանսպորտը և շինությունները, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հաստատությունների ճանաչումը, հաշմանդամության հարցերով ուսումնասիրությունների անցկացումը և այլ հարցեր:

Նույնիսկ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին ընդհանուր օրենքը հավանաբար չի անդրադառնա հաշմանդամություն ունեցող անձանց հավասարության հետ կապված մի շարք խնդիրների: Օրինակ՝ հաշվի առնելով սոցիալական ապահովության և սոցիալական աջակցության, աշխատողների հատուցման, տրանսպորտային չափանիշների, շինարարական չափանիշների և այլ հարցերի ակնհայտ առանձնահատկությունը, առավել նպատակահարմար է այդ հարցերը կարգավորել այլ օրենքներով: Որտեղ արդեն իսկ առկա է խտրականության այլ տեսակներն արգելող օրենսդրություն, առավել ճիշտ կլինի փոփոխել գործող օրենսդրությունը և ներդնել հաշմանդամությունը որպես արգելված խտրականության հիմք: Առնվազն անհրաժեշտ է ապահովել, որ կոնվենցիայի «հաշմանդամություն» ընկալումը և «հաշմանդամության պատճառով խտրականություն» հասկացությունն ընդհանուր առմամբ ամբողջությամբ արտացոլված լինեն խտրականության արգելման վերա-

Ի՞նչ պետք է անի խորհրդարանը ապահովելու համար, որ կոնվենցիան ներմուծվի ազգային օրենսդրության մեջ

- ճանաչել հաշմանդամություն ունեցող կանանց, տղամարդկանց և երեխաների քաղաքացիական, մշակութային, քաղաքական և սոցիալական իրավունքները երկրի բարձրագույն օրենքով (սահմանադրություն կամ հիմնական օրենք):
 - ▶ Վերանայել սահմանադրության կամ հիմնական օրենքի դրույթները և այն պաշտպանությունը, որը տրամադրվում է հաշմանդամություն ունեցող անձանց:
 - ▶ Սահմանել հավասարության ընդհանուր երաշխիքներ:
 - ▶ Վրճելել հաշմանդամության օգտագործումը որպես խտրականության հիմք:
 - ▶ Սահմանել հատուկ դրույթներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին:
 - ▶ Վերանայել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ օգտագործվող լեզուն:
- Ընդունել ազգային օրենք, որը կներմուծի կոնվենցիայի բովանդակությունը և նույնիսկ դրա ամբողջական տեքստը՝ սահմանելով, որ այն կիրառելի է դատարաններում:
- Ընդունել կիրարկման կարգի վերաբերյալ օրենսդրություն: Կախված գործող օրենսդրությունից՝ երկիրը կարող է ընդունել կամ փոփոխել՝
 - ▶ խտրականության արգելման մասին համապարփակ, ընդհանուր օրենք, որը կարգելի հաշմանդամության օգտագործումը որպես խտրականության հիմք հանրային կամ մասնավոր կյանքում,
 - ▶ խտրականության արգելման մասին օրենքներ տարբեր բնագավառներում, ինչպիսիք են աշխատանքը, կրթությունը, արդարադատության մատչելիությունը, ներառյալ հաշմանդամությունը որպես խտրականության արգելված հիմք, և/կամ
 - ▶ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հավասարության մասին օրենք, որը կարգելի հաշմանդամությունը խտրականության հիմք համարելը և կսահմանի հաշմանդամության հարցերի հետ կապված լայն շրջանակ,
- ապահովել օրինաստեղծ գործունեության մակարդակում հաշմանդամություն ունեցող անձանց և/կամ նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ խորհրդակցելու մեխանիզմներ,
- գործող և նոր նախագծվող օրենսդրության մեջ վերանայել հաշմանդամություն ունեցող անձանց առնչությամբ կիրառվող լեզուն:

բերյալ օրենքներում: Երբ գործող օրենսդրությունը կիրառվում է միայն կոնվենցիայով կարգավորվող որոշ հարցերի վրա, այդ դեպքում կարիք կլինի նոր օրենսդրության, ապահովելու համար, որ հաշմանդամության պատճառով խտրականությունից պաշտպանությունը կիրառվի բոլոր ոլորտներում: Հնարավորություն կա նաև նախատեսել օրենքի մշտադիտարկման և կիրառման պարտավորություն, որը կսահմանվի նոր օրենսդրությամբ և կվերապահվի գործող կառույցներին՝ ապահովելով, որ հաշմանդամություն ունեցող անձինք անդամակցեն դրանց, և որ այդ կառույցները բավարար փորձ ունենան հաշմանդամության հարցերում:

Օրենսդրական միջոցների բովանդակությունը

Առանցքային տարրեր

Կան մի շարք առանցքային տարրեր, որոնք անհրաժեշտ են օրենսդրության կիրառման համար, լինի մեկ կամ մի քանի առանձին օրենքներ: Օրենսդրությունը պետք է՝

- Հստակորեն հղում կատարի կոնվենցիային կամ կոնվենցիայի այն դրույթին, որ հաշմանդամության հասկացությունը դեռևս զարգանում է, ինչպես նաև «խտրականությունը հաշմանդամության պատճառով», «խելամիտ հարմարանքներ» և կոնվենցիայում բացահայտված այլ կարևոր եզրույթներին,
- արգելել խտրականությունը հաշմանդամության հիմքով՝ կոնվենցիայով նախատեսված բոլոր ոլորտներում,
- առանձնացնի կառավարության տարբեր մակարդակներում, ինչպես նաև ոչ պետական ոլորտում պարտավորություն կրողներին,
- իրավունք տալ անհատներին կամ խմբերին՝
 - ▶ խտրականության վերաբերյալ բողոքներ ներկայացնել,
 - ▶ հասնել այդ բողոքների քննությանը,
 - ▶ օգտվել համապատասխան իրավական միջոցներից:
- Ապահովել, որ անկախ կառույցները՝
 - ▶ լսեն խտրականության պարբերական դեպքերի մասին բողոքները և անհատական դեպքերը,
 - ▶ քննեն և զեկույցներ ներկայացնեն այդ բողոքների մասին,
 - ▶ փնտրեն իրավական պաշտպանության համակարգային միջոցներ և փոփոխություններ կատարեն համապատասխան իրավական և այլ խողովակներով:

Կիրարկվող օրենսդրության կապը կոնվենցիայի հետ

Կիրարկվող օրենսդրությունը պետք է ներառի կոնվենցիայի եզրույթները կամ հատուկ հղում կատարի դրանց, որպեսզի հստակորեն ցույց տա, որ օրենքները պետք է մեկնաբանվեն կոնվենցիայի տառին և ոգուն համապատասխան:

Կոնվենցիան հենվում է այն ընկալման վրա, որ հաշմանդամությունը հետևանք է անձի և իր շրջապատի փոխազդեցության, և որ հաշմանդամությունը որոշակի խանգարումների հետևանքով անձի մեջ նստած մի բան չէ: Այս ընկալումը կարևոր նշանակություն ունի օրենսդրության համար՝ կոնվենցիան կիրարկելու առումով, հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիարժեք իրականացմանը խոչընդոտող արգելքների բացահայտման և արդյունավետ միջոցների սահմանման հարցում: Խորհրդարանականները կարող են ունենալ փորձագետների, հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ հաշմանդամության խնդիրների վերաբերյալ խորհրդակցելու ցանկություն, որպեսզի թարմացնեն իրենց պատկերացումները հաշմանդամության բնույթի ու ձևերի մասին և այն ուղիների մասին, որոնցով կարող են վերացվել մասնակցությանը խանգարող սոցիալական պատճենները:

Հաշմանդամության այն տեսակները, որոնց պետք է անդրադարձ կատարվի օրենսդրությունում

Կոնվենցիան պարունակում է հաշմանդամության տեսակների ոչ սպառիչ ցուցակը, որոնք պետք է արտացոլվեն օրենսդրությունում, այլ կերպ ասած՝ այն սահմանում է նվազագույնը: Կոնվենցիան բնութագրում է հաշմանդամություն ունեցող անձանց որպես «անձինք, ովքեր երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով»:

Այս բնորոշումը չի սպառում հաշմանդամության տեսակները, որոնք պաշտպանվում են կոնվենցիայով, հաշմանդամության այլ տեսակները, ինչպիսին է կարճատև հաշմանդամությունը, նույնպես կարող են լինել կոնվենցիայի ազդեցության ոլորտում և դրանով իսկ լինել առանձին պետությունների օրենքների ազդեցության ոլորտում, հատկապես հաշմանդամության սոցիալական համատեքստի առումով: Քանի որ 4(4)-րդ հոդվածը ընդգծում է այն փաստը, որ կոնվենցիան նպատակ չունի ի չիք դարձնել կամ փոխարինել ազգային օրենքներով սահմանված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բարձր չափանիշները, այն ազատ է թողնում պետություններին ավելի լայն բնորոշում տալու հարցում: Պետությունից չի պահանջվում սահմանափակել իրենց սեփական բնորոշումները կոնվենցիայի 2-րդ հոդվածով նշված տեսակներով:

Ապացուցման բեռի տեղափոխումը խտրականության վերաբերյալ գործերով

Եվրոպական իրավունքի համաձայն՝ պատշաճ համարվեց ընդունել հատուկ դրույթներ՝ կապված խտրականության վերաբերյալ գործերով ապացուցման բեռի հետ, այդ թվում՝ հաշմանդամության հետ կապված խտրականության: Օրինակ՝ 2000 թ. նոյեմբերի 27-ի թիվ 2000/78/EC խորհրդի դիրեկտիվի 10-րդ հոդվածը, որը սահմանում է աշխատանքային հարաբերություններում և զբաղվածության ոլորտում հավասար վերաբերմունքի ընդհանուր շրջանակը, սահմանվում է հետևյալ՝

«Ապացուցման բեռը

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են ըստ իրենց ազգային դատական համակարգերի ապահովելու, որ երբ անձինք, որոնք իրենց տուժող են համարում հավասար վերաբերմունքի սկզբունքը իրենց նկատմամբ չկիրառվելու հիմքով, դատարան կամ այլ իրավասու ատյաններ կայացնեն ուղղակի կամ անուղղակի խտրականություն ենթադրող փաստերը, պատասխանող կողմն ապացուցի, որ տեղի չի ունեցել հավասար վերաբերմունքի սկզբունքի խախտում:

2. 1-ին կետը չպետք է խոչընդոտի մասնակից պետություններին սահմանելու ապացուցման այնպիսի կանոններ, որոնք ավելի նպաստավոր են հայցվորների համար»:

«Անհրաժեշտ հնարավորությունները»՝ որպես օրենսդրության անկյունաքար

Կոնվենցիան սահմանում է, որ անձի կողմից «անհրաժեշտ հնարավորություններից» օգտվել չկարողանալը հանգեցնում է հաշմանդամության պատճառով խտրականության: Հետևաբար, խտրականության ցանկացած օրենսդրական ձևակերպում պետք է ներառի անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը: Հատուկ հղում պետք է կատարվի «անհրաժեշտ հնարավորություններ» հասկացությանը, որը նախատեսված է կոնվենցիայի 2-րդ հոդվածում:

«Անհրաժեշտ հնարավորությունները» նաև հայտնի են որպես խելամիտ հարմարություններ կամ միջոցներ ստեղծելու կամ հարմարեցնող արդյունավետ փոփոխություններ կատարելու պարտավորություն: Անձին «անհրաժեշտ հնարավորությունների» հնարավորություն տալը նշանակում է, օրինակ՝ աշխատանքային միջավայրում, կրթական հաստատությունում, առողջապահական հիմնարկում կամ փոխադրամիջոցներում հարմարեցումներ կատարելը, որպեսզի վերացվեն այն արգելքները, որոնք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձին այլ անձանց հետ հավասար միջոցառումներին մասնակցելու, ծառայություններ ստանալու հարցում: Աշխատանքային հարաբերությունների դեպքում այն կարող է ներառել շինությունների ֆիզիկական փոփոխություններ, սարքավորումների

ծեռքբերում կամ վերափոխում, ընթերցողի կամ թարգմանչի ապահովում կամ հանապատասխան ուսուցում և վերահսկողություն, ինչպես նաև թեստավորման կամ գնահատման գործընթացի հարմարեցում, աշխատանքային ժամերի փոփոխություն կամ տվյալ պաշտոնի հետ կապված պարտականությունների մի մասն այլ անձի վրա դնել:

Ի՞նչ անդրադարձ է կատարվում «անհրաժեշտ հնարավորություններին» տարբեր երկրներում

Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին 1990 թ. ակտը, 42 USC §121112

(ա) Ընդհանուր կանոն

Ակտով նախատեսված որևէ անձ չի կարող հաշմանդամության հիմքով խտրականություն դրսևորել հանապատասխան որակավորում ունեցող հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ՝ կապված աշխատանքի ընդունվելու գործընթացների, նրա աշխատուժը վարձելու, նրա առաջխաղացման կամ ազատման, հատուցում տալու, աշխատանքային ուսուցման կամ աշխատանքային հարաբերություններում առկա այլ պայմանների և առավելությունների հետ:

(բ) Կառուցվածք

Տվյալ բաժնի (ա) ենթաբաժնի համաձայն՝ «խտրականություն դրսևորել» հասկացությունը ներառում է.

...

(5) (Ա) խելամիտ հարմարություններ չստեղծելը ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումներ ունեցող կամ այլ կերպ՝ մասնագիտական որակավորում ունեցող հաշմանդամ անձի համար, որն աշխատող է կամ դիմել է աշխատանքի համար, եթե տվյալ հիմնարկը չհիմնավորի, որ այդ հարմարությունները կխթարեն իր բիզնեսի բնականոն ընթացքը կամ

(Բ) խելամիտ հարմարություններ չստեղծելը ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումներ ունեցող կամ այլ կերպ՝ մասնագիտական որակավորում ունեցող հաշմանդամ անձի համար, որն աշխատող է կամ դիմել է աշխատանքի համար, եթե մերժումը բխում է աշխատատեղերի հարմարեցման անհրաժեշտությունից...»:

Իսպանիայի 2003 թ. Հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների հավասարության, նրանց նկատմամբ խտրականության արգելքի և հանընդհանուր մատչելիության մասին օրենքն ապահովում է խելամիտ հարմարություններ (*Ajuste razonable*): *Ajuste razonable*-ն բնորոշվում է որպես «միջոցներ, որոնք ֆիզիկական, սոցիալական և վերաբերմունքի հետ կապված միջավայրը հարմարեցնում են հաշմանդամություն ունեցող անձի հատուկ կարիքներին, և որոնք արդյունավետ ու գործնականորեն և առանց անհամաչափ դժվարություններ ենթադրելու մյուս քաղաքացիների հետ հավասար հիմունքներով ապահովում են հաշմանդամություն ունեցող անձի հասանելիությունը կամ մասնակցությունը» (կետ 7գ):

Միացյալ Թագավորության Հաշմանդամության պատճառով խտրականության արգելման մասին 1995 թ. ակտը ամրագրում է գործատուների պարտականությունը «հարմարություններ ապահովելու» ուղղությամբ (բաժին 6(1)): Այս պարտականությունը գործում է, երբ գործատուի «ցանկացած կարգավորում» կամ «ցանկացած ֆիզիկական տարր կամ շինություն» «դնում է հաշմանդամություն ունեցող անձին էական անբարենպաստ վիճակի մեջ հաշմանդամություն չունեցող անձանց համեմատությամբ: Նման դեպքերում «գործատուի պարտականությունն է այնպիսի քայլեր ձեռնարկել, որպիսիք անհրաժեշտ են բոլոր հանգամանքներում կանխելու համար նման կարգավորումների կամ տարրերի կիրառումը: 6(3)-րդ ենթաբաժինն առանձնացնում է այն քայլերի օրինակները, որոնք գործատուն կարող է ձեռնարկել իր պարտականությունը կատարելու համար, դրանք են՝

- ▶ շինությունները,
- ▶ հաշմանդամություն ունեցող անձանց որոշ պարտականությունները դնել այլ անձանց վրա,
- ▶ հաշմանդամություն ունեցող անձին տեղափոխել առկա թափուր տեղում աշխատելու համար,
- ▶ փոփոխել նրա աշխատանքային պայմանները,
- ▶ նշանակել նրան աշխատանքի այլ աշխատավայրում,
- ▶ թույլ տալ նրան աշխատանքային ժամերին բացակայել վերականգնման, բժշկական ստուգման կամ բուժման նպատակով,
- ▶ անցկացնել նրա համար ուսումնական դասընթացներ կամ կազմակերպել դրանց անցկացումը,
- ▶ ձեռք բերել կամ փոփոխել սարքավորումները,
- ▶ փոփոխել ուղեցույցները կամ տեղեկագրերը,
- ▶ փոփոխել թեստավորման և գնահատման գործընթացները,
- ▶ ապահովել ընթերցող կամ թարգմանիչ,
- ▶ ապահովել վերահսկողությունը:

Համաձայն Հաշմանդամություն ունեցող անձանց մասին Ֆիլիպինների մեծ խարտիայի՝ աշխատանքային հարաբերությունների ենթատեքստում խելամիտ հարմարություններ հասկացությունը ներառում է «(1) աշխատողների կողմից օգտագործվող առկա սարքավորումների կատարելագործում, որպեսզի դրանք հեշտությամբ մատչելի և օգտագործելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց կողմից, և (2) աշխատանքային պլանների փոփոխություն, թափուր աշխատատեղում վերանշանակում, սարքավորումների կամ պարագաների ձեռքբերում կամ փոփոխում, համապատասխան քննությունների, ուսումնական նյութերի կամ կազմակերպության քաղաքականության, կանոնների և կանոնակարգերի, լրացուցիչ օգնության և ծառայությունների և այլ համանման հարմարություն-

ների ձեռքբերում կամ փոփոխում հաշմանդամություն ունեցող անձանց համար» (բաժին 4(ը)):

Հանրային ծառայությունների և հանրային շինությունների վերաբերյալ դրույթների հետ կապված Հաշմանդամություն ունեցող անձանց մասին մեծ խարտիան «խտրականություն» հասկացության մեջ ներառում է նաև «քաղաքականության, պրակտիկայի կամ գործողությունների մեջ խելամիտ փոփոխություններ չկատարելը, երբ դրանք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց համապատասխան ապրանքներով, ծառայություններով, սարքավորումներով, արտոնություններով, առավելություններով կամ շինություններով ապահովելու համար, մինչև կազմակերպությունը ցույց չտա, որ նման փոփոխությունների կատարումը փոխում է ապրանքների, հարմարանքների, ծառայությունների, արտոնությունների, առավելությունների կամ շինությունների բնույթը» (բաժին 36 (2)):

Որոշ երկրներում օրենքները նաև կարող են պահանջել հաշմանդամության վերաբերյալ իրազեկմանը նպաստող ռազմավարություններ, որոնց համաձայն պետական մարմիններից կարող է պահանջվել նախապատվությունը տալ այն սարքավորումներին, որոնք լրիվ մատչելի են կամ հիմնված են ներառական մոտեցման վրա, կամ նույնը կարող է պահանջվել նաև ծառայություններ մատուցող այն կազմակերպություններից, որոնց աշխատուժի մեջ որոշակի տոկոս են կազմում հաշմանդամություն ունեցող անձինք:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ իրազեկմանը նպաստող ռազմավարությունները ԱՄՆ-ում

Որոշ երկրներում օրենսդրությունը պահանջում է կառավարությունից պետական գնումների ժամանակ նախապատվությունը տալ այն սարքավորումներին և տեխնոլոգիաներին, որոնք համապատասխանում են մատչելիության համընդհանուր և ներառական նշանակության չափանիշներին: Օրինակ՝ ԱՄՆ 1973 թ. 29 U.S.C «794 (դ) Վերականգնման ակտի 508-րդ բաժինը սահմանում է՝

«§ 794 (դ) ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

(ա) Դաշնային դեպարտամենտների և գործակալությունների պահանջներ

(1) Մատչելիություն

(Ա) Էլեկտրոնային և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում, մատակարարում և ձեռքբերում

Էլեկտրոնային և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործման, մատակարարման, ձեռքբերման և օգտագործման ժամանակ յուրաքանչյուր դաշնային դեպարտամենտ կամ գործակալություն, ներառյալ ԱՄՆ փոստային ծառայությունը (քանի դեռ դա նրանց վրա չի դրել անհամաչափ բեռ), պետք է ապահովի, որ էլեկտրոնային և տեղեկատվական տեխնոլոգիաները, անկախ դրանց տեսակից, հնարավորություն տան՝

- (i) դաշնային ծառայող հանդիսացող հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիություն ունենալ տվյալներին և տեղեկատվությանը

կամ օգտվել դրանցից նույն կերպ, ինչ հաշմանդամություն չունեցող դաշնային ծառայողները,

(ii) հաշմանդամություն ունեցող այն անձինք, ովքեր հանրության անդամներ են դաշնային դեպարտամենտներից կամ գործակալություններից տեղեկատվություն կամ ծառայություններ ստանալիս, մատչելիություն ունենան այդ տվյալներին և տեղեկատվությանը կամ օգտագործեն դրանք նույն կերպ, ինչ հաշմանդամություն չունեցող հանրության անդամները:

(Բ) Այլընտրանքային միջոցներ

Երբ էլեկտրոնային և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործումը, մատակարարումը, ձեռքբերումը և օգտագործումը, որը համապատասխանում է մատչելիության հանձնաժողովի կողմից 2-րդ կետի համաձայն հրապարակված չափանիշներին, չափազանց մեծ բեռ է դնում, ապա դաշնային դեպարտամենտը կամ գործակալությունը 1-ին կետի տիրույթում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց պետք է ապահովի տեղեկատվությամբ և տվյալներով՝ օգտագործելով մատչելիության այլընտրանքային միջոցներ, որոնք հնարավորություն կտան անհատներին օգտագործել այդ տեղեկատվությունը և տվյալները....»:

Մինչ հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները բավարարող հարմարությունները պահանջվում են կոնվենցիայով, այդ պահանջը մեկն է՝ խելամիտ հարմարություններ: Եթե պահանջված հարմարությունները անհամաչափ և չափազանց մեծ բեռ կդնեն տվյալ անձի կամ կազմակերպության վրա, ապա այդ հարմարությունները չափահովվելը չի դիտվի խտրականություն: Մի շարք երկրներում օրենսդրությունը սահմանում է այն գործոցները, որոնք պետք է հաշվի առնվեն, երբ գնահատվում է պահանջվող հարմարությունների անհամաչափ բեռ դնելու հարցը: Դա ներառում է փոփոխությունների կիրառական նշանակությունը, ծախսերը, բնույթը, չափը և տվյալ կազմակերպության ռեսուրսները, ֆինանսական այլ աջակցության հնարավորությունը, աշխատանքային առողջապահության և անվտանգության կանոնների ներառումը և այդ կազմակերպության գործունեության վրա ազդեցությունը:

Անհամաչափ կամ չափազանց մեծ բեռ

Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների, խտրականության արգելքի և համընդհանուր մատչելիության մասին Իսպանիայի 2003 թ. օրենքը, որն ապահովում է խելամիտ հարմարություններ (Ajuste razonable), օգտագործում է «անհամաչափ բեռ» հասկացությունը (carga desproporcionada): 7-րդ հոդվածը սահմանում է. «պարզելու համար, թե արդյոք բեռը համաչափ է, թե՞ ոչ, պետք է հաշվի առնվի այդ միջոցի գինը, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ այն խտրական ազդեցությունը, որը կառաջանա նշված միջոցը չկիրառելու դեպքում, այն անձի, կազմակերպության կամ տնտեսավարող սուբյեկտի բնույթը և կառուցվածքը, որը պետք է ներդնի այդ միջոցները, պետք է հաշվի առն-

վեն նաև պաշտոնական ֆինանսավորում կամ այլ աջակցություն ստանալու հնարավորությունները»:

Հաշմանդամության պատճառով խտրականության արգելման մասին Միացյալ Թագավորության ակտի համաձայն՝ գործատուն խտրականություն է դրսևորում հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ, եթե առկա են երկու պայման. «(ա) նա չի կատարում 6-րդ բաժնում նշված պարտականությունը [խելամիտ հարմարություններ ստեղծելը], որը նրա վրա դրված է հաշմանդամություն ունեցող անձանց կապակցությամբ, և (բ) նա չի ապացուցում, որ իր այդ պարտականությունը չկատարելը արդարացված է»: Ակտի 6(4)-րդ բաժինը թվարկում է այն առանցքային գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն պարզելու համար՝ արդյոք գործատուի համար նպատակահարմար էր առանձին միջոցների կիրառումը, որպեսզի նա կատարած լինի խելամիտ հարմարություններ ստեղծելու՝ իր պարտականությունը՝

- (ա) այն ծավալը, որով միջոցների ձեռնարկումը կունենա համապատասխան ազդեցություն,
- (բ) այն ծավալը, որը գործատուի համար իրագործելի է միջոցների ձեռնարկելու առումով,
- (գ) ֆինանսական և այլ ծախսերը, որ միջոցի կիրառման հետ կապված կկրի գործատուն, և այն ծավալը, որով կխաթարվի նրա գործունեությունը միջոցը ձեռնարկելու հետևանքով,
- (դ) գործատուի ֆինանսական և այլ ռեսուրսների ծավալը,
- (ե) գործատուի հնարավորությունը ստանալ ֆինանսական կամ այլ աջակցություն՝ միջոցը ձեռնարկելու կապակցությամբ:

Ավստրալիայի 1992 թ. խտրականության արգելման ակտի համաձայն՝ գործատուները, կրթական հաստատությունները և այլք պետք է ստեղծեն «խելամիտ հարմարություններ», քանի դեռ դրանք չեն առաջացրել չարդարացված դժվարություններ. պետք է հաշվի առնվեն կոնկրետ գործով բոլոր անհրաժեշտ հանգամանքները» ներառյալ՝

- ▶ տվյալ անձի կողմից ստացվելիք շահույթի կամ կրելիք վնասի բնույթը,
- ▶ տվյալ անձի հաշմանդամության վրա եղած ազդեցությունը,
- ▶ չարդարացված դժվարությունների հարցով դիմելու համար պահանջվող ծախսերի և ֆինանսական այլ հանգամանքների գնահատումը,
- ▶ ծառայություններ մատուցելու կամ հարմարությունները հասանելի դարձնելու դեպքում 64-րդ հոդվածով նախատեսված գործողությունների ծրագրի համձնումը համձնաժողովին:

Կապված գործատուի ծախսերի հետ՝ Ավստրալիայի մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների համձնաժողովը սահմանում է, որ ուշադրություն

պետք է դարձվի ինքնարժեքին (կամ եկամուտներին), որոնք հաշվարկելի են և ողջամտորեն կարող են հանգեցնել գործատուի ոչ միայն ուղղակի կամ նախնական, այլև բրուտո ծախսերի: Սա կարող է պահանջել հետևյալ հանգամանքների հաշվառումը՝

- ▶ ուղղակի ծախսեր,
- ▶ ցանկացած հաշվանցվող հարկեր, սուբսիդիաներ կամ ֆինանսական օգուտներ, որոնք կիրառելի են՝ կապված հարմարությունների ստեղծման կամ հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքի հետ,
- ▶ անուղղակի ծախսեր և/կամ օգուտներ, այդ թվում՝ կապված տվյալ աշխատատեղի, այլ աշխատողների և ձեռնարկության աշխատանքի արդյունավետության հետ,
- ▶ վաճառքի, եկամուտների կամ հաճախորդների սպասարկման ծառայության արդյունավետության հետ կապված ցանկացած աճ կամ անկում,
- ▶ ինչ չափով են հարմարությունների ստեղծման հետ կապված լրացուցիչ ծախսերը գերազանցում հաշմանդամություն չունեցող աշխատողների համար ապահովվող սարքավորումների կամ հարմարությունների համար կատարվող ծախսերը,
- ▶ որքանով են այդ հարմարությունները պահանջվում այլ կիրառվող օրենքներով, չափանիշներով կամ համաձայնագրերով,
- ▶ հարմարություններ պահանջող անձի համապատասխան գիտելիքները, ուսուցումը և փորձը:

Բացի այդ, հարմարություններ ստեղծելու հետ կապված ֆինանսական ծախսերը և օգուտները հաշվի առնելիս, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձին հավասար հնարավորություններ, վերաբերմունք կամ մասնակցություն ապահովելիս պետք է հաշվի առնվի մեկ հանգամանք ևս՝

- ▶ կոնկրետ հարմարությունների ցանկացած օգուտ կամ վնաս, որը կապված կլինի այլ աշխատողների կամ պոտենցիալ աշխատողների, գնորդների կամ հաճախորդների կամ այլ անձանց մատչելիության կամ հնարավորությունների հետ, որոնք նույնպես հավանականորեն ազդեցություն կկրեն,
- ▶ կոնկրետ հարմարությունների օգուտը կամ վնասը՝ կապված ձեռնարկությունում կամ աշխատավայրում աշխատանքի արդյունավետ կազմակերպման հետ, մասնավորապես աշխատողների թիվը, աշխատանքի տարածքային կազմակերպումը, կատարվելիք աշխատանքի բնույթը, հաճախորդների պահանջները, աշխատուժի պլանավորման կարիքը, «ժամանակի

ցանկացած կորուստ» կամ հարմարեցման հետևանքով արտադրության ընդհատում, ցանկացած այլ գործոն, որը կազդի արտադրողականության, արդյունավետության, հաջողության և որոշ դեպքերում՝ նաև ձեռնարկության մրցունակության վրա:

- ▶ արդյոք հարմարեցումը կառաջացնի՞ աննպատակահարմար պահանջներ այլ աշխատողների համար,
- ▶ հարմարությունների ստեղծման դեպքում ցանկացած օգուտի կամ վնասի բնույթը և ազդեցության հավանականությունը ցանկացած անձի առողջության և անվտանգության վրա,
- ▶ հարմարությունների ստեղծման արդյունքում բնապահպանական ցանկացած օգուտի կամ վնասի բնույթը և հավանականությունը,
- ▶ արդյոք հարմարությունը կնպաստի՞ կամ կհակասի՞ այլ օրենքների, չափանիշների կամ համաձայնագրերի կիրառելի դրույթներին, և ցանկացած այլ օգուտի կամ վնասի բնույթը և հավանականությունը հարմարությունը ներդնելու արդյունքում:

Հատուկ միջոցներ

Օրենսդրությունը չպետք է սահմանափակվի խտրականությունն արգելելու հարցում, այն նաև կարող է պահանջել պետությունից կամ մասնավոր հատվածի ներկայացուցիչներից ձեռնարկել դրական միջոցներ: Կոնվենցիայի 5(4)-րդ հոդվածը սահմանում է, որ որպեսզի ապահովվի այլ անձանց հետ հավասարությունը, երբեմն կարող է անհրաժեշտություն առաջանալ հատուկ աջակցություն տրամադրել հաշմանդամության առանձին տեսակներ ունեցող անհատներին կամ անձանց: Դա կարող է լինել երկու ձևով՝

■ Հարունակական և մշտական միջոցներ

Սրանք հատուկ միջոցներ են, որոնք պետք է շարունակական լինեն և հնարավորինս մշտական: Օրինակ՝ որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձի շարժունակությունը այլ անձանց հետ հավասար, կառավարությունը կարող է հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել ճամփորդական սուբսիդիաներ՝ հնարավորություն տալով նրանց օգտվել տաքսիներից:

■ Ժամանակավոր հատուկ միջոցներ

Սրանք միջոցներ են, որոնք ընդունվում են ուղղելու համար հաշմանդամություն ունեցող անձանց նախկին անբարենպաստ վիճակը, բայց որոնք կարող են կիրառվել միայն որոշակի ժամանակահատվածով: Օրինակ՝ կառա-

վարությունը կարող է սահմանել նպատակներ կամ քվոտաներ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի համար այն սպասումով, որ քվոտաները մի օր կհանվեն, իսկ նպատակը կլինի իրականացված:

Թե՛ շարունակական և թե՛ ժամանակավոր հատուկ միջոցները թույլատրվում են կոնվենցիայով և չեն պարունակում խտրականություն, ինչպես սահմանված է կոնվենցիայով: Իրականում հատուկ միջոցների երկու տեսակներն էլ անհրաժեշտ են հավասարության հասնելու համար, և այդ իսկ պատճառով մասնակից պետությունը պարտավորված կլինի ընդունել մի շարք հատուկ միջոցներ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում:

Երբեմն, երբ նման հատուկ միջոցներն ընդունվում են շտկելու համար պատմականորեն ձևավորված և շարունակվող անբարենպաստ վիճակը, որի մեջ ապրում են հասարակության մի խումբ անդամներ, այդ միջոցներին մարտահրավեր են նետում այն անձինք, ովքեր չեն պատկանում այդ խմբին այն հիմքով, որ նրանք տարբեր են: Խորհրդարանները պետք է ապահովեն, որ հավասարության ցանկացած սահմանադրական կամ օրենսդրական երաշխիք հստակ նշի, որ կոնվենցիայում նախատեսված հատուկ միջոցներն իրավաչափ են ազգային օրենքներով և ենթակա չեն կասկածի այլ հավասարության երաշխիքներով այն անձանց կողմից, որոնք չունեն հաշմանդամություն, բայց որոնք պնդում են, որ իրենց անտեսելը իրենց հավասար իրավունքների խախտում է:

Մասնավոր հատվածը կարգավորելու մասնակից պետությունների պարտավորությունը

- Մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերացնելու համար հաշմանդամության հիմքով խտրականությունը, որը կդրսևորվի ցանկացած անձի, կազմակերպության կամ մասնավոր ձեռնարկության կողմից (հոդված 4(1)(ե)):
- Մասնակից պետությունները պարտավորվում են աջակցել զանգվածային լրատվության բոլոր միջոցներին ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց սույն կոնվենցիայի նպատակներին համապատասխան եղանակով (հոդված 8(2)(գ)):
- Մասնակից պետությունները նաև համապատասխան միջոցներ են ձեռնարկում ապահովելու համար, որ հանրությանը հասանելի կամ տրամադրվող հարմարություններ կամ ծառայություններ մատուցող մասնավոր ձեռնարկությունները հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող անձանց համար դրանց մատչելիության բոլոր կողմերը (հոդված 9(2)(բ)):
- Մասնակից պետությունները պահանջում են առողջապահության բնագավառի մասնագետներից ապահովել նույն որակի բուժօգնություն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչ մյուսներին՝ նաև հիմք ընդունելով հաշմանդամություն ունեցող անձանց ազատ և գիտակցված համաձայնությունը, մասնավորա-

պես բարձրացնելով նրանց իրազեկվածությունը մարդու իրավունքների, արժանապատվության, ինքնուրույնության և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների վերաբերյալ՝ հանրային և մասնավոր առողջապահության ներկայացուցիչների ուսուցման և բարոյական չափորոշիչների տարածման միջոցով (հոդված 25(1)(դ)):

- Մասնակից պետությունները երաշխավորում և աջակցում են աշխատանքի իրավունքի իրականացմանը, ներառյալ նրանց համար, ովքեր հաշմանդամություն են ձեռք բերել աշխատանքի ընթացքում՝ ձեռնարկելով համապատասխան քայլեր, այդ թվում՝ օրենսդրական, նպաստելու համար հաշմանդամություն ունեցող անձին աշխատանքի տեղավորելը մասնավոր հատվածում, համապատասխան քաղաքականության և միջոցառումների միջոցով, որոնք կարող են ներառել գործողությունների հաստատուն ծրագրեր, խթանիչ և այլ միջոցառումներ (հոդված 27(1)(ը)):

Խորհրդարաններն առանձնակի դեր ունեն նաև լայն հասարակության շրջանում հատուկ միջոցների անհրաժեշտության և հասարակության համար նրանց օգուտի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման հարցում: Օրենքները կարող են նաև կառավարության վարչություններից և նույնիսկ մասնավոր ձեռնարկություններից պահանջել տարեկան զեկույցներ ներկայացնել այն քայլերի վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Ձեկույցի պահանջը կարող է վերաբերել մի շարք հարցերի, ներառյալ գործնականում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության երաշխավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին, հաշմանդամություն ունեցող աշխատողների թվի ավելացման կամ հատուկ կարիքներ ունեցող հաշմանդամություն ունեցող հաճախորդներին տրամադրվող ծառայությունների կատարելագործման ուղղությամբ ձեռք բերած հաջողություններին:

Պետական իշխանությունների, մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից դրսևորվող խտրականությունը

Կոնվենցիայի առանցքային բաղադրյալներից մեկը այն դրույթն է, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է պաշտպանվեն թե՛ պետական և թե՛ մասնավոր ոլորտի ներկայացուցիչների կողմից դրսևորվող խտրականությունից:

Այդ իսկ պատճառով խտրականության արգելման և հավասար վերաբերմունքի սահմանման օրենքներ պետք է ընդունվեն կամ այլ օրենսդրական միջոցներ պետք է կիրառվեն մասնավոր անձանց, կառույցների և ընկերությունների, ինչպես նաև պետական պաշտոնյաների և մարմինների նկատմամբ:

Օրենսդրական բարեփոխումներ պահանջող առանձնահատուկ ոլորտներ

Կոնվենցիան սահմանում է մի շարք ոլորտներ, որոնք պահանջում են օրենսդ-

րական երաշխիքներ կամ պաշտպանություն: Կոնվենցիայի 12 (1)-րդ հոդվածը վերահաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց օրենքով այդպիսին ճանաչվելու իրավունքը, և 12(2)-րդ հոդվածը ճանաչում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն իրենց իրավունակությունը, ինչպես մյուսները: 12(3)-րդ հոդվածն ընդգծում է այն միջոցների անհրաժեշտությունը, որոնք աջակցելու են այդ իրավունակության անհրաժեշտությանը, մինչդեռ 12(4)-րդ հոդվածը կոչ է անում սահմանել երաշխիքներ՝ կանխելու համար այս իրավունքի չարաշահման արգելքը:

Քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունակությունը մերժելը բերել է նրանց իրավունքների աղաղակող խախտումների, օրենսդրական բարեփոխումների ցանկացած գործընթաց պետք է անդրադառնա այս հարցին առաջնահերթ կարգով: Խորհրդարանները պետք է քննարկեն գործող օրենքը պարզելու համար, թե կա՞ն արդյոք հաշմանդամություն ունեցող անձանց իրավունակության որևէ ձևական սահմանափակումներ, և արդյոք օրենքն ու պրակտիկան համապատասխանո՞ւմ են կոնվենցիային: Խորհրդարանները պետք է քննարկեն նաև այն հանգամանքը, որ թեև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունակությունը հարգվում է օրենքով, արդյոք այն հարգվո՞ւմ է նաև պրակտիկայում: Կոնվենցիան պետություններից հատկապես պահանջում է ձեռնարկել համապատասխան միջոցներ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող այն անձինք, ովքեր իրենց իրավունակությունն իրականացնելու համար օգնության կարիք ունեն, ստանան այդ օգնությունը:

Կոնվենցիան նաև պարունակում է այն ոլորտներին վերաբերող մի շարք երաշխիքներ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները մերժվել են և շարունակում են մերժվել: Դրանք ներառում են անձի ազատության և անվտանգության իրավունքը (հոդված 14) և տանը և դրսում խոշտանգումների, շահագործման, բռնությունների և չարաշահումների չենթարկվելու իրավունքը:

Պետությունը պետք է մանրակրկիտ վերանայի իր օրենքները և նրանց գործողությունը մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող անձանց ազատագրվումը, հատկապես մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում: Օրինակ՝ պետությունները պետք է հաշվի առնեն կոնվենցիայի շեշտադրումը հանրության ներսում անկախ ապրելու հանգամանքի վրա՝ ի հակառակ հարկադրված ինստիտուցիոնալացման: Պետությունները պետք է նաև վերանայեն այս երաշխիքները՝ կապված պարտադիր և հարկադիր բժշկական միջամտությունների հետ և պետք է ապահովեն օրենքներ և գործընթացներ՝ վերահսկելու այս օրենսդրության գործողությունը, հետաքննեն չարաշահման դեպքերը և անհրաժեշտության դեպքում դատապարտեն (հոդված 16 (4)):

Շարժումների լեզուն ճանաչող պետությունները

Ուզանդայի սահմանադրությունը հատուկ ճանաչում է ժեստերի լեզուն և դրա զարգացումը հովանավորելու պետության պարտավորությունը: Սահմանադրության 24-րդ հոդվածը ամրագրում է.

«Պետությունը պետք է աջակցի համրերի համար ժեստերի լեզվի զարգացմանը»:

Ֆինլանդիայի սահմանադրության (1995) 17-րդ բաժինը (Լեզվի և մշակույթի իրավունք) ամրագրում է.

«Շարժումների լեզուն օգտագործող և հաշմանդամության պատճառով թարգմանության և բացատրության կարիք ունեցող անձանց իրավունքները պետք է երաշխավորվեն օրենքով»:

1999 թ. **Վենեսուելայի Բոլիվարական Հանրապետության սահմանադրության 101-րդ հոդվածը** սահմանում է.

«Պետությունը երաշխավորում է մշակութային տեղեկատվության տրամադրումը, ստացումը և շրջանառությունը: Հեռուստատեսությունը պետք է ցուցադրի լուսագրեր և ապահովի թարգմանություն վենեսուելական մշանների լեզվով՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Այս պարտավորության պայմանները և տեսակները սահմանվում են օրենքով»:

Թաիլանդական շարժումների լեզուն 1999 թ. օգոստոսին Թաիլանդի թագավորական կառավարության անունից կրթության նախարարի ստորագրած որոշմամբ ճանաչվեց որպես «Թաիլանդի համր բնակչության ազգային լեզու»:

Նոր Զելանդիայի մշանների լեզվի մասին ակտը 2006 թ. մտավ ուժի մեջ: Այդ ստատուտը սահմանում է Նոր Զելանդիայի մշանների լեզվի (ՆՁՆԼ) պաշտոնական ճանաչումը, որը համր նորզելանդացիների առաջին կամ նախընտրած լեզուն է: Այդ ակտը ճանաչում էր համր մարդկանց լեզուն որպես միասնական նորզելանդական լեզու, և դա ՆՁՆԼ-ին խոսվող լեզուների հետ տալիս էր հավասար կարգավիճակ: Ակտը իրավունք էր տալիս իրավական գործընթացներում ներգրավված ցանկացած անձի օգտագործել ՆՁՆԼ-ն: Ակտը նաև ապահովում էր, որ համր հանրությունը պետք է խորհրդատվություն ստանա իր լեզվի վրա ազդող հարցերի վերաբերյալ, ներառյալ, օրինակ՝ ՆՁՆԼ-ի օգտագործմանը աջակցելը, որ ՆՁՆԼ-ն պետք է օգտագործվի պետական ծառայություններ մատուցելիս և հանրությանը տեղեկատվություն ներկայացնելիս և որ պետական ծառայությունները և տեղեկատվությունը համապատասխան միջոցներով պետք է հասանելի լինեն համր հանրությանը, ներառյալ ՆՁՆԼ-ի կիրառմամբ:

Ակտը նաև սահմանում է, որ կառավարության վարչությունները պետք է խելամիտ կիրառելիության սահմաններում ղեկավարվեն հանրության հետ նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ որոշակի սկզբունքներով (9-րդ հոդված): Այս հոդվածում ոչինչ չի մեկնաբանվում որպես համր հանրությանը այնպիսի արտոնությունների տրամադրում, որպիսիք չեն տրամադրվում ուրիշներին (հոդված 9(2)):

Պաշտպանության միջոցներ

1995 թ. **Հաշմանդամության պատճառով խտրականության արգելման հրամանագրի** համաձայն՝ հաշմանդամության պատճառով խտրականության վերաբերյալ Զոնկոնգի հատուկ վարչական չինական տարածքի շրջանային դատարան հայց ներկայացնելիս այդ դատարանն ունի ընդարձակ վերականգնողական լիազորություններ, որոնք 72-րդ բաժնի համաձայն ներառում են՝

- (ա) հայտարարել, որ պատասխանողը դրսևորել է այնպիսի վարքագիծ կամ ներգրավված է եղել դրա կատարմանը, որը իրավաչափ չէ համաձայն հրամանագրի, և պահանջել, որ պատասխանողը չկրկնի կամ չշարունակի նման անիրավաչափ վարքագիծը կամ գործողությունը,
- (բ) հանձնարարել, որ պատասխանողն իրականացնի հայցվորի կրած ցանկացած կորստի կամ վնասի վերականգնմանն ուղղված խելամիտ գործողություն կամ վարքագիծ,
- (գ) հանձնարարել, որ պատասխանողն աշխատանքի ընդունի հայցվորին կամ վերականգնի նրան աշխատանքում,
- (դ) հանձնարարել, որ պատասխանողն աջակցի հայցվորին,
- (ե) հանձնարարել, որ պատասխանողը հատուցի հայցվորին պատասխանողի վարքագծի կամ գործողության հետևանքով հայցվորի կրած ցանկացած կորստի կամ վնասի համար,
- (զ) հանձնարարել, որ պատասխանողը տուգանք վճարի հայցվորին կամ,
- (է) հրաման արձակել, որով լրիվ կամ մասնակի կամ կնքման պահից կամ հրամանագրով նախատեսված պահից անվավեր ճանաչվի ցանկացած համաձայնագիր կամ պայմանագիր, որը կհակասի սույն հրամանագրին:

Մտավոր սեփականության օրենքները և գրքերից, ֆիլմերից և այլ լրատվամիջոցներից օգտվելն ապահովելը

Մասնակից պետությունները պետք է քննարկեն մտավոր սեփականության վերաբերյալ իրենց օրենքները ապահովելու համար, որ դրանք չեն խոչընդոտում հաշմանդամություն ունեցող անձանց օգտվելու մշակութային պարագաներից: Մի շարք երկրներ ընդունել են այդպիսի օրենսդրություն ի կատարումն այլ միջազգային պարտավորությունների, ինչպիսիք են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության և Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրերը:

Նշանների ազգային լեզուն ճանաչող օրենսդրություն

Կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ճանաչել

շարժումների ազգային լեզուները և աջակցել դրանց: Սա հավանաբար կպահանջի որոշակի օրենսդրության կիրարկում:

Ազգային օրենքով նախատեսված բողոքարկման ընթացակարգերը

Օրենսդրությունը կարող է ապահովել, որ անհրավաչափ խտրականության ենթարկված անձը հնարավորություն ունենա օգտվելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից: Այդ միջոցները կարող են ներառել վնասների հատուցումը, նախկին վիճակը վերականգնելու պահանջը, խտրական գործողությունները դադարեցնելու և դրանք ապագայում կանխելու պահանջը, անձի իրավունքների իրականացման համար խելամիտ հարմարությունների ապահովումը, ներողությունը, ծավալուն վերականգնողական միջոցառումներ իրականացնելու պահանջը, ներառյալ դրական գործողությունները կամ այլ միջոցները:

Մի շարք երկրների խտրականության արգելման մասին օրենքների համաձայն՝ երբ բողոքողը ներկայացնում է փաստեր, որոնցից կարող է ենթադրվել խտրականության առկայություն, ապացուցման պարտականությունը դրվում է պատասխանողի վրա, որը պետք է ապացուցի, որ վերաբերմունքը կապված չի եղել խտրականության արգելված հիմքի հետ, կամ եթե կապված է եղել, ապա այն մտնում է խտրականության թույլատրվող բացառությունների մեջ: Սա դատավարական իրավունքի շատ կարևոր կողմ է, որին անհրաժեշտ է անդրադարձ կատարել՝ հաշվի առնելով այն դժվարությունները, որ հայցվորները հաճախ ունենում են խտրականության գործերով՝ խտրականության փաստի ուղղակի ապացույցներ ներկայացնելու հարցում (տե՛ս խտրականության արգելման վերաբերյալ օրենսդրության նկատմամբ տարբեր մոտեցումների վերաբերյալ նախորդ էջի աղյուսակը):

Կիրարկմանը նպաստող ընթացակարգային եղանակները

Այն դերը, որ խորհրդարանականները կարող են ունենալ վավերացումը նախապատրաստելու հարցում, այս ձեռնարկում քննարկվել է ավելի վաղ: Երբ պետությունը վավերացնում է կոնվենցիան կամ միանում է դրան, առաջ են գալիս նշանակալի պարտավորություններ, և օրենսդրությունը կարևոր դեր կարող է ունենալ այդ պարտավորությունների կատարման գործում: Կոնվենցիան ստորագրելուց և վավերացնելուց հետո որպես առաջին քայլ խորհրդարանականները պետք է՝

Իրականացնեն բազմակողմանի դիտարկում

Կոնվենցիայի 4(1)(բ)-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին «ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ օրենսդրության ընդունումը, փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու համար գործող այն

Կարևոր հարցեր, որոնց պետք է անդրադարձ կատարվի օրենսդրական միջոցառումների իրականացնելիս

- Ցանկացած օրենսդրություն պետք է հիմնված լինի այն մոտեցման վրա, որ՝
 - ▶ հաշմանդամությունը անձի և իր շրջապատի փոխազդեցության հետևանք է, և որ
 - ▶ հաշմանդամություն ունեցող անձինք այլ անձանց հետ հավասար հիմունքներով ունեն բոլոր քաղաքական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքները:
- Հանրային և մասնավոր հատվածների կողմից հաշմանդամության պատճառով խտրականությունը, այդ թվում նաև՝ խելամիտ հարմարություններ չտրամադրելը որպես խտրականություն արգելվում է:
- Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ներգրավված լինեն և մասնակցեն հասարակության բոլոր ասպարեզներում, ներառյալ՝
 - ▶ քաղաքական հանրային կյանքը (ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց հետ խորհրդակցություններ կոնվենցիայի, ինչպես նաև նրանց վերաբերող քաղաքականության և օրենքների կիրարկման վերաբերյալ, վերանայել ընտրական օրենքները և այլն)
 - ▶ մշակութային կյանքը, վերականգնողական միջոցառումներ, ժամանց և սպորտ,
 - ▶ կրթություն:
- Ֆիզիկական միջավայրը, տրանսպորտը, տեխնոլոգիաները, տեղեկատվությունը և հաղորդակցությունը, և հանրային ենթակառուցվածքները և ծառայությունները պետք է մատչելի լինեն:
- Պետք է ներդրվեն ժամանակավոր կամ մշտական բնույթի հատուկ միջոցներ՝ հավասարության հասնելու կամ այդ գործընթացն արագացնելու համար:
- Պետք է ապահովվի անհատների և խմբերի իրավունքը սկսել քաղաքացիական, քրեական և վարչական գործեր հաշմանդամության պատճառով խտրականության դեպքերի առիթով՝ ապահովելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներով:
- Հաշմանդամության տեսակների ցանկացած բնորոշում պետք է համապատասխանի կոնվենցիայի 2-րդ հոդվածին:
- Պետք է ապահովվի հաշմանդամություն ունեցող անձի գործունակությունը և իրավունակությունն ընդհանրապես, այդ թվում նաև՝ աջակցող միջոցները և անհրաժեշտ երաշխիքները:
- Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է օգտվեն արդարադատության մատչելիությունից, որից բխում է դատավարական բոլոր փուլերում ընթացակարգային հարմարություններ ստեղծելու անհրաժեշտությունը:
- Պետք է ստեղծվեն կոնվենցիայի կիրարկման մշտադիտարկումն իրականացնող ազգային մեխանիզմներ:

օրենքները, կանոնակարգերը, սովորույթները և գործելակերպերը, որոնցում առկա է խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ»: Համապատասխանաբար, պետության կողմից կոնվենցիայի մասնակից դառնալուց հետո հնարավորինս շուտ ձեռնարկվելիք ամենակարևոր քայլերից մեկը պետք է լինի գործող օրենսդրության բազմակողմանի վերանայումը՝ պարզելու, թե որքանով է այն համապատասխանում կոնվենցիային: Պետությունը կարող է նաև ձեռնարկել կոնվենցիայի կիրարկմանն ուղղված քաղաքական կամ օրենսդրական ցանկացած նոր միջոց: Օրենսդրական այս վերանայման և բարեփոխումների համար պետք նաև մշակել մանրամասն ժամանակացույց:

Նման բազմակողմանի վերանայումները, մասնավորապես, կարող են օգտակար լինել պետության համար, երբ այն պատրաստի կոնվենցիայով նախատեսված իր նախնական զեկույցը այն վավերացնելուց հետո երկու տարվա ընթացքում:

Նախնական զեկույցը կդառնա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման մեկնարկային հիմնակետը, ցույց կտա այն բնագավառները, որտեղ առաջնահերթ բարեփոխումների կարիք կա և կօգնի ստեղծելու ծրագիր իրավիճակը բարեփոխելու համար կշռադատված, պլանավորված և մշտադիտարկված ձևով:

Կան մի քանի եղանակներ, որոնցով կարող է իրականացվել վերանայումը: Կարող է ստեղծվել հատուկ անկախ և օրենսդրությամբ սահմանված մարմին, որը կիրականացնի վերանայումը և զեկույցներ կներկայացնի կառավարությանը, կամ այդ առաքելությունը կարող է վերապահվել արդեն իսկ գոյություն ունեցող մարմնի, ինչպիսիք են հավասարության հարցերի հանձնաժողովը, մարդու իրավունքների ազգային հանձնաժողովը, հաշմանդամության հարցերով կոմիտեն: Խորհրդարանը կարող է ստեղծել մի հանձնաժողով, որը կվերահսկի այդ գործընթացը կամ կարող է այդ առաքելությունը վերապահել իր արդեն իսկ գործող մարմիններից որևէ մեկին:

«Հարավային Աֆրիկան մեծ առաջընթաց է արձանագրել հաշմանդամության բնագավառում՝ ինքնաներկայացման և քաղաքական բարեփոխումների առումով: Այս կոնվենցիան, այնուամենայնիվ, կամրացնի և կապահովի այն, որ չնայած քաղաքական փոփոխությունների, երբ էլ դրանք լինեն, երկիրն ի վիճակի կլինի շարունակել հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունը և պատասխանատվություն կկրի նրանց և նրանց ընտանիքների առջև, ինչպես նաև կապահովի, որ նրանց վերաբերվեն որպես երկրի լիիրավ քաղաքացիների, ինչպես բոլոր մյուս հաշմանդամություն չունեցող նրանց հայրենակիցների դեպքում է»:

Յենրիետա Բագոպան-Չուլու,
խորհրդարանի անդամ

Կոնվենցիայի շրջանակը պետք է չափանիշ լինի, որով կչափվի հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց մարդու իրավունքներից օգտվելու մակարդակը: Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է լիարժեքորեն մասնակցեն գործընթացին և՛ որպես վերանայող մարմնի անդամներ, և՛ որպես օգնականներ: Վերանայումը չպետք է լինի մեկանգամյա միջոցառում: Այդ մարմնի վրա կա՛մ պետք է դրվի դիտարկման շարունակական պարտականություն, կա՛մ պետք է ապահովվի, որ որոշակի ժամանակահատվածը մեկ, օրինակ՝ 3-5 տարին մեկ, իրականացվի իր առաջարկությունների և դիտողությունների իրականացման նկատմամբ անկախ վերանայում:

Ապահովեն բոլոր օրենքների համապատասխանությունը կոնվենցիային

Նոր օրենքների և կարգավորումների համապատասխանությունը կոնվենցիային և դրա նպատակներին նույնքան կարևոր է, որքան գործող օրենքների վերանայումը: Կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները բոլոր ռազմավարությունների և ծրագրերի մեջ (հոդված 4(1)(գ)):

Այդպիսով, պետական պաշտոնյաները պետք է այնպես անեն, որ ռազմավարություններ կամ օրենսդրություն մշակելիս նրանց առաջարկությունները համապատասխանեն կոնվենցիային:

Օրենսդիրը շատ կարևոր դեր է խաղում նոր օրենսդրության դիտարկման հարցում: Խորհրդարանները պետք է ապահովեն, որ օրենսդրական գործընթացում լինի մի փուլ, որի ժամանակ քննարկվի նախագծի համապատասխանությունը կոնվենցիային: Սա կարող է լինել իր անդամներից մի հանձնաժողով ստեղծելու միջոցով, որը կվերանայի օրենսդրական առաջարկները, կամ այդ պատասխանատվությունը կարող է վերապահվել արդեն իսկ գոյություն ունեցող հանձնաժողովին կամ հանձնաժողովներին, որոնք դիտարկում են օրենսդրությունը մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխանության առումով: Մեկ անգամ ևս նշենք, որ շատ կարևոր է հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններին ներգրավել այս գործընթացներում: Խորհրդարանները կարող են ունենալ հատուկ ջանքեր գործադրելու կարիք ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք տեղյակ լինեն այս գործընթացներից և օրենքների նախագծերից և պետք է նպաստեն նրանց տեսակետների ներկայացմանը օրենսդրին:

Որոշ խորհրդարաններ պահանջում են գործադիր իշխանությունից ներկայացնել փաստաթուղթ, որով կհաստատվի օրենսդրության համապատասխանությունը միջազգային չափանիշներին, կամ օրենքի նախագծերը խորհրդարան ներկայացնելիս ներկայացնել նաև կոնկրետ խմբի վրա այդ օրենսդրության ազդեցության գնահատում: Հաշմանդամության վրա ազդեցության գնահատումը կա՛մ որպես ինքնուրույն գնահատում, կա՛մ որպես մարդու իրավունքների վրա

ազդեցության գնահատման մի մաս, կօզնի կառավարությանն ուշադրությունը կենտրոնացնել այս հարցի վրա:

Չաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը օրենսդրական գործընթացում

Չաշմանդամություն ունեցող անձինք պետք է ակտիվորեն ներգրավվեն օրենսդրության նախագծման աշխատանքներում կամ նրանց վրա ազդեցություն ունեցող ցանկացած որոշումների ընդունման գործընթացում նույն կերպ, ինչպես նրանք ակտիվորեն ներգրավվել են կոնվենցիայի նախագծմանը: Նրանք նաև պետք է խրախուսվեն օրենսդրության կիրառման ժամանակ դիտարկումներ և ուղեցույցներ առաջարկելու համար: Բազմաթիվ միջոցներ կան ապահովելու համար, որ բոլոր տեսակետները հաշվի առնվեն, այդ թվում՝ հանրային լսումները (նախապես համապատասխան կերպով տեղյակ պահելով և հրապարակայնությունն ապահովելով), համապատասխան խորհրդարանական հանձնաժողովներին զրավոր առաջարկներ ներկայացնելը, լայն հասարակությունից ստացած բոլոր արձագանքները հրապարակելը, խորհրդարանական կայքէջերը և այլ լրատվամիջոցները³:

Խորհրդարանը պետք է ապահովի, որ իր օրենքները, ընթացակարգերը և փաստաթղթերը հասանելի լինեն մատչելի ձևաչափերով, ինչպես, օրինակ՝ խոշոր տառատեսակներով, Բրայլի համակարգով կամ դյուրըմբռնելի լեզվով, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց լրիվ մասնակցությունը օրենսդրության մշակմանն ընդհանրապես և հաշմանդամության հետ կապված հարցերով՝ մասնավորապես: Խորհրդարանների շենքերը կամ այլ վայրերը, որտեղ կարող են լսումներ անցկացվել, պետք է նույնպես մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Տեղական կամ նահանգային խորհրդարանների ներգրավումը

Օգտագործելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի ու Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի լեզուն՝ կոնվենցիայի 4(5)-րդ հոդվածը սահմանում է, որ կոնվենցիայի դրույթները «տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության»:

Որոշ դաշնային պետություններում կոնվենցիայի դրույթների կատարման առաջնային պատասխանատվությունը և լիազորությունը կարող է պատկանել պրովինցիաներին կամ այդ պետության բաղկացուցիչ մասերին: Այդ լիազորությունների իրականացման ձախողումը կարող է համարվել անբողջ պետության կողմից իր միջազգային պարտավորությունների չկատարում: Արդարացում չէ այն, որ կենտրոնական

3. Քաղաքացիների կողմից խորհրդարանական գործընթացներին մասնակցելու վերաբերյալ ավելի համապարփակ քննարկումն առկա է «Խորհրդարանը և ժողովրդավարությունը 21-րդ դարում: Լավ կառավարման ուղեցույց» (Ժնև, Միջխորհրդարանական միություն), էջ 79-87:

կառավարությունը պաշտոնական իրավասություն չունի այդ տարածքի նկատմամբ: Այս դրույթն առաջարկում է որոշակի հնարավորություններ, քանի որ պրովինցիալ կամ նահանգային օրենսդիրները կոնվենցիայի դրույթները կատարելու համար կարող են իրավասու լինել ընդունելու իրենց սեփական օրենսդրական կամ այլ նախաձեռնությունները իրենց իրավասության տակ եղած տարածքում, որը կլրացնի կենտրոնական կառավարության ձեռնարկած միջոցները:

Խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող եմ օգնել կոնվենցիան ազգային օրենսդրության մեջ ներմուծելուն.

- Ապահովեք, որ երկրի գլխավոր օրենքը (սահմանադրություն, հիմնական օրենք) պաշտպանի և ճանաչի հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքացիական, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքները:
- Ապահովեք գործող օրենսդրության վերանայումը կոնվենցիային համապատասխանատվության առումով:
- Ապահովեք, որ կոնվենցիայով նախատեսված բոլոր ոլորտները ներմուծվեն ազգային և՛ գործող, և՛ նոր օրենսդրության մեջ:
- Ապահովեք, որ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ խորհրդակցեն մինչև օրենսդրության ընդունումը:
- Ապահովեք, որ խորհրդարանի մակարդակով ստեղծվեն համապատասխան կառույցներ և մեխանիզմներ, որպեսզի նոր ընդունված ցանկացած օրենսդրություն համապատասխանի կոնվենցիային:
- Ապահովեք, որ պետական բյուջեում նախատեսվի բավարար ֆինանսավորում տարբեր բնագավառներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար:
- Օգտվե՛ք խորհրդարանական այնպիսի ընթացակարգերից, ինչպիսիք են՝
 - ▶ բանավոր և գրավոր հարցերը,
 - ▶ օրինագծերի ներկայացումը,
 - ▶ խորհրդարանական քննարկումները:
- Բարձրացրե՛ք հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին իրազեկվածությունը
 - ▶ Քննարկումներ անցկացրեք ձեր քաղաքական կուսակցությունում,
 - ▶ Միացե՛ք այլ խորհրդարանականների հետ ուժեղացնելու համար ձեր լոբբիստական հնարավորությունները,
 - ▶ Համագործակցե՛ք հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ,
 - ▶ Կազմակերպե՛ք հանրային իրազեկման արշավներ:

Դրույթներից դեպի պրակտիկա. Կոնվենցիայի կիրարկումը

Միայն օրենսդրությունը չի կարող ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն մարդու իրավունքներից: Պետությունները կարիք կունենան ընդունել արդյունավետ քաղաքականություններ և ծրագրեր, որոնք կտեղափոխեն կոնվենցիան դեպի պրակտիկա, որն իրական ազդեցություն կունենա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես մյուս բոլոր անձանց համար, մեկ իրավունքի խախտումը կարող է բերել այլ իրավունքների խախտման և հնարավորությունների կորստի ողջ կյանքի համար: Այս կետը պարզաբանելու համար ստորև ընդգծված են կոնվենցիայի հինգ դրույթներ: Դրանցում հստակորեն արտացոլված են բուժման և վերականգնման միջև եղած կապը (հոդված 26), մատչելիությունը (հոդված 9), կրթությունը (հոդված 24), աշխատանքը (հոդված 27), իրավունակությունը (հոդված 12): Ամեն դեպքում սա չի նշանակում, որ այս հինգ բնագավառները առավելություն ունեն կոնվենցիայի այլ դրույթների նկատմամբ: Ընդհակառակը, քանի որ իրավունքները փոխկապակցված են, պետությունները պետք է ձգտեն ներդնել կոնվենցիայի առանձին դրույթներ զուգահեռաբար:

Բուժում և վերականգնում

Ինչպե՞ս է կույր ծնված երեխան սովորում ապրել որպես հասարակության ակտիվ անդամ: Ինչպես է երիտասարդը, ով դժբախտ պատահարից ստանում է ողնաշարի լուրջ վնասվածքներ և զրկվում քայլելու ունակությունից, հարմարվում իր նոր վիճակին: Ինչպե՞ս է մայրը, ով ականի պայթյունից զրկվել է իր զույգ ոտքերից, շարունակում աշխատել և հոգալ ընտանիքի հոգսերը:

Բուժումն ու վերականգնումը (հոդված 26) առաջին առանցքային քայլերն են ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան ապրել անկախ կյանքով (հոդված 19), շարժունակ լինեն հասարակական կյանքում (հոդված 20) և ունակ լինեն օգտագործել իրենց ողջ ներուժը: Այս գործընթացների միջոցով հաշմանդամություն ունեցող անձինք ձեռք են բերում և զարգացնում են հմտություններ, որոնք հնարավորություն կտան նրանց աշխատել և փող վաստակել, ճիշտ որոշումներ կայացնել, իրենց լուծման ներդնել հասարակական կյանքում և իրականացնել կոնվենցիայով նախատեսված բոլոր մյուս իրավունքները:

Բուժումը ներառում է ուսումնական հմտություններ, որոնք հնարավորություն կտան անձին գործելու հասարակության մեջ: Նման ծրագրերը հիմնականում

Համայնքային վերականգնողական ծառայություններ

Համայնքային վերականգնողական ծառայություններ (ՀՎԾ) մատուցվում են աշխարհի ավելի քան 90 երկրներում: Դրանք ընդհանուր համայնքային զարգացման ռազմավարության մի մասն են, որոնք միտված են աղքատության կրճատմանը, հնարավորությունների հավասարեցմանը, հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը հասարակական կյանք: Քանի որ համայնքները տարբերվում են սոցիալ-տնտեսական պայմաններով, տեղանքով, մշակութային և քաղաքական համակարգերով, չի կարող լինել համայնքային վերականգնողական ծառայությունների մեկ մոդել, որը կիրառվի ամբողջ աշխարհում: Համայնքային վերականգնողական ծառայությունները ձևում, դիմամիկ և հարմարվող ռազմավարություն են, որոնք սահմանում են առողջությանը, կրթությանը և մասնագիտական ուսուցմանը, եկամուտների զարգացման ծրագրերին մատչելիություն և համայնքի մասնակցություն և ներառում:

Համայնքային վերականգնողական ծառայություններ մատուցվում են համայնքի համար և համայնքի շրջանում: Այն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքների, կազմակերպությունների և հասարակության, համապատասխան կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների զարգացման ոլորտում գործադրած համատեղ ջանքերով: Քանի որ սա համայնքային միջոցառում է, որն ապահովում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան նույն իրավունքները և հնարավորությունները, ինչ համայնքի մյուս անդամները, ՀՎԾ-ն ավելի ու ավելի է ճանաչվում որպես համայնքի զարգացման առանցքային տարր:

ԱՀԿ-ն, ԱՄԿ-ն, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, հաշմանդամության և զարգացման բնագավառում մեծ փորձ ունեցող միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները, հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները ուղեցույցներ են մշակում, թե ինչպես կարող է ՀՎԾ-ն օգնել հաշմանդամություն ունեցող անձանց իրականացնել իրենց իրավունքները և հարգանք ապահովել իրենց անձնական արժանապատվության նկատմամբ:

ուղղված են հաշմանդամությամբ ծնված երեխաներին: Վերականգնումը նշանակում է վերականգնել ունակություններն ու հնարավորությունները: Սա հիմնականում կիրառվում է մեծահասակների նկատմամբ, որոնք պետք է վերահարմարվեն հասարակական կյանքին հաշմանդամություն ձեռք բերելուց հետո:

Մատչելիություն և ինտերնետ

Ինտերնետը կարող է հնարավորություններ ստեղծել յուրաքանչյուրի համար, դեռևս այդ հնարավորությունների մեծ մասն անհասանելի է հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2006 թ. վերջին 20 երկրների առաջատար 100 կայքէջեր Յամաշխարհային վեբ կոնսորցիումի (W3C) կողմից գնահատվեցին միջազգային մատչելիության ուղեցույցների առումով: Ուսումնասիրված կայքէջերը ուշադրությունը կենտրոնացնում էին ճանապարհորդության, ֆինանսների, լրատվության, կառավարության և մանրածախ առևտրի վրա:

Այս ուսումնասիրությունը բացահայտեց, որ ստուգված կայքէջերի մեծ մասը չի համապատասխանում մատչելիության միջազգային չափանիշներին, իսկապես 100 կայքերից միայն երեքն էին ապահովում մատչելիության նվազագույն չափանիշներ: Մինչ որոշ կայքեր կարող են հեշտությամբ կատարելագործվել հարմարվելու համար հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, դրանցից շատերը պահանջում են նշանակալի աշխատանք:

Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելը ոչ միայն մարդու իրավունքների հարց է, այն նաև խելամիտ է քիզնեսի առումով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մատչելի կայքէջերը հայտնվում են որոնողական համակարգերի էջերի վերին հատվածներում, կարող են խնայել ցանցի պահպանման հետ կապված ծախսերը և կարող են ապահովել այդ կայքէջերի հետևում կանգնած ընկերություններին մատչելիություն դեպի հաճախորդների մեծ չօգտագործված բազա:

Բուժումը և վերականգնումը հիմնականում ժամանակով սահմանափակված գործընթացներ են, որոնք հարմարեցված են անձի կարիքներին: Նրանք ներգրավվում են այդ գործընթացներում՝ իրենց առջև դնելով նպատակներ, որոնց պետք է հասնեն մասնագետների ուղղորդված աջակցությամբ և հնարավոր է նաև ընտանիքի անդամների և մոտ ընկերների մասնակցությամբ: Բուժումը և վերականգնումը կարող են ընդգրկել բժշկական, հոգեբանական, սոցիալական և պրոֆեսիոնալ աջակցություն: Առանց նշված միջամտությունների հաշմանդամություն ունեցող անձինք հավանաբար ի վիճակի չեն լինի իրականացնել մատչելիության, կրթության և աշխատանքի իրենց իրավունքները:

Մատչելիություն

Յուրաքանչյուր հասարակության մեջ կան բազմաթիվ խոչընդոտներ և արգելքներ՝ սկսած աստիճաններից, որոնք դժվար է բարձրանալ, վերջացրած

նշաններով, որոնք չի լինում կարդալ, որոնք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձանց ապրել լիարժեք կյանքով: Մատչելիությունը (հոդված 9) ենթադրում է հավասար հասանելիություն ապահովել հասարակական բոլոր կառույցներին և ծառայություններին հասարակության բոլոր անդամների համար, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձինք: Սա կոնվենցիայի ղեկավար սկզբունք է (հոդված 4) և կարևոր է դրա կիրառման բոլոր ոլորտներում: Թեև մատչելիության վերաբերյալ կոնվենցիայի որոշ դրույթներ կարող են ծախսատար լինել կարճ ժամանակում ներդրվելու դեպքում, կան մի շարք էժան, ցածրտեխնոլոգիական լուծումներ, որոնք կարող են ունենալ անմիջական ազդեցություն:

Օրինակ՝ տեղեկատվության մատչելիությունն ապահովելը կարող է համեմատաբար էժան լինել և նշանակալիորեն բարելավել հաշմանդամություն ունեցող անձանց կյանքը, կլինի գնապիտակ կարդալը, հանդիպմանը մասնակցելու համար սրահ մուտ գործելը, ավտոբուսների ուղերթը հասկանալը կամ էլ կայքերից օգտվելը: Հեռուստատեսությունը ճանաչված է որպես տեղեկատվության կարևոր աղբյուր և փոխադրամիջոց, որն ապահովում է մատչելիություն դեպի մշակութային և սպորտային միջոցառումներ: Խորհրդարանականները լրատվական ինդուստրիայի հետ համագործակցությամբ կարող են աշխատել հեռուստատեսությունը համար անհատների և տարեց մարդկանց համար հասանելի դարձնելու համար՝ ապահովելով կողմից կազմված տիտրերի կամ լուսագրերի կիրառումը: Այս միջոցներն արդեն իսկ ընդունված են աշխարհի ավելի քան 30 երկրներում:

Ինտերնետը նաև էական կապ է ապահովում կրթության, աշխատանքի հնարավորությունների, նորությունների և առողջապահական տեղեկատվության հետ և խողովակ է հանդիսանում քաղաքացիական ներգրավվածության և սոցիալական կապերի հաստատման համար: Այն անհատները, ովքեր հասանելիություն չունեն ինտերնետին, զրկված են հասարակական կյանքին ներգրավվելու հնարավորության որոշակի աստիճանից: Երբ կայքէջերը ստեղծվում և զարգանում են մատչելիության վերաբերյալ ուղեցույցների համաձայն, բոլոր օգտատերերն ունենում են հավասար մատչելիություն ինտերնետով ապահովվող տեղեկատվությանը:

Թեև որոշ երկրներ այժմ պահանջում են, որ առնվազն կառավարության կայքէջը հասանելի լինի հաշմանդամություն ունեցող անձանց, աշխարհի կայքէջերի մեծ մասը մնում է անհասանելի (տե՛ս նախորդ էջի աղյուսակը):

Տեղեկատվությանը հասանելիությունը նաև անհրաժեշտ է արտակարգ պատահարների ժամանակ: Աշխարհում տեղի ունեցած վերջին աղետները ցույց տվեցին, որ դրանց ժամանակ հաշմանդամություն ունեցող անձինք չեն ստանում նույն մակարդակի աջակցություն, ինչ ցանկացած այլ անձ: Կոնվենցիան կոչ է անում պետություններին զարգացնել արտակարգ պատահարների ժամանակ մատուցվող ծառայությունները (հոդված 9(1)(բ)): Օրինակ՝ տեքստային հաղորդումները արագորեն դարձան հաղորդակցության նախընտրելի մեթոդներից մե-

կը համը մարդկանց համար: Այնուամենայնիվ շատ երկրների արտակարգ իրավիճակների ծառայությունները չեն կարողանում հաղորդակցվել տեքստային հաղորդագրությունների միջոցով հաղորդակցության անհամատեղելի կանոնների պատճառով:

Կյանքը մատչելի դարձնելը

Ֆիզիկական միջավայր

Մատչելի ֆիզիկական միջավայրը օգտակար է բոլորի համար, այլ ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Կոնվենցիան նշում է, որ պետք է քայլեր ձեռնարկվեն վերացնելու համար բացօթյա և փակ հաստատությունների արգելքները և խոչընդոտները, այդ թվում՝ դպրոցները, առողջապահական հաստատությունները և աշխատավայրերը (հոդված 9(1)(ա)): Սա ներառում է ոչ միայն շենքերը, այլ նաև արահետները, մայթերը, երեխաների երթևեկությունը կարգավորող արգելքները:

Ժամանակի ընթացքում բոլոր նոր կառույցները պետք է հիմնված լինեն այնպիսի նախագծերի վրա, որոնք հաշվի կառնեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց հարմարությունները: Համաշխարհային բանկը եզրակացրել է, որ այդ փոփոխությունները մտցնելու արժեքը կառուցման ժամանակ կարող է նվազագույն լինել: Նաև ցույց է տրվել, որ մատչելի շենքեր կառուցելը դրանց շինարարական ծախսերի արժեքին ավելացնում է 1 տոկոսից պակաս գումար:

Հանրային կառույցներ և ծառայություններ

Կոնվենցիան առաջարկում է կառավարություններին, հանրային կառույցները և ծառայությունները հասանելի դարձնելու ուղղությամբ ուղեցույցներ մշակելով, օրինակ լինել հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքին լրիվ մասնակցության հարցում (հոդված 9(2)(ա)): Մատչելիությունը կարող է պահանջել կառավարական շենքեր մտնելու համար թեքահարթակների կառուցում, Բրայլի համակարգով նշանների տեղադրում, մատչելի զուգարաններ, հանրային հեռուստատեսության մեջ նշանների լեզվով թարգմանության և կողիֆիկացված տիտրերի առկայություն: Այս ուղեցույցները պետք է ներդրվեն հաշմանդամություն ունեցող անձանց և/կամ նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ խորհրդակցելով:

Տրանսպորտ

Տեղափոխումը, ներառյալ օդային ճամփորդությունը, ավոբուսները, գնացքները և տաքսիները կենսական նշանակություն ունեն անկախ կյանքով ապրելու համար: Բազմաթիվ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձինք, հատկապես նրանք, ովքեր ունեն ակնհայտ խանգարումներ կամ ովքեր չեն կարողանում ազատ տեղաշարժվել, հասանելիություն չեն ունենում այս կարևոր ծառայություններին և այդ պատճառով չեն կարողանում դպրոց հաճախել, աշխատանք ունենալ կամ բժշկական ծառայություններից օգտվել:

Երկրների մեծ մասում տեղեկատվությունը մատչելի ձևաչափով ապահովելու կամ կայքէջերը մատչելի դարձնելու մասին օրենքներ չկան, այդպիսի ձևաչափեր են Բրայլի համակարգը, աուդիոձևաչափը կամ նշանների լեզուն: Յաճախ, նույնիսկ այնտեղ, որտեղ կա օրենսդրություն, այդ օրենքները չեն կիրառվում փաստացի ծառայություններ մատուցելիս: Կոնվենցիան առաջարկում է կառավարություններին ընդունել համապատասխան օրենսդրություն և միջոցներ ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք հասանելիություն ունենան այն տեղեկատվությանը, որն ուղղակիորեն ազդում է նրանց առօրյա կյանքի վրա (հոդվածներ 9(1)(ա) և 9(2)(է)):

«Երբ դու աշխարհի կույր մարդկանց ժամանակին և արդյունավետ ձևով տալիս ես տեղեկատվության մատչելիություն այնպիսի ձևաչափով, որ նրանք կարողանան կարդալ, հասկանալ և ընկալել, դու կարող ես երաշխավորված լինել, որ այդ կույր մարդիկ մեծ ներդրում կունենան ամբողջ աշխարհի հասարակություններում»:

Դոն Բրեդա, SS կույր մասնագետ (ԱՄՆ)

Խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող եմ ավելի հասանելի դարձնել հասարակական կյանքը.

- Շրջե՛ք ձեր համայնքով և ուսումնասիրե՛ք, թե քանի արգելք գոյություն ունի, ինչպես, օրինակ՝ շինություններ մտնող աստիճաններ, թեքահարթակների, Բրայլի համակարգով նշանների բացակայություն և այլն:
- Պարզե՛ք՝ արդյոք կառավարական նյութերը մատչելի՞ են հաշմանդամություն ունեցող անձանց համար այլընտրանքային ձևաչափով:
- Պարզե՛ք, թե որքանո՞վ են մատչելի կառավարական շենքերը և ծառայությունները:
- Պարզե՛ք, թե արդյոք հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի՞ են առնված կառավարության արտակարգ իրավիճակների ծրագրերում:
- Խորհրդակցե՛ք հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ մատչելիությունը բարելավելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի մասին:

Կրթություն

Հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթություն ստանալու բազմաթիվ պոտենցիալ արգելքներ կան, հատկապես զարգացող երկրներում: Դրանք են.

- աղքատությունը,
- ծանրաբեռնված դպրոցները,
- վերապատրաստում անցած մանկավարժների բացակայությունը,
- հաշմանդամություն ունեցող աշակերտների համար խելամիտ հարմարությունների և աջակցության բացակայությունը,
- անմատչելի կառույցները,
- անմատչելի ուսումնական ծրագիրը,
- վատ կամ անմատչելի փոխադրամիջոցները,
- հասարակական խարանը և դպրոցական միջավայրին անծանոթ լինելը:

Առկա գնահատումները ցույց են տալիս, որ հաշմանդամությունը ունեցող երեխաների դպրոց հաճախելիության ցուցանիշները զարգացող երկրներում ցածր են և կազմում են 1-3 տոկոս, այդպիսով հաշմանդամություն ունեցող երեխաների մոտ 98 տոկոսը դպրոց չի հաճախում և գրագետ չէ: Քանի դեռ հաշմանդամություն ունեցող այսքան մեծ թվով երեխաներ դպրոց չեն հաճախում, համընդհանուր տարրական կրթության հասնելու հետ կապված Հագարանյակի զարգացման նպատակները կմնան մշուշոտ: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները, այդ թվում՝ լուրջ հաշմանդամություն ունեցող երեխաները, որոնք ներգրավված են կանոնավոր կրթության մեջ, դպրոցն ավարտելու, հետմիջնակարգ կրթություն և ուսուցում ստանալու, աշխատանք գտնելու, լավ աշխատավարձ ստանալու և իրենց հասարակության ակտիվ անդամ դառնալու ավելի շատ հավանականություն ունեն:

«Ես քննություններից ստացել եմ ավելի բարձր արդյունքներ, քան ինձ հետ նույն տարվա խմբում սովորող բոլոր ուսանողները, ովքեր ինձ նման սովորում են հատուկ դպրոցում, և սա ոչ թե նրա համար, որ ես ավելի խելացի եմ, այլ ապահովված հնարավորությունների շնորհիվ: Ես ունեի այն հնարավորությունները, որոնք ինձ տրվել էին»:

Լուչիա Քելլինի, կոյր ուսանող (ՄԹ)

Կոնվենցիան կարգավորում է կրթության շատ կողմեր կյանքի տարբեր փուլերում (հոդված 24): Նրա առաջնահերթությունը հաշմանդամություն ունեցող երեխաներին քաջալերելն է դպրոց հաճախելու համար բոլոր մակարդակներում (հոդված 24(2)(ա)): Կոնվենցիան պնդում է, որ դա անելու լավագույն ձևը երեխայի շահերի վրա կենտրոնանալն է (հոդված 24(2)(բ)): Կոնվենցիան նաև անդրա-

դառնում է հաշմանդամություն ունեցող մեծ թվով չափահասների կրթական կարիքներին, որոնք կրթություն չունեն կամ բավարար կրթություն չունեն, քանի որ երեխա ժամանակ չի եղել դրա հնարավորությունը կամ հասանելիությունը: Այն նաև ճանաչում է մարդու կյանքի ողջ ընթացքում կրթության կարևորությունը (հոդված 24(5)), այդ թվում՝ այն չափահասների համար, որոնք ձեռք են բերել հաշմանդամություն և այդ պատճառով ցանկանում են կամ կարիք ունեն հետագա կրթության, որպեսզի աշխատելու հնարավորություն ունենան, սա ներառում է նաև մասնագիտական ուսուցումը և համալսարանական ծրագրերը:

Կոնվենցիայով նախատեսված կրթության նկատմամբ մոտեցումը հիմնված է ապացույցների աճող ծավալի վրա, որոնք ցույց են տալիս, որ ներառական կրթությունը ոչ միայն ապահովում է լավագույն կրթական միջավայր, այդ թվում՝ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար, այլ նաև օգնում է քանդելու պատճենները և մարտահրավեր է կարծրատիպերին: Այս մոտեցումը օգնում է ստեղծելու հասարակություն, որը պատրաստակամորեն ընդունում և հովանի է դառնում հաշմանդամության համար՝ դրանից վախենալու փոխարեն: Երբ հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները մեծանում են միասին և սովորում են կողք կողքի նույն դպրոցում, նրանք միմյանց ավելի լավ են հասկանում և հարգում:

Հատուկ կրթությունից ներառական կրթության անցնելը պետք է շատ զգուշորեն ծրագրվի և ներդրվի՝ պաշտպանելու համար երեխայի կարիքները և լավագույն շահերը: Սրա նախապայմանն է ծնողների, համայնքի ղեկավարների և ուսուցիչների աջակցությունը: Ներառական լինելու համար ընդհանուր կրթությունը պետք է՝

- ապահովի համապատասխան սարքավորումներ և ուսումնական նյութեր հաշմանդամություն ունեցող անձանց համար,
- ընդունի բոլոր երեխաների և աշակերտների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, կարիքներին համապատասխանող ուսումնական մեթոդներ և ծրագրեր և խթանել բազմազանության ընդունմանը,
- վերապատրաստի բոլոր ուսուցիչներին ներառական դասարանում դասավանդելու համար և քաջալերի նրանց միմյանց աջակցելու համար,
- ապահովի աջակցող միջոցառումների շարք, որը հնարավորինս շատ կհամապատասխանի բոլոր աշակերտների տարբերակման կարիքներին, ներառյալ հաշմանդամություն չունեցող աշակերտները,
- աջակցի Բրայլի համակարգը և նշանների լեզուն սովորելուն, որպեսզի կույր երեխաները կամ կույր և համր երեխաները կարողանան կրթություն ստանալ և հաղորդակցվել:

Կրթական համակարգից այն կողմ

Կրթության մատչելիությունը չի վերաբերում միայն կրթության համակարգին: Նույնիսկ եթե դպրոցը թույլ է տալիս հաշմանդամություն ունեցող երեխային ընդունվել, մատչելի տրանսպորտի բացակայությունը կարող է դպրոց հասնելը դարձնել դժվար կամ անհնար: Երբեմն դպրոցն է լինում անմատչելի: Ֆիզիկական ենթակառուցվածքների փոփոխությունը կարող է անհրապույր թվալ, բայց այդպես չպետք է լինի: Ժամանակի ընթացքում, երբ շինությունները վերակառուցման կարիք ունեն, դրանք պետք է վերակառուցվեն՝ ներառելով մատչելիության նախագծային տարրեր:

Ապագայում հասանելիությունը կարող է պարտադիր լինել բոլոր նորակառույցների համար, այդ թվում և՛ կրթական հաստատությունները: Սա ներառում է ոչ միայն այն միջոցները, որոնք հնարավորություն կտան անվասայլակ օգտագործողներին շենք մուտք գործել, այլ նաև Բրայլի համակարգով նշանների տեղադրումը և թույլ տեսողություն ունեցողների համար համապատասխան լուսավորությունը: Կառուցման ժամանակ հասանելի միջոցների տեղադրելու ծախսերը կարող են նվազագույն լինել, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նման հարմարությունների տեղադրումը շինարարական ծախսերին ավելացնում է 1 տոկոսից պակաս գումար:

Ներառական կրթության ծախսերը

Ներառումը հաճախ ընկալվում է որպես անթույլատրելիորեն թանկ, ոչ պրակտիկ, ոչ կենսունակ կամ միայն հաշմանդամությանը վերաբերող հարց: Սակայն ոչ բոլոր դրական միջոցներն են թանկարժեք: Որոշ երկրներ արդեն զարգացրել են արդյունավետ ծախսային ծրագրեր՝ սահմանափակ միջոցներով ներառականություն ապահովելու համար: Պետությունները պետք է օգտագործեն առկա ռեսուրսները, կենտրոնանան հստակ նպատակների հասնելու ուղղությամբ և ապահովեն կրթության կենսունակությունը՝ իրականացնելով կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորում: Ներառական կրթության համակարգի ֆինանսավորման կրճատումը կունենա դրամատիկ անբարենպաստ ազդեցություն ոչ միայն անձանց, այլ նաև ներառական քաղաքականության վրա ընդհանրապես:

Ներառական կրթական ցանցերը հիմնականում ավելի մատչելի են, քան առանձնացված համակարգերը: Այս մոտեցումը համապատասխանում է այն գաղափարին, որ մեկ միասնական կրթական համակարգը պետք է ավելի էժան լինի, քան երկու առանձին համակարգերը: Միասնական համակարգը նվազեցնում է կառավարչական և վարչական ծախսերը: Տրանսպորտային ծախսերը ևս ավելի էժան են, քանի որ առանձնացված ցանցերը սովորաբար ներառում են անհատների ավելի մեծ աշխարհագրական տարածքից: Փորձը ցույց է տվել, որ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների 80-90 տոկոսը, ներառյալ մտավոր հաշմանդամություն ունեցողները, հեշտությամբ կարող է ներգրավվել սովորական դպրոցներում և դասարաններում սովորելու համար, քանի դեռ կա նրանց ներառման նկատմամբ հիմնավոր աջակցություն:

Խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող եմ օգնել կրթությունն առավել ներառական դարձնելուն.

- Տարածե՛ք ներառական կրթության մեթոդաբանությունը՝ որպես ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի անբաժանելի մաս:
- Քաջալերե՛ք հաշմանդամություն ունեցող անձանց որպես ուսուցիչների վերապատրաստելը:
- Օգտագործե՛ք բրգածն վերապատրաստման տեխնիկան, երբ ուսուցիչները մեկ անգամ վերապատրաստվելով ներառական կրթության վերաբերյալ, վերապատրաստում են այլ ուսուցիչների:
- Աջակցե՛ք հասակակիցների կողմից ուսուցման ծրագրերին, երբ բարձր դասարանների աշակերտները աջակցում են ցածր դասարանների աշակերտներին:
- Ապահովե՛ք համագործակցությունը դպրոցների և ծնողների միջև:
- Կապ ստեղծե՛ք համայնքային վերականգնողական առկա ցանցերի ներառական կրթության նախաձեռնությունների միջև:
- Ապահովե՛ք, որ երեխաների գնահատման ժամանակ տրամադրվեն խելամիտ հարմարություններ:
- Գոյություն ունեցող հատուկ դպրոցները դարձնել ռեսուրսային կենտրոններ:
- Սահմանե՛ք հաշվետվողականության համակարգ մշտադիտարկելու համար հաշմանդամություն ունեցող երեխաների դպրոց ընդունվելը և ավարտելը:

Աշխատանք և զբաղվածություն

Աշխատանքի ընդունումը (հոդված 27) ազգային տնտեսությանն աջակցելու իմաստով շատ հնարավորություններ է ապահովում սոցիալական մասնակցության համար՝ սկսած տնտեսական անկախությունից մինչև ընտանիքի ձևավորում: Բայց ցանկացած հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող անձինք ամբողջությամբ չեն ներգրավվում աշխատանքի շուկայում: Դրանց մեծ մասը կամ գործազուրկ է, կամ նրանց հետ են համոզել ակտիվորեն աշխատանք փնտրելու հարցում: Աշխատողների շրջանում շատերն աշխատում են ոչ լրիվ դրույքով, վարձատրվում են նվազագույն աշխատավարձից ցածր և կատարում են իրենց ունակություններից ցածր մակարդակ պահանջող աշխատանք: Տնտեսական մասնակցության այս բացակայությունը նշանակալի ազդեցություն ունի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա, քանի որ նրանք հնարավորություն չեն ունենում ապահովել կյանքի բավարար մակարդակ (հոդված 28) և հասարակության մեջ ապրել անկախ կյանքով (հոդված 19):

Աշխարհի բոլոր տարածաշրջաններում կա էական բաց հաշմանդամություն ունեցող և չունեցող անձանց աշխատանքային պայմանների և զբաղվածության միտումների միջև: Շատ ավելի հաճախ իրենց ապրուստն ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձինք կախված են լինում ողորմությունից, բարեգործությունից և սոցիալական ապահովությունից, քան խելամիտ զբաղվածությունից:

Գործատուները հաճախ մերժում են հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունել կամ պարզապես չեն քննարկում նրանց աշխատանքի ընդունվելու դիմումները՝ կարծելով, որ նրանք հնարավորություն չեն ունենա կատարել իրենց պարտականությունները և/կամ նրանց աշխատանքի ընդունելը շատ թանկ կլինի: Այս վերաբերմունքն արմատավորված է վախի և կարծրատիպային մտածողության պատճառով, և ավելի շատ կենտրոնանում է հաշմանդամության, քան անձի ունակությունների վրա:

Դիտարկումները, այնուամենայնիվ, վկայում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն բարձր կատարողականություն և աշխատանքը չկորցնելու բարձր ցուցանիշներ, ինչպես հաճախելիության ավելի լավ տվյալներ, քան իրենց ոչ հաշմանդամ գործընկերները: Բացի այդ, հաշմանդամություն ունեցող աշխատողների համար հարմարություններ ստեղծելու ծախսերը հաճախ նվազագույն են, նրանցից շատերի համար նույնիսկ ընդհանրապես չեն պահանջվում հատուկ հարմարություններ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունողները այլ օգուտներ էլ են ստանում, ներառյալ աշխատուժի ոգու ամրության բարձրացումը և հաճախորդների բարեհաճության աճը:

Ձարգացող երկրներում հաշմանդամություն ունեցող աշխատողների մեծ մասը աշխատանքի է ընդունվում ոչ օրինական հիմքով, որտեղ աշխատանքի պաշտպանությունը սահմանափակված է, և աշխատանքը կանոնավոր չէ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ գյուղատնտեսական աշխատողների կեսից երեք քառորդը զարգացող երկրներում աշխատում է ոչ օրինական հիմքերով: Աֆրիկայում ոչ օրինական աշխատողների տոկոսը տատանվում է Հարավային Աֆրիկայում 48-ից մինչև Սահարյան Աֆրիկայում 78 տոկոսը: Գյուղատնտեսությունից դուրս ինքնուրույն աշխատանքը ներառում է 60-70 տոկոս ոչ օրինական աշխատանք: Հաշմանդամություն ունեցող կանայք նույնիսկ ավելի քիչ հավանականություն ունեն աշխատանք գտնելու և գտնելու դեպքում ավելի քիչ են վարձատրվում:

Բազմաթիվ երկրներ չունեն հաշմանդամություն ունեցող աշխատողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրություն: Սա հնարավոր է դարձնում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ աշխատավայրում խտրականություն դրսևորել՝ սահմանափակելով նրանց հասանելիությունը աշխատաշուկա: Նրանց բացակայությունը տնտեսության մեջ նույնպես բխում է

երիտասարդ տարիքում կրթության և ուսման հնարավորությունների բացակայությունից:

Կոնվենցիայի՝ աշխատանքի և զբաղվածության մասին դրույթների կիրառումը ուղղակիորեն կազդի հաշմանդամություն ունեցող աշխատանքային տարիքի մոտ 470 մլն կանանց և տղամարդկանց վրա: Կոնվենցիան նշում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից կամավոր ընտրված կամ ընդունած աշխատանքով իրենց ապրուստը հոգալու օրինական իրավունքն ապահովելու և զբաղվածության բոլոր տեսակներում հաշմանդամության պատճառով խտրականությունն արգելելու պետության պարտավորությունները (հոդված 27(1)): Աշխատանքի շուկան հաշմանդամություն ունեցող անձանց համար բաց պահելուն աջակցելու հետ մեկտեղ կոնվենցիան նաև ճանաչում է ինքնուրույն աշխատանքի կարևորությունը, որը հատկապես արդիական է զարգացող երկրներում (հոդված 27(1)(գ)): Կոնվենցիան նաև ապահովում է անհրաժեշտ հնարավորություններ (հոդված 27(1)(թ)) և աջակցում է այն քաղաքականությանը և ծրագրերին, ներառյալ դրական գործողությունները, որոնք քաջալերում են գործատուներին հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելու հարցում (հոդված 27 (1)(ը)):

Ինչպե՞ս է կրթության և տրանսպորտի մատչելիությունն ազդում աշխատանքի մատչելիության վրա

Երբ հաշմանդամություն ունեցող անձինք չեն ներգրավվում տրանսպորտին, ֆիզիկական ենթակառուցվածքներին և կրթական համակարգին վերաբերող քաղաքականություններում և ծրագրերում, նրանք նաև դուրս են մնում զբաղվածությունից: Նույնիսկ եթե աշխատանքները հասանելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար, այդ անձինք կարող են կանգնել զբաղվածության հետ կապված այլ արգելքների առջև, նրանք կարող են չստանալ համապատասխան կրթություն, նրանք կարող են հասանելիություն չունենալ աշխատանքի ցուցակներին համապատասխան ձևաչափով և կարող է չլինել աշխատանքի գնալու համար հասանելի տրանսպորտ: Այս բոլոր գործոնները կարող են աշխատանք փնտրելուց հետո պահել մասնագիտական որակավորում ունեցող հաշմանդամ անձին:

Թեև գործատու հաճախ համարվում են մասնավոր հատվածի կազմակերպությունները, բազմաթիվ երկրներում, հատկապես զարգացող երկրներում, կառավարությունը համարվում է նախընտրելի գործատու և ամենամեծ գործատու: Քանի որ կոնվենցիան պահանջում է, որ կառավարությունը ստեղծի համապատասխան անհրաժեշտ հնարավորություններ բոլոր մակարդակներում ավելի մեծ թվով հաշմանդամություն ունեցող աշխատանք փնտրող անձանց աշխատանքի ընդունելու համար, կառավարությունը կարող է ծառայել որպես մոդել մասնավոր հատվածի գործատուների համար:

Բազմաթիվ երկրներ ունեն որոշակի տեսակի աշխատանքային քվոտավորում հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս քվոտավորումը տա-

տանվում է 2-7 տոկոսի միջև: Քվոտաները հիմնականում կիրառվում են միջինից մեծ ֆիրմաների նկատմամբ, և դրանք չպահպանող կազմակերպությունները հաճախ տուգանվում են: Չնայած այդ տուգանքները չեն բարելավում ցուցանիշները, դրանք լրացուցիչ գումարներ են ապահովում, որոնք հաճախ ծախսվում են հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հետ կապված ծրագրերի վրա: Մասնակից պետությունները կարող են օգտվել մարդկանց համար փոխկապված ծրագրերի ստեղծումից՝ անցում կատարելով սոցիալական ապահովության սխեմաներից դեպի աշխատանքի բաց շուկա:

Զբաղվածության հնարավորություններ ապահովելը

Հաշմանդամությունը երբեմն կարող է ազդել սովորական և ավանդական ձևով աշխատանք կատարելու՝ հաշմանդամություն ունեցող անձի հնարավորության վրա: Դեպք առ դեպք հիմունքով խելամիտ հարմարություններ ստեղծելու պարտավորությունը կամ հարմարություններ ունենալու իրավունքը ներառված է կոնվենցիայի՝ աշխատանքի և զբաղվածության մասին դրույթներում:

Զբաղվածության համատեքստում անհրաժեշտ հնարավորությունների մասին դրույթներ ընդունվել են աշխարհի տարբեր մասերում, բայց դրանք նորություն կլինեն բազմաթիվ երկրների համար: Ե՛վ գործատուները, և՛ աշխատողները կարող է ուղեցույցի և աջակցության կարիք ունենան պարզելու համար, թե ի՞նչ հնարավորություններ են անհրաժեշտ:

Դրական գործողությունները, ինչպիսին է աշխատանքի քվոտավորումը, փորձում են ապահովել հավասար հնարավորություն և նպատակ ունեն հաղթահարել որոշակի խմբերի դեպքում առկա կառուցվածքային անհարմարությունները: Ի տարբերություն անհրաժեշտ հնարավորությունների՝ նման գործողությունները միտված չեն անհատների կարիքները բավարարելուն: Դրական գործողությունները ժամանակավոր են և տևում են այնքան, մինչև վերացվեն կառուցվածքային անհարմարությունները՝ հատուցում տալու կամ առավել արդարացի համակարգ ստեղծելու միջոցով:

Կոնվենցիայի՝ աշխատանքի և զբաղվածության մասին դրույթները վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ զբաղվածության բոլոր փուլերում, ներառյալ աշխատանք փնտրողներին, աշխատանքում առաջխաղացում ունեցողներին, աշխատանքի ժամանակ հաշմանդամություն ձեռք բերողներին և նրանց, ովքեր ուզում են պահպանել աշխատանքը: Աշխատելու և արհմիություններ ստեղծելու իրավունքը նույնպես սահմանված է կոնվենցիայում (հոդված 27(1)(գ)): Պետությունները նաև իրավաբանորեն պարտավոր են ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք չպահվեն ստրկության կամ ծառայության մեջ և հարկադիր կամ պարտադիր աշխատանքից պաշտպանվեն՝ մյուսների հետ հավասար հիմունքներով (հոդված 27(2)):

Մեծ բիզնեսն աջակցում է ներառմանը

«Բիզնեսը և հաշմանդամությունը» եվրոպական ցանց է, որն առաջացել է 2003 թ. Հաշմանդամություն ունեցող անձանց եվրոպական տարվա ընթացքում ձևավորված կորպորատիվ գործընկերների մի խմբից: Այդ ցանցն աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց ներառման հետ կապված նախաձեռնություններին և քաջալերում է մտքերի փոխանակությունը բիզնեսի, քաղաքական գործիչների և հաշմանդամություն ունեցող անձանց միջև:

«Բիզնեսը և հաշմանդամությունը» ցանցի առաքելությունը հաշմանդամություն ունեցող անձանց ներառումն է եվրոպական հասարակության բոլոր ոլորտներում, մասնավորապես որպես աշխատողներ, սպառողներ և քաղաքականություն կերտողներ:

«Բիզնեսը և հաշմանդամությունը» ցանցի անդամները առաջնորդներ են իրենց տնտեսական գործունեության բնագավառներում: Նրանք կենտրոնանում են ֆիզիկական մատչելիության, ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային հասանելիության և զբաղվածության հարցերի վրա: «Բիզնեսը և հաշմանդամությունը» ցանցի հիմնադիր անդամներն են «Ադեկոն», «Հյուլեթ Փաքարդ»-ը, «Այբիեմ»-ը, «Մենփաուերը», «Մայքրոսոֆթը» և «Շինդլերը»:

Պրակտիկ առումով, պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք դիմեն աշխատանքի համար հաշմանդամություն չունեցող անձանց հետ հավասար և որ նրանք պաշտպանված լինեն խտրականությունից և աշխատավայրում ունենան այլ անձանց հետ նույն իրավունքները և հավասար հնարավորություն աշխատանքային առաջխաղացման մեջ: Կառավարության աշխատողները և արհմիությունները, գործատուները և հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացուցիչները կարող են աշխատել միասին ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական և տնտեսական ինտեգրումը: Առաջարկվող գործողությունները տարբեր կլինեն՝ կախված երկրի տնտեսական զարգացման մակարդակից:

Կոնվենցիան նաև ընդունում է, որ հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձանց համար զարգացող երկրներում ինքնուրույն աշխատանքը կամ փոքր բիզնեսը կարող է լինել առաջին և զուցե միակ ընտրությունը: Կոնվենցիայի մասնակից պետությունները իրավական պարտավորություն են կրում աջակցել այս հնարավորություններին:

Մինչ կառավարությունները կարիք կունենան աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը օրինական հիմքով, նրանցից նաև կպահանջվի ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց փոքր վարկերի և փոքր ֆինանսների զարգացման ծրագրերում:

Այդ ծրագրերը խիստ հաջողված են եղել աշխարհի տարբեր հատվածներում, բայց հաճախ մոռացել են ներառել կամ միտումնավոր բացառել են հաշմանդամություն ունեցող անձանց՝ որպես պոտենցիալ շահառուների:

Խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող են զբաղվածության հեռանկար ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար.

- Պարզե՞ք, թե արդյոք կենսաթոշակային համակարգը պատահաբար չի՞ պարունակում խոչընդոտներ աշխատանքի համար: Որոշ օրինակներ կան, երբ սոցիալական ապահովության համակարգը հիասթափեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանք փնտրելու հարցում:
- Աջակցե՞ք մասնագիտական վերականգնմանը և այլ ներառական քաղաքականությունների:
- Դյուրացրե՞ք համագործակցությունը կառավարության, գործատուների և աշխատողների միջև բիզնեսը հաշմանդամության համար ներառական քաղաքականության առարկա դարձնելու համար ու խրախուսեք դրա ընդունումը և՛ մասնավոր, և՛ հանրային հատվածներում: Հաշմանդամության հարցերով գործատուների համաժողովը, որն անցկացվել է Միացյալ Թագավորությունում, մեծ աշխատանքի լավ օրինակ է:
- Աջակցե՞ք հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններին ներառական և հավասար աշխատանքային միջավայր քարոզելու նրանց ջանքերում:

Իրավունակությունը և աջակցման ենթակա որոշումների ընդունումը

Պատկերացրե՞ք, որ որոշումներ ընդունելու, պայմանագրեր ստորագրելու, քվեարկելու, դատարանում ձեր իրավունքները պաշտպանելու, բժշկական ծառայություններ ընտրելու ձեր հնարավորությունը ձեզնից վերցվի միայն նրա համար, որ դուք հաշմանդամություն ունեք: Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձանց համար սա իրական փաստ է, և սրա հետևանքները կարող են վատ լինել: Երբ անձինք չեն ունենում գործելու համար բավարար իրավունակություն, ոչ միայն ոտնահարվում է օրենքի առաջ հավասարության նրանց իրավունքը, այլև ոտնահարվում է մարդու մյուս իրավունքներից օգտվելու և դրանք պաշտպանելու իրավունքը: Հաշմանդամություն ունեցող անձի անունից հանդես եկող խնամակալները կամ հոգաբարձուները երբեմն չեն գործում՝ ելնելով այն անձի շահերից, որին ներկայացնում են, ավելի վատ՝ նրանք երբեմն չարաշահում են իրենց դիրքը՝ խախտելով այլոց իրավունքները:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող

անծինք ունեն այլ անձանց հետ հավասար իրավունակություն: Այլ կերպ ասած՝ անձը չի կարող կորցնել իր իրավունակությունը սոսկ իր հաշմանդամության պատճառով: (Ամեն դեպքում իրավունակությունը կարող է կորսվել բոլորի համար կիրառելի իրավիճակներում, ինչպիսին է հանցագործության համար դատապարտվելը):

Աջակցման ենթակա որոշումների ընդունումը գործնականում

Կանադայի Բրիտանական Կոլումբիայի նահանգը հանդիսանում է աջակցման ենթակա որոշումների ընդունումը օրենսդրությունում, քաղաքականությունում և պրակտիկայում ներառելու ուղղությամբ առաջատար իրավասություններ ունեցողներից մեկը: Հաշմանդամություն ունեցող անձը կարող է աջակցման ցանցի հետ կնքել «ներկայացուցչության մասին» պայմանագիր: Այդ պայմանագիրը նշան է այլոց համար, ինչպիսիք են բժիշկները, ֆինանսական հաստատությունները և ծառայություններ մատուցողները, որ անձը ցանցին իրավասություն է տվել աջակցել իրեն որոշումներ ընդունելիս և ներկայացնել իրեն որոշակի հարցերում:

Օրենսդրության նորարարություններից մեկն այն է, որ առավել էական հաշմանդամություն ունեցող անձինք կարող են աջակցման ցանցի հետ ներկայացուցչության մասին պայմանագիր կնքել՝ պարզապես «վստահություն» ցույց տալով նշանակված աջակցողների նկատմամբ: Այս պայմանագիրը կնքելու համար անձը կարիք չունի ապացուցելու իր գործունակությունը սովորական չափանիշներով, ինչպիսիք են համապատասխան տեղեկատվությունը հասկանալու իր ունակությունն ապացուցելը, հետևանքները գնահատելը, իր կամքով գործելը և անկախորեն որոշում ընդունելը:

Բազմաթիվ անհատներ և աջակցման ցանցեր կնքել են ներկայացուցչության պայմանագրեր՝ որպես այլընտրանք խնամակալությանը կամ փոխարինողի կողմից որոշումների ընդունման այլ տեսակների: Համայնքային վերականգնողական ներկայացուցչության պայմանագրի ռեսուրսային կենտրոնը օգնում է աջակցման ցանցերի զարգացմանը և կայացմանը՝ տեղեկատվություն և գրականություն տրամադրելով, սեմինարներ անցկացնելով և խորհրդատվությամբ: Կենտրոնը նաև վերահսկում է ռեգիստրը, որտեղ մինչև անձի հետ պայմանագիր կնքելը ցանցը կարող է դնել իր պայմանագիրը, եթե մյուս կողմերը ցանկանում են տեսնել այն:

Հավելյալ տեղեկատվության համար տես www.rarc.ca կայքէջը:

Կոնվենցիան ընդունում է, որ հաշմանդամություն ունեցող որոշ անձինք աջակցության կարիք ունեն իրենց գործունակությունն իրացնելիս, այսպիսով պետությունները պետք է անեն ամեն ինչ՝ աջակցելու այդ անհատներին և պետք է երաշխիքներ սահմանեն այդ աջակցության չարաշահման դեմ: Աջակցությունը կարող է ունենալ մեկ վստահելի անձի կամ անձանց խմբի ձև. դրա անհրաժեշտությունը կարող է լինել երբեմն-երբեմն կամ ամբողջ ժամանակ:

Ես ի՞նչ կարող եմ անել ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել իրենց գործունակությունը.

- Խորհրդակցե՛ք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ տեսնելու համար, թե արդյոք ձեր ընտրատարածքում առկա՞ է աջակցման ենթակա որոշումների ընդունման համակարգ:
- Ստուգե՛ք խնամակալության մասին օրենքները և պարզե՛ք, թե արդյոք օրենքները և քաղաքականությունը նպաստո՞ւմ են աջակցման ենթակա որոշումների ընդունմանը և հարգում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունակությունը:
- Բարձրացրե՛ք աջակցման ենթակա որոշումների ընդունման հարցը և խրախուսե՛ք խորհրդարանում աջակցման ենթակա որոշումների ընդունման վերաբերյալ ծրագրերի մշակումը:
- Այցելե՛ք հոգեբուժական հաստատություններ տեսնելու, թե ի՞նչ աջակցման ցանցեր կան:
- Անցկացրե՛ք հանդիպումներ ձեր ընտրատարածքում՝ լսելու համար հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության և աջակցման հետ կապված փորձի մասին:
- Հավաքե՛ք աջակցման ենթակա որոշումների ընդունման մասին դրական փորձի օրինակներ և պատմե՛ք այդ մասին այլ երկրների խորհրդարանականների հետ:
- Ապահովե՛ք, որ կոնվենցիայով նախատեսված խորհրդարանական հանձնաժողովները իրենց օրակարգերում ներառեն իրավունակության և աջակցման ենթակա որոշումների ընդունման հարցերը:
- Առաջարկե՛ք աջակցման ենթակա որոշումների ընդունման ազգային համակարգի ստեղծում՝ համաձայն ՄԱԿ-ի կոնվենցիայի:

Աջակցման ենթակա որոշումների ընդունման հարցում կանխավարկածը միշտ պետք է լինի հօգուտ հաշմանդամություն ունեցող անձի, որի վրա պետք է ազդի այդ որոշումը: Անհատը որոշում ընդունող է, աջակցող անձ(ինք)ը անհրաժեշտության դեպքում բացատրում է(են) խնդիրը և մեկնաբանում են նշանակությունները և նախապատվությունները հաշմանդամություն ունեցող անձի համար: Նույնիսկ երբ հաշմանդամություն ունեցող որևէ անձ կարիք ունի լրիվ աջակցության, աջակցող անձ(ինք)ը պետք է(են) հնարավորություն տան այդ անձին իրականացնելու իր իրավունակությունը հնարավորինս լիարժեք կերպով՝ համաձայն անձի ցանկության: Սա տարբերում է աջակցման ենթակա որոշումների ընդունումը

որոշումներ ընդունողի փոխարինումից, ինչպիսիք են՝ նախնական հրահանգներ տալը և օրինական ներկայացուցիչները/ընկերները, երբ խնամակալը կամ հոգաբարձուն ունի անձի անունից որոշումներ ընդունելու դատարանի կողմից տրված իրավասություն՝ չկրելով պարտադիր պարտականություն ապացուցելու, որ այդ որոշումները բխում են անձի լավագույն շահերից և համապատասխանում են նրա ցանկություններին: Այս գործընթացներն ուժի մեջ են մտնում, երբ անձը պաշտոնապես ճանաչվում է անգործունակ: 12-րդ հոդվածի 4-րդ կետը կոչ է անում երաշխիքներ ստեղծել այս գործընթացի չարաշահումից պաշտպանություն ապահովելու համար:

Աջակցման ենթակա որոշումների ընդունումը կարող է ունենալ բազմաթիվ տեսակներ: Դրանք աջակցելով անձին՝ կարող են բացատրել նրա մտադրությունները այլ անձանց կամ օգնել նրան հասկանալու իր ընտրությունը: Դրանք կարող են օգնել ուրիշներին հասկանալու, որ նշանակալի հաշմանդամություն ունեցող անձը նույնպես անձ է իր կենսագրությամբ, հետաքրքրություններով և կյանքի նպատակներով, և որ ինչ-որ մեկն ունակ է իրականացնել նրա գործունակությունը:

Չնայած աջակցման ենթակա որոշումների որոշ լավ մոդելներ կան, հիմնականում չկա հստակ քաղաքականություն. խնամակալության մասին օրենքները և պրակտիկան դեռևս գերակշռող են: Երբեմն դժվար է լինում աջակցման ցանցի գործարկումը, մասնավորապես երբ անձը չի կարողանում գտնել վստահելի անձ կամ անձինք: Բացի այդ, ինստիտուցիոնալ համակարգերում անձինք հաճախ մերժվում են աջակցման հարցում, նույնիսկ եթե դա կիրառելի է: Բազմակողմանի աջակցման ցանցերի ստեղծումը պահանջում է ջանքեր և ֆինանսական ներդրում, չնայած խնամակալության գործող մոդելները կարող են նույնչափ ծախսատար լինել: Աջակցման ենթակա որոշումների ընդունումը, այսպիսով, պետք է դիտարկվի որպես առկա ռեսուրսների վերաբաշխում, այլ ոչ թե լրացուցիչ ծախսեր:

Կոնվենցիայի կիրարկման և մշտադիտարկման համար ազգային ինստիտուտների ստեղծումը

Կոնվենցիայի կիրարկումը չի պահանջում միայն համապատասխան օրենսդրություն և քաղաքականություն, այն նաև պահանջում է ֆինանսական միջոցներ և ինստիտուտներ, որոնք այդ օրենքները և քաղաքականությունը կ'ներդնելու, կ'մշտադիտարկելու իրավասություն ունեն: Իրականում կոնվենցիայի 33-րդ հոդվածը մասնակից պետություններից պահանջում է հատուկ մեխանիզմի ստեղծում ուժեղացնելու համար ազգային մակարդակում հաշմանդամություն ունեցող կանանց, երեխաների և տղամարդկանց իրավունքների իրականացումն ու մշտադիտարկումը: Կոնվենցիան պետություններից պահանջում է՝

- կիրարկման համար կառավարությունից նշանակել պատասխանատու կառույց կամ կառույցներ,
- քննարկել կառավարությունում համակարգման մեխանիզմների ստեղծումը կամ հաստատումը տարբեր հատվածներում և մակարդակներում համապատասխան աշխատանքների իրականացման համար,
- ստեղծել անկախ կառույց, ինչպիսին է, օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանի ազգային ինստիտուտը, աջակցելու և մշտադիտարկելու համար կոնվենցիայի կիրարկումը:

Կոնվենցիան ամրագրում է, որ քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, պետք է ամ-

բողջությամբ մասնակցեն մշտադիտարկման այս գործընթացի բոլոր փուլերին, ցանկալի է, որ նրանք ներգրավվեն կոնվենցիայի կիրարկման ուղղությամբ քաղաքականության, ծրագրերի և օրենսդրության ստեղծմանը և կիրարկմանը:

Միևնույն ժամանակ, ազգային դատարանները և այլ ատյաններ պետք է առանցքային դեր խաղան ապահովելու համար, որ կոնվենցիայում թվարկված իրավունքները պաշտպանվեն օրենքով:

Պատասխանատու կառույցներ

Թեպետ կոնվենցիան պետություններից պահանջում է կիրարկման հետ կապված հարցերը կարգավորելու համար կառավարությունում նշանակել մեկ կամ պատասխանատու կառույցներ և քննարկել կառավարությունում համակարգման մեխանիզմի ստեղծման հարցը, այնուամենայնիվ կոնվենցիան չի նկարագրում այս կառույցների ո՛չ ձևը և ո՛չ էլ գործառույթները: Ինչևէ, քանի որ միջազգային այլ փաստաթղթեր, այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող անձանց մասին համաշխարհային գործողությունների ծրագիրը և Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների ապահովման կանոնները, նույնպես կոչ են անում ստեղծել նման կառույցներ, բազմաթիվ երկրներ ստեղծել կամ նշանակել են հաշմանդամության պատասխանատու կառույցներ կամ համակարգման մեխանիզմներ:

Պատասխանատու կառույցը կարող է լինել որևէ նախարարությունում կամ նախարարությունների խմբում աշխատող անձ կամ այնտեղ գործող բաժին, կառույց, ինչպիսին է հաշմանդամության հարցերի հանձնաժողովը, կամ առանձին նախարարություն, ինչպիսին է, օրինակ՝ մարդու իրավունքների հարցերի նախարարությունը կամ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերի նախարարությունը, կամ վերը նշված երեք նախարարությունների համակցություն: Եթե այս մարմինները կամ մեխանիզմներն արդեն իսկ գոյություն ունեն, նրանք պետք է վերանայվեն կոնվենցիայի վերահսկման առումով և համակարգեն տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում տարբեր հատվածների գործադրած ջանքերը:

Ինչ ձևով էլ պատասխանատու կառույցը նշանակվի, այն չպետք է գործի միայնակ, այլ պետք է ունենա ղեկավար դեր կոնվենցիան ներդնելու և դրա կատարումը համակարգելու հարցում: Այն պետք է համալրվի բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներով, հիմնադրվի օրենսդրական, վարչական և այլ իրավական եղանակներով, մշտապես գործի և գտնվի կառավարության հնարավորինս բարձր մակարդակում:

Համակարգման մեխանիզմներ

Կոնվենցիան կոչ է անում պետություններին կառավարությունում հաստատել համակարգման մեխանիզմ տարբեր հատվածներում և տարբեր մակարդակներում համապատասխան աշխատանքներին աջակցելու համար: Պետությունները

Պատասխանատու կառույցների աշխատանքը

- Խորհրդակցել պետության գլխի կամ կառավարության ղեկավարի, քաղաքական գործիչների և ծրագիր մշակողների հետ օրենսդրության, ծրագրերի և քաղաքականության և նախագծերի զարգացման վերաբերյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց վրա ազդեցության առումով:
- Համակարգել տարբեր նախարարությունների և վարչությունների գործունեությունը՝ կապված մարդու իրավունքների և հաշմանդամության հետ:
- Համակարգել մարդու իրավունքների և հաշմանդամության հետ կապված միջոցառումները կառավարության դաշնային, ազգային, տարածաշրջանային, մահանգային, պրովինցիալ և տեղական մակարդակներում:
- Վերանայել ռազմավարությունները և քաղաքականությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարգումն ապահովելու համար:
- Նախագծել, վերանայել կամ փոփոխել համապատասխան օրենսդրությունը:
- Բարձրացնել կոնվենցիայի և կամընտիր արձանագրության վերաբերյալ իրազեկվածությունը կառավարությունում:
- Ապահովել, որ կոնվենցիան և կամընտիր արձանագրությունը թարգմանվեն տեղական լեզուներով և տարածվեն մատչելի ձևաչափերով:
- Սահմանել կոնվենցիայի վավերացման գործողությունների ծրագիր:
- Սահմանել կոնվենցիայի կիրարկման գործողությունների ծրագիր:
- Վերահսկել մարդու իրավունքների և հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի կիրառումը:
- Համակարգել պետության պարբերական զեկույցների պատրաստումը:
- Հանրության շրջանում բարձրացնել հաշմանդամության հետ կապված հարցերի, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը:
- Կառավարությունում հաշմանդամության վերաբերյալ հարցերով իրականացնել ունակությունների զարգացում:
- Արդյունավետ քաղաքականության մշակման և կիրառման գնահատման համար ապահովել և համակարգել տվյալների և վիճակագրության հավաքում:
- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք մասնակցեն իրենց վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունների և օրենքների մշակմանը:
- Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը կազմակերպություններին և քաղաքացիական հասարակությանը և աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների ստեղծմանը:

կարող են քննարկել համակարգման մեխանիզմի ստեղծումը կամ վերանայել գործող համակարգման մեխանիզմը, որը՝

- ունի մշտական կառուցվածք համապատասխան ինստիտուցիոնալ կարգավորումներով, որոնք հնարավորություն կտան համակարգումն իրականացնել կառավարության մակարդակում,
- ապահովում է համակարգում տեղական, տարածաշրջանային և ազգային/դաշնային մակարդակներում,
- ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց ներկայացնող կազմակերպությունների կամ հասարակական կազմակերպությունների մասնակցությունը՝ ստեղծելով քաղաքացիական հասարակության հետ քննարկումների մշտապես գործող ֆորում:

Տարբեր ատյաններ ներկայացրել են պատասխանատու կառույցներ և համակարգման մեխանիզմներ, որոնք պետք է գործեն որպես միջնորդներ կամ կառավարության և մարդու իրավունքների ազգային կազմակերպությունների միջև, կամ, ավելի ընդհանուր, կառավարության և անհատների կամ նրանց ներկայացուցիչ կազմակերպությունների միջև: Հաճախ հաշմանդամության համակարգման մեխանիզմներն ընդգրկում են ներկայացուցիչներ տարբեր նախարարություններից (աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ֆինանսների, առողջապահության, բնակապահովման, կրթության և զբաղվածության նախարարություններ), երբեմն դրանք ներառում են նաև ներկայացուցիչներ տեղական և տարածքային իշխանություններից և հաճախ ընդգրկում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններ: Ավստրալիայի հաշմանդամության ազգային խորհուրդը, օրինակ՝ խորհրդատվություն է իրականացնում կառավարության համար հաշմանդամության հետ կապված հարցերով և կազմակերպում է զրույցներ հանրության հետ ապահովելու համար երկխոսությունը և իրավունք կրողներից առաջին ձեռքից տեղեկատվություն քաղելու համար:

Մարդու իրավունքների ազգային կառույցներ

Կոնվենցիայի հարաբերակցությունը մարդու իրավունքների ազգային կառույցներին

Կոնվենցիան պետություններից պահանջում է ստեղծել շրջանակ, ներառել մեկ կամ ավելի անկախ մեխանիզմներ կոնվենցիայի կիրարկմանն աջակցելու (օրինակ՝ իրազեկվածության բարձրացման արշավների և հանրակրթության միջոցով), պաշտպանելու (օրինակ՝ անհատական բողոքները քննելով և դատական վարույթներին մասնակցելով) և մշտադիտարկելու (օրինակ՝ օրենսդրությունը վերանայելով և ներպետական կիրարկման վիճակը ստուգելով) համար: Կոնվեն-

ցիան ավելի շուտ հղում է կատարում «շրջանակին», քան «մարդու իրավունքների ազգային կառույցին»: Այնուամենայնիվ նման շրջանակ ստեղծելով՝ պետությունը պետք է հաշվի առնի «մարդու իրավունքների պաշտպանության և աջակցության ազգային կառույցների կարգավիճակի և գործունեության հետ կապված սկզբունքները», ինչը համաձայնեցվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հետ 1993 թ.: Այս սկզբունքները հայտնի են դարձել որպես «Փարիզյան սկզբունքներ» (տե՛ս հաջորդ էջը): Հաշվի առնելով այս կապը՝ մարդու իրավունքների ազգային կառույցը անկախ «շրջանակի» ամենահավանական ձևն է՝ համաձայն կոնվենցիայով սահմանված ազգային մշտադիտարկման վերաբերյալ դրույթների:

Մարդու իրավունքների ազգային կառույցների տեսակները

«Մարդու իրավունքների ազգային կառույց» եզրույթը ձեռք է բերել առանձնահատուկ նշանակություն: Քանի որ մարդու իրավունքներին առնչվող «կառույցների» քանակը և տեսակները բավական շատ են և ներառում են կրոնական կառույցները, արհմիությունները, ՋԼՄ-ները, հասարակական կազմակերպությունները, կառավարության ստորաբաժանումները, դատարանները և օրենսդիր իշխանությունը, «մարդու իրավունքների ազգային կառույց» եզրույթը ենթադրում է մի մարմին, որի առանձնահատուկ գործառնություն է մարդու իրավունքների պաշտպանությունը և դրանց աջակցելը:

Թեպետ չկան երկու ճշգրտորեն նույնական կառույցներ, դրանք բոլորն էլ որոշ ընդհանրություններ ունեն: Դրանք հաճախ ունենում են վարչական բնույթ: Նրանցից շատերն նաև ունեն քվադրիպատական լիազորություններ, ինչպիսիք են՝ վեճերի լուծումը, չնայած մարդու իրավունքների ազգային կառույցները ո՛չ դատարան են, ո՛չ էլ օրինաստեղծ մարմին: Որպես կանոն՝ այս կառույցները ազգային և/կամ միջազգային մակարդակում ունեն մարդու իրավունքների կապակցությամբ շարունակական խորհրդատվական լիազորություններ: Նրանք իրենց աշխատանքն անում են կա՛մ ընդհանուր կերպով, կարծիքներ և առաջարկություններ տալով, կա՛մ անհատների ու խմբերի ներկայացրած բողոքները քննելով և լուծելով: Որոշ երկրներում սահմանադրությունը նախատեսում է մարդու իրավունքների ազգային կառույցի ստեղծում: Ավելի հաճախ նման կառույցները ստեղծվում են օրենքով կամ որոշ-

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը հասնելը շարունակական գործընթաց է: Այս կոնվենցիան կծառայի որպես «Ճանապարհային քարտեզ» և հենակետ հնարավորություններ ապահովելու և այնպիսի հասարակություն ստեղծելու համար, որտեղ մատչելիությունը, արդարությունը և հավասարությունը առկա են Ավստրալիայում հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար»:

Գրեհեմ Էդվարդս, խորհրդարանի անդամ
(Ավստրալիա)

մամբ: Թեև ազգային շատ կառույցներ գործում են գործադիր իշխանությանը կից, նրանց անկախության փաստացի մակարդակը կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ անդամակցությունից և դրանց գործունեության ձևից:

Գոյություն ունեցող ազգային կառույցների մեծ մասը կարող է դասակարգվել որպես երկու լայն կատեգորիաներից մեկին պատկանող՝ «մարդու իրավունքների կոմիտեներ» և «օմբուդսման»: Մեկ այլ ավելի քիչ տարածված, բայց ոչ պակաս կարևոր տարատեսակ են «մասնագիտացված» ազգային կառույցները, որոնք պաշտպանում են անձանց կոնկրետ խմբի շահերը, ինչպիսիք են՝ հաշմանդամություն ունեցող անձինք, էթնիկ և լեզվական փոքրամասնությունները, բնիկ բնակչությունը, երեխաները, փախստականները կամ կանայք:

Փարիզյան սկզբունքներ

Կոնվենցիայի պահանջներին համապատասխանող մեղանիզմների ստեղծման ժամանակ մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն մարդու իրավունքներին աջակցող կամ դրանց պաշտպանությամբ զբաղվող ազգային կառույցների կարգավիճակի և գործունեության վերաբերյալ սկզբունքները: Այս սկզբունքներն առաջին անգամ նախագծել է է 1991 թ. Փարիզում տեղի ունեցած Մարդու իրավունքների ազգային կառույցների միջազգային համաժողովը, որն այնուհետև 1993 թ. ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից¹: Դրանք հայտնի են որպես «Փարիզյան սկզբունքներ»:

Մարդու իրավունքների ազգային կառույցների պոտենցիալ գործառույթները

Քացի ստորև ներկայացված աղյուսակում նշված յոթ սկզբունքները սահմանելը, որոնք նպատակ ունեն ստեղծելու մարդու իրավունքների անկախ և վստահելի կառույցներ, Փարիզյան սկզբունքները պարունակում են նաև այդ կառույցների կողմից ստանձնելիք մի շարք պարտականություններ: Քանի որ մարդու իրավունքների ազգային կառույցները պետք է ունենան հնարավորինս լայն մանդատ, որը սահմանված կլինի կամ սահմանադրությամբ, կամ օրենքներով, Փարիզյան սկզբունքները սահմանում են, որ այս կառույցները պետք է՝

- մշտադիտարկեն մասնակից պետության պարտավորությունների կատարումը՝ կապված մարդու իրավունքների հետ և առնվազն տարին մեկ անգամ զեկույց ներկայացնեն:
- Կառավարության պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ զեկույցներ կամ առաջարկություններ ներկայացնեն կառավարությանը

1. Գլխավոր ասամբլեայի 1993 թ. դեկտեմբերի 20-ի 48/134 բանաձև:

մարդու իրավունքների հետ կապված հարցերի վերաբերյալ, ներառյալ օրենսդրությունը և վարչական դրույթները, մարդու իրավունքների խախտումները, երկրում մարդու իրավունքների վիճակը և այն բարելավելուն ուղղված նախաձեռնությունները:

- Աջակցեն ազգային օրենսդրության և պրակտիկայի ներդաշնակեցմանը մարդու իրավունքների միջազգային սկզբունքներին:
- Նպաստեն մարդու իրավունքների համաձայնագրերի վավերացմանը:
- Ներդրում ունենան ՄԱԿ-ի համաձայնագրային մարմիններին ներկայացվող մարդու իրավունքների համաձայնագրերի կատարման վերաբերյալ մասնակից պետությունների զեկույցների պատրաստմանը:
- Համագործակցեն տարածաշրջանային և ՄԱԿ-ի, ինչպես նաև այլ պետությունների մարդու իրավունքների մարմինների հետ:
- Աջակցեն մարդու իրավունքների վերաբերյալ կրթական ծրագրերին:
- Բարձրացնեն մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը և ջանքեր գործադրեն խտրականության վերացման ուղղությամբ:
- **Մշտադիտարկեն ազգային օրենսդրությունը և պրակտիկան:**
Ազգային կառույցներին բնորոշ է ազգային օրենսդրության՝ մարդու իրավունքների չափանիշներին համապատասխանությունն ապահովելու մանդատը, ինչը առաջարկվում է Փարիզյան սկզբունքներով: Սա կարող է կատարվել գործող օրենքներն ուսումնասիրելով և նոր օրենքների վերաբերյալ մեկնաբանություններ անելով կամ դրանք մշտադիտարկելով: Մի շարք կառույցներ ռեսուրսներ են հատկացրել առաջարկվող օրենսդրության մշտադիտարկման համար, որպեսզի նրանք կարողանան քննարկել և անհրաժեշտության դեպքում դիտողություններ անել մարդու իրավունքների չափանիշներին առաջարկվող օրենսդրության համապատասխանության վերաբերյալ: Կախված այն ազդեցության աստիճանից, որ առաջարկվող օրենսդրությունը կարող է ունենալ մարդու իրավունքների վրա, ազգային կառույցները նաև կարող են բարձրացնել հանրային իրազեկվածությունը, որպեսզի անհատները և կազմակերպությունները ցանկության դեպքում կարողանան դիմումներ ներկայացնել կառավարություն:

Փարիզյան սկզբունքների մանրամասները

Փարիզյան սկզբունքները ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված նվազագույն առաջարկությունների այն խումբն են, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանության և աջակցության ազգային կառույցների կարգավիճակին և գործունեությանը: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 33(2)-րդ հոդվածը պահանջում է մասնակից պետություններից հաշվի առնել այս սկզբունքները կոնվենցիայի կիրակմանը աջակցելու, պաշտպանելու և մշտադիտարկելու մեխանիզմներ սահմանելու կամ ստեղծելու ժամանակ: Համաձայն Փարիզյան սկզբունքների՝ այս մեխանիզմները՝

- կառավարությունից անկախ են, ինչը երաշխավորված է կամ գործող օրենքներով, կամ սահմանադրական դրույթներով:
- Իրենց դերն իրականացնելիս և անդամության հարցում գործեն բազմակարծության հիման վրա:
- Ունենան հնարավորինս լայն մանդատ, որը հնարավորություն կտա կոնվենցիայի համատեքստում կոլեկտիվ կերպով աջակցել, պաշտպանել և մշտադիտարկել կոնվենցիայի կիրարկումը բոլոր ասպեկտներով՝ օգտագործելով տարբեր միջոցներ, ներառյալ գործող օրենքների և նախագծերի ու պրակտիկաների վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ անելու հնարավորությունը:
- Ունենան հետաքննություն անցկացնելու բավարար լիազորություն, որը բողոքներ լսելու և դրանք իրավասու մարմիններին փոխանցելու հնարավորություն կտա:
- Աչքի ընկնեն կանոնավոր և արդյունավետ գործունեությամբ:
- Բավարար կերպով ֆինանսավորվեն և չենթարկվեն ֆինանսական հսկողության, որը կարող է ազդել նրանց անկախության վրա:
- Կոնվենցիայի համատեքստում հասանելի լինեն հասարակության, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ներառյալ հաշմանդամություն ունեցող կանայք և երեխաները և նրանց ներկայացնող կազմակերպությունները:

Հավասարապես կարևոր է նաև ազգային ինստիտուտների դերը կառավարության գործունեությունը և քաղաքականությունը մշտադիտարկելու հարցում՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը հաշմանդամություն ունեցող անձանց մասին միջազգային պարտավորություններին և ազգային օրենքներին, այդ թվում նաև՝ համապատասխան նախադեպային իրավունքին, մարդու իրավունքների ազգային ռազմավարություններին կամ գործողությունների ծրագրերին, ինչպես ցանկացած այլ կիրառելի ընթացակարգային կանոններին:

■ Երկրում մարդու իրավունքները բարելավելուն ուղղված նախաձեռնություններ

Ընդհանրապես պետությունները պետք է սահմանեն մարդու իրավունքների ազգային գործողությունների ծրագիր՝ ընդգծելով այն ռազմավար-

րությունը կամ գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն մարդու իրավունքների մասին փաստաթղթերով ամրագրված պարտավորությունների կատարման ուղղությամբ: Այս ռազմավարությունները և գործողությունների ծրագրերը մշակելիս պետությունները պետք է հաճախ խորհրդակցեն մարդու իրավունքների ազգային կառույցների հետ: Անկախ պետության՝ մարդու իրավունքների գործողությունների ծրագրից, մարդու իրավունքների ազգային կառույցները կարող են մշակել իրենց ծրագիրը՝ նպաստելու մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին: Ամեն դեպքում, այս ռազմավարությունների նախագծման ժամանակ պետք է հաշվի առնվի համապատասխան կառավարության վարչությունների և քաղաքացիական հասարակության կարծիքը: Կոնվենցիան սահմանում է, որ քաղաքացիական հասարակությունը, հատկապես հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ներկայացնող կազմակերպությունները, հաշմանդամություն ունեցող երեխաները, հաշմանդամություն ունեցող անձանց մասին հոգ տանող մարդիկ պետք է ներգրավված լինեն այս գործընթացում:

Ազգային կառույցները նաև պետք է սահմանեն ընթացակարգային կանոններ, որոնք վերաբերում են որոշակի իրավունքների կոնկրետ իրավիճակներում: Օրինակ՝ ընթացակարգային կանոնները կարող են վերաբերել կոնկրետ իրավունքի իրականացմանը, կոնկրետ կառավարության մարմնի կամ գործակալությունների խմբի վարքագծին, հանրային կամ մասնավոր կոնկրետ միջոցառման կամ միջոցառումների, կամ կոնկրետ արտադրության տեսակին կամ գործունեությանը: Հաշվի առնելով այդ կանոնների կարգավորիչ բնույթը՝ դրանք պետք է սահմանվեն օրենքով և, որպես կանոն, ընդունվեն լայն քննարկումներից հետո:

■ **Հանրային հարցումները, ուսումնասիրությունները կամ զեկույցները**

Թեպետ առանձին հարցերի վերաբերյալ հանրային հարցումներ կամ ուսումնասիրություններ իրականացնելը պահանջում է ռեսուրսներ, կարող է օգտակար լինել իրավունքների նկատմամբ հարգանքին նպաստելու և հանրային իրազեկվածությունը բարձրացնելու առումով: Նման ուսումնասիրությունները կարող են իրականացվել բացառապես մարդու իրավունքների ազգային կառույցի հայեցողությամբ կամ նախաձեռնվեն կառավարության կողմից, օրինակ՝ արդարադատության նախարարի կամ գլխավոր դատախազի, կամ իրավունքների հատուկ պաշտպանի միջոցով, կամ որպես բազմաթիվ բողոքների արդյունք, որոնցով կարող են բարձրացվել համակարգային խնդիրներ: Կառույցները կարող են նաև փաստահավաք առաքելություններ անցկացնելու լիազորություններ ունենալ, որոնք կարող են կապված լինել կամ կառավարության քաղաքականության մշակման հետ, կամ դատական գործընթացների իրականացման հետ: Հարցումներ և ուսումնասիրու-

թյուններ իրականացնելու մանդատը պետք է ուղեկցվի անհրաժեշտ տեղեկատվություն և ապացույցներ հավաքելու լիազորությամբ, որպեսզի այդ գործառնությունն արդյունավետորեն իրականացվի: Հետաքննություն իրականացնելու լիազորություն չունեցող մարդու իրավունքների ազգային կառույցը պետք է ունենա տեղեկատվություն հավաքելու ինչ-որ իրավասություն:

Կոնվենցիայի 35-րդ հոդվածը պահանջում է մասնակից պետություններից պարբերաբար զեկույցներ ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե կոնվենցիայով նախատեսված իրենց պարտավորությունների կատարմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Կոնվենցիայի 4(3)-րդ հոդվածի (հաշմանդամություն ունեցող անձանց հետ խորհրդակցելը և նրանց ներգրավելը) և 35(4)-րդ հոդվածի համատեղ ազդեցությունը նշանակում է, որ պետություններն այդ զեկույցները պատրաստելիս պետք է սերտ խորհրդակցություններ անցկացնեն հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ: Ազգային կառույցները կարող են դերակատարություն ունենալ զեկույցների պատրաստման հարցում և կարող են նպաստել քաղաքացիական հասարակության և կառավարության միջև երկխոսությանը զեկույցը պատրաստելու ընթացքում: Ազգային կառույցները նաև կարող են ապահովել ստվերային զեկույցներ, այսինքն՝ կառավարության զեկույցներին այլընտրանքային զեկույցներ, մասնավորապես այն դեպքերում, երբ կառույցը կարծում է, որ իր դիտողությունները բավարար չափով կամ պատշաճ կերպով հաշվի չեն առնվել կառավարության զեկույցում: Հաշվետվության ներկայացման գործընթացի ընթացքում համաձայնագրերի մշտադիտարկման մարմիններն ավելի շատ են մտնում ուղղակի հաղորդակցության մեջ մարդու իրավունքների ազգային կառույցների հետ:

■ Վեճերի լուծումը

Փարիզյան սկզբունքներում արված առաջարկությունների համաձայն՝ մարդու իրավունքների ազգային կառույցների ընդհանուր գործառնությունն արդու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ վեճերի լուծմանն աջակցելն է: Վեճերի լուծման հարցին օժանդակելու մանդատը նույնպես պետք է ուղեկցվի տեղեկատվություն և ապացույցներ հավաքելու իրավասությամբ:

■ Կրթություն և հանրային իրազեկում

Փարիզյան սկզբունքները առանձնահատուկ կերպով առաջարկում են աջակցել մարդու իրավունքների կրթական ծրագրերին: Եթե մարդու իրավունքները պետք է հարգվեն և ենթարկվեն արդյունավետ մշտադիտարկման, ապա կարևոր է, որ անհատները, մասնավոր ձեռնարկու-

Իրավունքների պաշտպանությունը Հնդկաստանում

Մարդու, այդ թվում նաև՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության Հնդկաստանի ինստիտուցիոնալ կառուցվածքը անշուշտ բավական բարդ է՝ հաշվի առնելով, որ երկիրը բաղկացած է 29 նահանգներից և վեց կենտրոնացված կառավարվող տարածքներից: 2006 թ. փետրվարին սոցիալական արդարության և զարգացման նախարարության, որ կառավարությունում ունի հաշմանդամության հետ կապված քաղաքականություն որոշելու իրավասություն, մշակել և ընդունել է Հաշմանդամություն ունեցող անձանց ազգային քաղաքականությունը (ՀԱԱԲ): ՀԱԱԲ-ը սահմանել է միջգերատեսչական մարմին՝ համակարգելու համար դրա կիրառման հետ կապված հարցերը, այն բաղկացած է կենտրոնական համակարգման հանձնաժողովից՝ ազգային մակարդակում և նահանգային համակարգման հանձնաժողովներից՝ նահանգների մակարդակում: Այս հանձնաժողովները համակարգում են տարաբնույթ մասնագիտացված կառույցներ և մարմիններ Հնդկաստանի տարածքում, այդ թվում՝ Վերականգնման ազգային խորհուրդը, Աուտիզմ, գլխուղեղի կաթված, մտավոր հետամնացություն և բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ապահովության ազգային տրեստը:

Մինչև ՀԱԱԲ-ի ընդունումը, Հաշմանդամություն ունեցող անձանց կոմիտեն գործում էր Հաշմանդամություն ունեցող անձանց (Հավասար հնարավորությունների, իրավունքների պաշտպանության և լիարժեք մասնակցության ապահովում) մասին 1995 թ. ակտի հիման վրա: Հանձնաժողովի պարտականությունները ներառում են կառավարության հատկացրած միջոցների օգտագործման մշտադիտարկումը, նահանգային հանձնակատարների աշխատանքի համակարգումը և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ու նրանց մատուցվող ծառայությունների երաշխավորումը: Չնայած հանձնաժողովը չի կարող կայացնել պարտադիր որոշումներ, այն կիսադատական մարմին է և հնարավորություն է տալիս գերագույն հանձնակատարին հետաքննել իրավունքների սահմանափակման և օրենքների չկատարման վերաբերյալ բողոքները, իրականացնել լսումներ, ստանալ ապացույցներ երդման հիման վրա և ծանուցագրեր ուղարկել: Այդ իսկ պատճառով հանձնաժողովն ունի երկակի դեր՝ վերահսկել ֆինանսները և մշտադիտարկել օրենքները:

Հնդկաստանում գործում է նաև Մարդու իրավունքների ազգային հանձնաժողով, որն ուսումնասիրում է անհատական դիմումները, նախաձեռնում է դատական գործեր Հնդկաստանի գերագույն դատարանում, ներգրավվում է մարդու իրավունքների խախտումների հետ կապված դատարանի որոշմանը սպասող բողոքների գործընթացներում, վերանայում է մարդու իրավունքների հետ կապված օրենքները, այդ թվում նաև՝ սահմանադրությունը, ինչպես նաև իրականացնում է ուսումնասիրություններ: Հանձնաժողովն ակտիվ է եղել համապատասխան նախարարություններին առաջարկներ ներկայացնելու հարցում Հաշմանդամություն ունեցող անձանց մասին ազգային քաղաքականության մշակման ժամանակ և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի շուրջ բանակցությունների ժամանակ կառավարությանը խորհրդատվություն ներկայացնելու հարցում:

թյունները և կառավարության հաստատություններն իմանան այդ իրավունքների և դրանց հետ կապված պարտավորությունների մասին: Հնարավոր է անհրաժեշտ լինի այդ ծրագրերը որոշակի խմբերի կարիքներին հարմարեցնել: Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող ծրագրերի նյութերը պետք է պատրաստվեն մատչելի ձևաչափերով, ինչպիսիք են Բրայլի համակարգը, խոշոր տառատեսակները, դյուրըմբռնելի լեզուն, լուսագրերը կամ մատչելի էլեկտրոնային ձևաչափերը:

Մարդու իրավունքների ազգային կառույցները և բողոքարկման մեխանիզմները

Փարիզյան սկզբունքները կոչ են անում, որ ազգային կառույցներն ունենան հետաքննության բավարար լիազորություններ և բողոքներ լսելու հնարավորություն: Գործող ազգային կառույցները, որոնք ստանձնել են կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկման լիազորություններ, պետք է կարգավորեն իրենց միջնորդական և հաշտարարական ընթացակարգերը, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների մատչելիությունը այդ գործընթացներին: Կան բազմաթիվ մեթոդներ, որոնցով այդ կառույցները կարող են իրականացնել այս գործառնությունները, ներառյալ՝

■ Միջնորդություն և հաշտարարություն

Ամենահիմնական մակարդակում մարդու իրավունքների ազգային բազմաթիվ կառույցներ օգնում են իրավունքների իրականացմանը՝ ապահովելով միջնորդության և հաշտարարության ծառայություններ: Տուժած անձը կարող է ուղղակիորեն կապվել մարդու իրավունքների կառույցի միջնորդության կամ հաշտարարության պաշտոնյայի հետ քննարկելու իր խնդիրները: Այդ պաշտոնյաներից պահանջվում է գրանցել բողոքը և հաճախ նրանց լիազորություն է տրվում, հաշվի առնելով տուժածի ցանկությունը, ընդհանուր խորհրդատվություն իրականացնել տուժած անձի ունեցած հնարավորությունների մասին, հաղորդակցություն նախաձեռնել վեճի մյուս կողմի հետ: Սա կարող է ներառել ոչ պաշտոնական հեռախոսային կամ դեմ առ դեմ երկխոսություններ, չնայած բազմաթիվ ազգային կառույցներ են ընդունում անանուն կամ անստորագիր բողոքներ: Հաճախ ազգային կառույցը ստիպված է լինում հենվել ավելի ֆորմալ բողոքների վրա, ինչպիսիք են գրավոր հաղորդումների միջոցով ներկայացվածները: Կախված բողոքի բնույթից և նախնական քննարկումների արդյունքներից՝ կարող է կազմակերպվել ներգրավված կողմերի հանդիպում, որի ընթացքում միջնորդը կամ հաշտարարը փորձում է լուծել խնդիրը:

Մարդու իրավունքների ազգային կառույցները հաճախ պահում են միջնորդության կամ հաշտարարության գործընթացների արձանագրու-

թյունները՝ որպես վեճի լուծմանը հանգեցրած մոդելների ամրագրում: Այդ արձանագրությունները նաև կարող են ներառվել տարեկան զեկույցում, օգտագործվեն հատուկ զեկույց ներկայացնելու համար, ներառվեն համաձայնագրային մարմիններին ներկայացված ստվերային զեկույցում և/կամ օգտագործվեն միջնորդության և հաշտարարության պաշտոնյաներին ուսուցանելու և կայուն պրակտիկա և արդյունքներ սահմանելու համար: Այս արձանագրությունները պետք է պահվեն գաղտնի և անցյալում արված գործողություններին արված ցանկացած հղում չպետք է բացահայտի ներգրավված կողմերին:

Միջնորդությունը և հաշտարարությունը կարող է կապված լինել այլ բողոքների լուծման մեխանիզմների հետ, այնպես որ այս մակարդակում բողոքը չլուծելը կարող է բերել ազգային կառույցի կողմից ավելի բարձր մակարդակում քայլեր ձեռնարկելուն:

Մարդու իրավունքների վերանայման դատարանը Նոր Ջեռլանդիայում

Նոր Ջեռլանդիայի Մարդու իրավունքների 1993 թ. ակտը նախատեսում է մարդու իրավունքների գործընթացների գրասենյակի ստեղծում, որը հանդիսանում է Մարդու իրավունքների կոմիտեի մի մաս: Մարդու իրավունքների գործունեության տնօրենը ղեկավարում է գրասենյակը: Տնօրենը լիազորված է քաղաքացիական հայց ներկայացնել Մարդու իրավունքների վերանայման անկախ դատարան:

Նոր Ջեռլանդիայի մարդու իրավունքների վերանայման դատարանն օրենքով նախատեսված մարմին է, որը բաղկացած է արդարադատության նախարարի նշանակած անձանց խմբից, որոնցից երեքը լսում են դատարան բերված ցանկացած գործ: Խումբը բաղկացած է մինչև քսան անձանցից, որոնք նշանակվում են մարդու իրավունքների, իրավաբանական, սոցիալական, մշակութային և տնտեսական բնագավառներում նրանց գիտելիքների և փորձի հիման վրա: Որպես քվադիդատական մարմին՝ դատարանն ունի ողջամտորեն լայն հայեցողություն գործընթացները վարելու եղանակի հարցում: Դատարանը լիազորված է լուծել վեճերը և նշանակել իրավական պաշտպանության միջոցներ: Այն նաև կարող է գործեր ուղարկել Մարդու իրավունքների կոմիտեի հաշտարար գործունեությանը, ինչպես նաև դիմել բարձր դատարան այն գործերով, որոնք ենթադրում են հատուցման վճարում:

■ Մարդու իրավունքների դատարան

Չկարողանալով հաջող կերպով միջնորդություն կամ հաշտարարություն իրականացնել կամ չկարողանալով մեկ կամ երկու կողմերի կողմից բողոքի քննարկման արդյունքում ընդունված որոշման պայմանների կատարմանը հասնել, մարդու իրավունքների որոշ ազգային կառույցներ ունեն մեխանիզմներ, որոնց միջոցով նրանք կամ բողոքող կողմերը կարող են նախաձեռնել դատարանի կողմից գործի քննումը, այդ թվում՝ մարդու իրավունքների ազգային դատարան: Նման գործըն-

թացներ նախաձեռնելու հնարավորությունը և դատարանը պետք է հաստատվեն օրենքով նախատեսված մարմնի կողմից: Մարդու իրավունքների ազգային դատարանը կարող է գործել որպես կամուրջ ֆորմալ իրավական գործընթացների և հետաքննության ու հաշտարարության ավելի ոչ ֆորմալ գործընթացի միջև:

■ Միջամտություն իրավական գործընթացներին

Մարդու իրավունքների կառույցների մեկ այլ կարևոր դերակատարությունը միջամտությունն է նորմալ դատական համակարգի ներսում իրականացվող գործընթացներին: Ավստրալիայում, օրինակ՝ մարդու իրավունքների և հնարավորությունների հանձնաժողովը լիազորություն ունի միջամտելու *amicus curae* (դատարանի ընկեր) այն դատական գործընթացներում, որոնցում բարձրացվում է հաշմանդամության հետ կապված խտրականության հարց: Սա հնարավորություն է տալիս հանձնաժողովին ներկայացնել իր տեսակետները օրենքի մեկնաբանման և կոնկրետ հանգամանքներում դրա կիրառման կապակցությամբ:

Համապատասխան կառույցի ստեղծում

Կոնվենցիան ընդունում է, որ համակարգը կարող է արդեն գոյություն ունենալ մասնակից պետությունների իրավասության ներքո, որը փոփոխությունների ենթարկվելուց հետո կարող է համապատասխանել կոնվենցիայի պահանջներին: Այնուամենայնիվ, որոշ ինստիտուցիոնալ մեխանիզմներ հազեցված չեն կոնվենցիայի մշտադիտարկման համար անհրաժեշտ միջոցներով, և հավանականություն կա, որ դրանք կվերափոխվեն: Մարդու իրավունքների արդեն գոյություն ունեցող կառույցները պետք է ստանան անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի կարողանան արդյունավետորեն մշտադիտարկել կոնվենցիայի կիրարկումը: Ինչ ձև էլ այն ունենա, լինի կառույց կամ կառույցների համակցություն, այն պետք է կարողանա իրականացնել կոնվենցիայով սահմանված խնդիրները, այն է՝ աջակցել, պաշտպանել և մշտադիտարկել կոնվենցիայի կիրարկումը: Կառույցը պետք է նաև հարգի այն սկզբունքը, որ քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ներկայացնող կազմակերպությունները լիարժեք մասնակցեն մշտադիտարկման գործընթացին:

Նոր կառույց ստեղծելու կամ արդեն գործող կառույցի վրա հենվելու հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

- Արդյոք գործող ինստիտուտները համապատասխանո՞ւմ են Փարիզյան սկզբունքներին:
- Արդյոք կառույցն ունի՞ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով նախատեսված մանդատ:

- Արդյոք կառույցը փորձաքննության ենթարկել² է կոնվենցիան և/կամ ընդհանրապես մարդու իրավունքների և հաշմանդամության հետ կապված հարցերը:
- Արդյոք կառույցն ունի³ հաշմանդամություն ունեցող հանձնակատար և աշխատակազմի անդամներ:
- Արդյոք գործող կառույցն ունի⁴ բավարար մարդկային ռեսուրսներ և ժամանակ աջակցելու, պաշտպանելու և մշտադիտարկելու կոնվենցիան՝ իր մյուս պարտականությունները կատարելու հետ մեկտեղ:
- Արդյոք գործող կառույցը բավարար մատչելի⁵ է հաշմանդամություն ունեցող անձանց համար և արդյոք այն ունի⁶ մատչելիության ռազմավարություն (շինությունների, փաստաթղթերի և տեխնոլոգիաների առումով և այլն):

Խորհրդարանական վերահսկողություն

Կոնվենցիայում նախատեսված մշտադիտարկման հատուկ փաստաթղթերից բացի, խորհրդարանն իր վերահսկողական գործառնություններով առանցքային դեր է խաղում հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու հարցում: Վերահսկողության որոշ ամենաեական գործիքները նկարագրված են ստորև²:

Խորհրդարանական հանձնաժողովներ

Գործադիր իշխանության պարբերաբար վերահսկողությունը հաճախ իրականացվում է խորհրդարանական հանձնաժողովների միջոցով: Նրանք հետևում են կառավարության առանձին վարչությունների և նախարարությունների աշխատանքին և հետաքննություններ են իրականացնում նրանց քաղաքականության և վարչակարգի առանձնապես կարևոր ուղղություններով: Արդյունավետ վերահսկողությունը պահանջում է, որ հանձնաժողովները հնարավորություն ունենան սահմանելու իրենց սեփական օրակարգերը և լիազորություն ունենան պարտադրելու նախարարներին և քաղաքացիական ծառայողներին ներկայանալ և պատասխանել հարցերին:

Ֆետաքննության հանձնաժողովներ

Երբ ծագում է հանրային մեծ մտահոգություն առաջացնող հարց, դրան արձագանքելու լավագույն ձևը այդ հարցերին անդրադառնալու համար հետաքննության

2. Խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ առավել համակողմանի քննարկում առկա է «Խորհրդարանը և ժողովրդավարությունը 21-րդ դարում: Դրական պրակտիկայի ձեռնարկ» (ԺՆԱ, Միջխորհրդարանական միություն, 2006), էջ 127-146:

հանձնաժողովի ստեղծումն է: Սա հատկապես օգտակար է, երբ հարցը ենթակա չէ որևէ մեկ խորհրդարանական հանձնաժողովի իրավասությանը կամ չի գտնվում որևէ մեկ կառավարության ստորաբաժանման պատասխանատվության ոլորտում:

Մարդու իրավունքների ազգային կառույցներն արդեն կենտրոնանում են կոնվենցիայի վրա

Մարդու իրավունքների ազգային կառույցները (ՄԻԱԿ) մասնակցել են կոնվենցիայի և կանոնադրության արձանագրության հետ կապված բանակցություններին և ներգրավված են եղել կոնվենցիայի հետ կապված հարցերում մինչ դրա ընդունումը: ՄԻԱԿ-ները անցկացրել են փորձագիտական հանդիպումներ հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների հետ ազգային և միջազգային մակարդակներում՝ քննարկելու համար կոնվենցիայի կիրարկումը և մշտադիտարկումը: Կոնվենցիան նշանակալի տեղ է ունեցել Մարդու իրավունքների աջակցության և պաշտպանության մարդու իրավունքների ազգային կառույցները համակարգող հանձնաժողովի օրակարգում: 2007 թ. մարտին կայացած իր վերջին հանդիպման ժամանակ մարդու իրավունքների և հաշմանդամության գծով հանձնաժողովի պաշտոնական կառույցը և Իռլանդիայի մարդու իրավունքների կոմիտեի ներկայացուցիչը առաջարկեց, որ ՄԻԱԿ-ները սերտորեն աշխատեն հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ, և որ հանձնաժողովի հետագա հանդիպումներում ժամանակ հատկացվի կոնվենցիայի քննարկմանը:

Հանձնաժողովի բյուրոն համաձայնեց աջակցել Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների ասիական խաղաղ ֆորումի մշակած առաջարկությանը մարդու իրավունքների ազգային կառույցների համար մարդու իրավունքների և հաշմանդամության վերաբերյալ տվյալների շտեմարան ստեղծելու առումով: Այդ շտեմարանի նպատակն է՝

- Պարզել ՄԻԱԿ-ներում կարողությունների զարգացման առաջնահերթությունները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող հարցերին անդրադառնալու նրանց կարողությունը կատարելագործելու համար:
- Հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, դրան ի պատասխան դրական սոցիալական փոփոխություններին աջակցելու համար:
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ գիտական ուսումնասիրություններին աջակցելու համար ապահովել հավաստի ապացույցների բազա:
- Կատարելագործել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերի համակարգումը միջազգային հանրության մեջ:

Նախարարներին ուղղված հարցերը

Այն երկրներում, որտեղ նախարարները նաև օրենսդիր իշխանությունում են, վերահսկողության կարևոր մեխանիզմ է խորհրդարանի կողմից նախարարներին ուղղված պարբերաբար հարցերը՝ և՛ բանավոր, և՛ գրավոր: Նման ուղղակի հարցադրումը օգնում է պահպանելու կառավարության հաշվետվողականությունը:

Գործադիր իշխանությունում խելամիտ նշանակումների հարցը

Այն երկրներում, որտեղ նախարարները խորհրդարանի անդամ չեն, վերահսկողության կարևոր կողմ է դառնում նախարարների կաբինետի և բարձրագույն պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների նշանակումները հաստատելը: Սովորաբար սա պահանջում է ծավալուն հետաքննություններ տվյալ պաշտոնին կոնկրետ նշանակվողի համապատասխանության առումով: Մարդու իրավունքների պաշտպանների, մարդու իրավունքների հանձնակատարների և կաբինետի անդամների նշանակման դեպքում խորհրդարանը պետք է համոզվի նշանակվողի՝ հաշմանդամության հետ կապված հարցերի վերաբերյալ գիտելիքների և ունեցած վերաբերմունքի հարցում:

Ոչ կառավարական հանրային մարմինների նկատմամբ վերահսկողությունը

Խորհրդարանը նաև մշտադիտարկում է այն անկախ մարմիններին, որոնց կառավարությունը պատվիրակել է հանրային գործառույթներ, ինչպիսիք են՝ կարգավորող գործունեությունը կամ առաջնային ծառայությունների մատուցումը: Սրանց մեջ մտնում են առողջապահության և ապահովության հարցերով կարգավորող մարմինները, ծառայություններ մատուցող մարմինները, կոմունալ ծառայություններ մատուցողները և այլ մարմիններ, որոնց գործունեությունը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա:

Բյուջետային ստուգում և ֆինանսական հսկողություն

Խորհրդարանն իր հսկողության միջոցով ունի նշանակալի ազդեցություն կառավարության ֆինանսական միջոցների հետ կապված քաղաքականության վրա: Խորհրդարանական հսկողությունն իրականացվում է և՛ բյուջեի ձևավորման, և՛ դրա կատարման ընթացքում: Որպես այս գործընթացի մաս՝ խորհրդարանը կարող է ապահովել, որ առաջարկվող բյուջեի ազդեցությունը տարբեր սոցիալական խմբերի վրա, ինչպիսիք են, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձինք, քննարկվի և մշտադիտարկվի:

Դատարանները և դատական համակարգի դերը

Կախված յուրաքանչյուր մասնակից պետության սահմանադրական կառուց-

վածքից՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի վավերացումը կա՛մ ինքնաբերաբար հանգեցնում է դրա բովանդակության՝ ներպետական օրենսդրության մաս դառնալուն և ներպետական դատարանների կողմից ուղղակիորեն կիրառվելուն (սա հայտնի է որպես միջազգային իրավունքի ռեցեպցիայի «մոնիստական մոտեցում» և բնորոշ է քաղաքացիական իրավունքի ավանդույթներին), կա՛մ պահանջում է կոնվենցիայով նախատեսված իրավունքների ամրագրում ներպետական օրենսդրությամբ (հայտնի է որպես «դուալիստական» մոտեցում, որը հատուկ է ընդհանուր իրավունքի ավանդույթներին)³:

Նույնիսկ այս վերջին դեպքում միայն կոնվենցիայի ստորագրումը կամ վավերացումը կոնվենցիայի համար ստեղծում է մեկնաբանման հզոր խթան: Սա նշանակում է, որ դատական համակարգը կկիրառի ներպետական օրենսդրությունը և կմեկնաբանի այն հնարավորինս կոնվենցիային համապատասխանող եղանակով՝ կիրառելով համընդհանուր ճանաչված սահմանադրական այն սկզբունքը, որ պետության ներպետական օրենքը չպետք է հակասի նրա միջազգային պարտավորություններին: Ավելին՝ ինչպես ակնհայտ է դառնում կոնվենցիայի ընդունումից առաջ ձևավորված նախադեպային իրավունքից, պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և դրանց աջակցելու հարցում հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները կիրառելու իրենց պարտավորությունը:

Ստորև բերված շրջանակում նշված նախադեպային գործերի մեծ մասը ընդդատյա է ավելի բարձր ատյանների դատարանների, չնայած մարդու իրավունքների միջազգային կառույցների և հաշտարար մարմինների բողոքների կապակցությամբ կայացված որոշ որոշումներ նույնպես ներառվում են: Մինչ այժմ դատական համակարգը կարևոր դեր է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության արգելքի սկզբունքների զարգացման առումով: Իրավունքների պաշտպանության հարցում դատական համակարգի այսչափ կենտրոնական դերը ունի և՛ իր առավելությունները, և՛ թերությունները:

Իրավունքների դատական պաշտպանությունը

Իրավունքներ և պարտականություններ սահմանելու, ինչպես նաև սկզբունքներ ամրագրելու համար ազգային իրավական համակարգերի մեծ մասն օգտագործում է պաշտոնական և աստիճանակարգային դատական ընթացակարգ: Դատարանների և քաղաքացիական օրենսգրքերի համակցման կամ նախադեպային տեսության կիրառման միջոցով այն կօգնի հավաստել, որ իրավունքի և իրավունքի սկզբունքների զարգացումը դիմանում է ժամանակի փորձությանը: Սա նաև

3. Ավելի մանրամասն տե՛ս 4-րդ գլուխը:

ունի բարձրագույն դատարաններին «ստուգողական գործեր» ներկայացնելու առավելություն, այդ դատարանները բաղկացած են գլխավոր դատական ծառայողներից, որոնք ունակ են մանրամասնորեն քննարկել հարցերը, որոնք կարող են բարդ լինել կամ ունենալ նշանակալի քաղաքական ենթատեքստ: Այս մակարդակում դատական գործերը հիմնականում ներգրավում են բարձր որակի իրավական միջնորդություններ և կողմերի ներկայացուցիչներ: «Ստուգողական գործի» որոշումը կարող է հետադարձ ազդեցություն ունենալ ոչ միայն վեճի կողմերի համար, այլ նաև այլ անձանց համար, որոնք կարող են լինել նույն կամ նման իրավիճակում:

Օրինակ՝ «ստուգողական գործում» դատարանի որոշումը կարող է բերել ոչ միայն հայցվորի հատուցում ստանալուն, այլ նաև քաղաքականության պարբերաբար փոփոխման և, այդպիսով, կարող է բերել նաև մի խումբ մարդկանց իրավունքների իրականացման վիճակի բարելավմանը: Ուստի իրավունքների պաշտպանության հարցում դատական համակարգի դերը չափազանց կարևոր է:

Դատավորները հաճախ քննում են գործեր, որոնք վերաբերում են քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական որոշ իրավունքների: Տարաբնույթ միջկառավարական և ոչ կառավարական կառույցներ կոչ են արել կատարելագործել իրավունքների դատական ենթակայության վերաբերյալ գործերի տվյալների շտեմարանները⁴: Այսպիսի մեխանիզմները կարող են օգտակար լինել ուսուցման և իրազեկվածության բարձրացման համար դատավորների և իրավաբանների շրջանում: Ինչպես ցույց է տրվում հաջորդ էջի շրջանակում, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին և դրանց կատարելագործմանը վերաբերող ազգային նախադեպային իրավունքն արդեն իսկ զարգացել է նույնիսկ մինչև կոնվենցիայի ընդունումը կամ որպես մասնագիտացված ազգային օրենսդրության արդյունք, կամ հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների կիրառման միջոցով, քանի որ կային համապատասխան իրավա-

«Ամենակարևորն այն է, որ հասկանանք, որ այն կետում, ուր մենք գտնվում ենք այսօր, արդեն իսկ վկայությունն է հասարակական վստահության, որն ունեցել է անվստահության երկար պատմություն: Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակայնության նկրտումն ու առաքելությունն էր, որ ամենամեծ խթանը դարձավ՝ ուղղված կոնվենցիայի բովանդակության համար և այն փաստի համար, որ կոնվենցիան այսօր ստացել է այդքան լայն ճանաչում»:

Լուիզ Արբուր, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար

4. Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների մեխանիզմների արդյունավետ գործողության մասին առաջարկությունները. ազգային կառույցներ և ասիական ու խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում մարդու իրավունքների պաշտպանության և աջակցության տարածաշրջանային միջոցառումներ-Տարածաշրջանային միջոցառումներ (E/CN 4/2006/100/ADD,1 paras 34ff.):

գիտություն և մարդու իրավունքների միջազգային մարմինների մեկնաբանությունները:

Միևնույն ժամանակ կան որոշակի սահմանափակումներ, որոնք բնորոշ են իրավունքների դատական պաշտպանությանը: Դատական գործընթացը մասնավորապես բողոքարկման մակարդակում թանկ է և ժամանակատար: Դատական գործընթացների ծախսերը կարող են այդ միջոցը դարձնել անմատչելի և ոչ գրավիչ: Սա կարող է մասնավորապես վերաբերել հաշմանդամություն ունեցող անձանց, որոնք կախված են սոցիալական ապահովության միջոցներից, և այն հանգամանքից, թե կարո՞ղ է արդյոք խնդրու առարկա հարցը ստանալ պետության կողմից հատկացվող իրավաբանական օգնություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող որոշ դատական նախադեպեր

Հաշմանդամություն ունեցող անձինք դատական հայցեր են հարուցում բազմաթիվ երկրներում, այդ թվում նաև՝ մարդու իրավունքների տարածաշրջանային դատարաններ, ինչպիսին է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այս գործերը լուծելիս դատարանները պարզաբանում են, թե ինչ պետք է անեն պետությունները պաշտպանելու համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և հատուցում են ապահովում այն անձանց համար, ում իրավունքները խախտվել են: Օրինակ՝ դատարանները որոշել են, որ՝

- Ավիափոխադրողները, որպես հաճախորդներին մատուցվող ծառայություն, պետք է ապահովեն անվասայլակ, որը կօգտագործվի օդակայանի հաշվառման կետից նստեցման կետ ընկած տարածքում: Նման սարքավորման համար վճար պահանջելը անիրավաչափ խտրականություն է («Ռյանմիրն ընդդեմ Ռոսսի» [2004] EWCA Civ 1751):
- Առողջապահության համակարգում նշանների լեզվով թարգմանության ձևով խելամիտ հարմարությունների բացակայությունը ի ծնե համր անձի և հաղորդակցության համար նշանների լեզվի կարիք ունեցողների համար անհամատեղելի է խտրականության արգելման վերաբերյալ օրենսդրության հետ («Էլդրիջն ընդդեմ Բրիտանական Կոլումբիայի» [Գլխավոր դատախազ] [1997] 3 SCR 624):
- Համալսարանը խտրականություն էր դրսևորել մագիստրատ ուսանողուհու նկատմամբ՝ արգելելով նրան շենք մտնել դասերից հետո, այն հիմքով, որ նա տառապում էր ընկճախտով, այն դեպքում, երբ այլ մագիստրատ ուսանողները ունեին շենք մտնելու հնարավորություն: Դատարանը որոշեց, որ մուտք գործելը հանրության համար սովորաբար մատչելի ծառայությունների մի մաս է, և որ դրա մերժումը, հիմնվելով ուսանողի հոգեկան առողջության վրա, հանգեցնում է խտրականության («Բրիտանական Կոլումբիայի համալսարանն ընդդեմ Բերգի» [1993] 2 SCR 353):
- PGA գոլֆի մրցաշարը, որն իրականացվում է հասարակական հիմունքներով և

բաց է հասարակության համապատասխան որակավորում ունեցող մասնակիցների համար, պետք է փոխի իր կանոնները, երկար տարածություն քայլելու հնարավորություն չունեցող որակավորում ունեցող դիմողի համար հարմարություններ ստեղծելու առումով, և ապահովի գոլֆի դաշտում համապատասխան փոխադրամիջոց, փոխանակ պահանջելու, որ այդ անձը քայլի նույն ձևով, ինչ այլ մրցակիցները («PGA տուրն ընդդեմ Մարտինի» [2001] 204 F 3d 994):

■ Բանտի ղեկավարության կողմից դատապարտյալի առողջական խնդիրների հետ կապված հատուկ հարմարություններ չստեղծելը կամ հատուկ վերաբերմունք չցուցաբերելը համարվել են այն աստիճան տառապանք պատճառող, որն անհամատեղելի է պատժի կրման ընթացքի հետ («Սուզելն ընդդեմ Ֆրանսիայի» [2002] EHRR):

■ Քառասուն ամսով հաշմանդամության նպաստն ուշացնելը Չարավային Աֆրիկայի սահմանադրական դատարանի կողմից համարվել է ոչ միայն սոցիալական ապահովության մասին օրենքի խախտում, այլ նաև այդ անձի արժանապատվության ոտնահարում, քանի որ ազդել էր կենցաղը հոգալու նրա հնարավորության վրա («Սոցիալական ապահովության դեպարտամենտն ընդդեմ Նոնտենբսիոյի» [Մարտ 2006] Գործ համար 580/04, at 32):

■ Հաշմանդամություն ունեցող անձանց մեկուսացումը և առանձնացումը խտրականության լուրջ և խոր ձև է: Սա մասնավորապես վերաբերում է հաշմանդամություն ունեցող երեխաների մեկուսացմանը սովորական դպրոցներից («Օլմսթեդն ընդդեմ LC-ի» [1999] 527 US 581):

■ Պատշաճ չափանիշներով կենսապայմաններից օգտվելը նշանակում է, որ հաշմանդամություն ունեցող անձը ոչ միայն կարող է պահանջել հարմարությունների և ծառայությունների մատչելիություն, այլ կարող է նաև ազատվել որոշակի կանոններից, որոնք հակառակ պարագայում կարող են խանգարել նրա՝ բնականոն կյանքով ապրելու հնարավորությանը: Այս պարագայում շենքի համատիրության կողմից բնակչին ուղեկցող շուն պահելու թույլտվություն չտալը համարվել է հաշմանդամության հիմքով անիրավաչափ խտրականություն («Յուլիան ընդդեմ Սոքսթոն ավարթմենտոզ ՍՊԸ-ի» [1987] 9 CHRR D/4681):

Վերջապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննվող մի գործ ցույց է տալիս, թե ինչպես հարմարություններ չապահովելը կարող է հանգեցնել մարդու այլ իրավունքների խախտումների: Գործը վերաբերում է անվասայլակ օգտագործող անձի բանտարկությանը: Նա լուրջ օգնության կարիք ուներ, այնպես որ, հնարավորություն չունեի բավարար շարժվելու, պահպանելու համար մարմնի նորմալ ջերմությունը, քանի որ այն սենյակը, որտեղ մնում էր, չէր տաքացվում առանձնահատուկ կերպով, կամ նա չէր ծածկվում քնապարկով: Դատարանը որոշեց, որ դիմողը տարբերվում է մյուս մարդկանցից, և որ մյուս անձանց հետ նույն կերպ վերաբերվելը խտրականության դրսևորում է և խախտում է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը («Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության» [2002] 34 EHRR 1285):

Դատական ընթացակարգերի համար պահանջվող ժամանակը կարող է և՛ խանգարել իրավաչափ պահանջների ներկայացմանը, և՛ ավելի վատթարացնել իրավիճակը գործի ձգձգման ընթացքում: Հաշմանդամություն ունեցող անձանց համար սա կարող է հանգեցնել համընդհանուր հասարակական կյանքին մասնակցելուց նրանց մեկուսացմանը: Պաշտոնական դատական գործընթացների բնույթը կարող է նաև անհամապատասխան լինել հաշմանդամություն ունեցող անձանց կոնվենցիայով նախատեսված իրավունքների վերաբերյալ վեճեր լուծելիս: Դարձյալ, կախված գործի կամ վեճի բնույթից՝ միջնորդությունը և հաշտարարությունը կարող են լինել կոնվենցիայի հետ համապատասխանությունն ապահովող առավել արդյունավետ միջոցներ: Բողոքներ ներկայացնելու այլընտրանքային տարբեր մեխանիզմները, որոնք ավելի վաղ քննվել են սույն գլխում, երբեմն կարող են ապահովել վեճերը լուծելու ավելի արագ, ավելի էժան և ավելի հասանելի և պատշաճ միջոցներ:

Խորհրդարանականներին ներկայացվող ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող եմ աջակցել եւ պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ազգային կառույցների միջոցով.

- Ապահովե՞ք կառուցվածքի ստեղծումը, նախընտրելի է, որ լինի մարդու իրավունքների ազգային կառույցի ձևով, որն իրավասություն ունի աջակցելու, պաշտպանելու և վերահսկելու կոնվենցիայի կիրարկումը:
- Ապահովե՞ք, որ կոնվենցիայի կիրարկումը վերահսկելու համար ընտրված կամ ստեղծված ազգային կառույցը համապատասխանի Փարիզյան սկզբունքներին:
- Ապահովե՞ք, որ կոնվենցիայի կիրարկման պաշտպանության, աջակցման և վերահսկման համար ընտրված կամ ստեղծված ազգային կառույցները ապահովեն բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, որպեսզի կարողանան կատարեն իրենց աշխատանքը արդյունավետ և ռացիոնալ կերպով:
- Զննարկե՞ք մարդու իրավունքների գործողությունների ազգային ծրագրի նախագծումը, որն ընդգծում է այն ռազմավարությունը կամ գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն ապահովելու համար մարդու իրավունքների այն միջազգային համաձայնագրերով նախատեսված պարտավորությունների կատարումը, որին մասնակցում է պետությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենսդրության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց համար զբաղվածության հավասար հնարավորությունների հասնելը: Ուղեցույցներ (ԺՆՆ, Աշխատանքի միջազգային գրասենյակ, 2004): Տեղադրված է՝ <http://www.ilo.org/public/english/employment/skills/disability/download/eeofinal.pdf>

Մարդու իրավունքների պաշտպանի ազգային կառույցների արդյունավետության գնահատում (ԺՆՆ, Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ և ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, 2005) Առկա է արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն՝ <http://www.ohchr.org/english/about/publications/papers.htm>:

Կրթություն բոլորի համար (ԿԲՀ) Մշտադիտարկման ընդարձակ զեկույց 2007 (Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ, 2007): Տեղադրված է՝ http://portal.unesco.org/education/en/ev.php-URL_ID=49591&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html:

Մարդու իրավունքներ և հաշմանդամություն: Հաշմանդամության համատեքստում ՄԱԿ-ի մարդու իրավունքների փաստաթղթերի առկա կիրառումն ու ապագա ներուժը (ԺՆՆ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, 2002): Առկա է անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն՝ <http://www.ohchr.org/english/about/publications/papers.htm>

Մարդու իրավունքներ: Ձեռնարկ խորհրդարանականների համար (ԺՆՆ, Միջխորհրդարանական միություն և ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, 2005): Առկա է արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն՝ <http://www.ohchr.org/english/about/publications/>

Համայնքային վերականգնողական ծառայություն (ՀՎԾ): Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման, հնարավորությունների հավասարեցման, աղքատության կրճատման և սոցիալական ներառման ռազմավարություն (ԺՆՆ, Աշխատանքի միջազգային գրասենյակ, ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի հարցերի կազմակերպություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2004): Տեղադրված է՝ http://www.ilo.org/public/english/region/asro/bangkok/ability/download/otherpubl_cbr.pdf

Խորհրդարանը և ժողովրդավարությունը 21-րդ դարում: Դրական փորձի ձեռնարկ (ԺՆՆ, Միջխորհրդարանական միություն, 2006): Առկա է արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն՝ <http://www.ipu.org/english/handbks.htm>:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Կրթության իրավունքի վերաբերյալ հատուկ զեկուցող Վերնոր Մունյոզի (A/HRC/4/29) զեկույցը: Առկա է արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն՝ <http://www.ohchr.org/english/bodies/hrcouncil/4session/reports.htm>

Պայմանագրային ձեռնարկ (ՄԱԿ-ի արտաքին հարաբերությունների գրասենյակ, Նյու Յորք): Տեղադրված է՝ <http://untreaty.un.org/English/TreatyHandbook/hbframeset.htm>

ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կոնվենցիայի քարտուղարություն

ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն (DESA/SUՅԿ)

Սոցիալական քաղաքականության և զարգացման բաժին:
ՄԱԿ-ի 2-րդ տաղավար, Նյու Յորք, NY 10017, ԱՄՆ, ֆաքս +1-2129630111, էլ.փոստ՝ enable@un.org, կայք՝ www.un.org/disabilities/

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի քարտուղարությունը ՄԱԿ-ի քարտուղարությունում հաշմանդամության հարցերով թիրախային կետն է: Այն գործում է որպես հաշմանդամության հարցերի տեղեկատվության հաշվիչ պալատ (քլիրինգային պալատ), պատրաստում է հրատարակություններ, աջակցում է ազգային, տարածաշրջանային և միջազգային ծրագրերին և միջոցառումներին, կառավարություններին և քաղաքացիական հասարակությանը և նախնական աջակցություն է տրամադրում տեխնիկական համագործակցության ծրագրերին և միջոցառումներին: Այն նաև պատասխանատու է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով նախատեսված մասնակից պետությունների համաժողովը սպասարկելու համար: Քարտուղարությունը գտնվում է Նյու Յորքում՝ Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության սոցիալական քաղաքականության և զարգացման բաժնում:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի քարտուղարություն

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳՅԳ/OHCHR)

1211, Ժնև 10, Շվեյցարիա, էլ. փոստ՝ crpd@ohchr.org (խնդրում ենք թեմայի տողում նշել՝ «Տեղեկատվության խնդրանք» բառերը): էլ.կայք՝ www.ohchr.org

ՄԻԳՅԳ-ն աջակցում է մարդու իրավունքների գերագույն հանձնակատար տիկին Լուիզ Արբուրի մանդատին, որը ՄԱԿ-ի

մարդու իրավունքների համար պատասխանատու ամենագլխավոր պաշտոնյան է: Գրասենյակը աջակցում և պաշտպանում է մարդու իրավունքներին միջազգային համագործակցության և ՄԱԿ-ի ներսում մարդու իրավունքների վերաբերյալ միջոցառումների համակարգման միջոցով: Գրասենյակը նպաստում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կիրարկմանը, որը նրա առանցքային մանդատի մի մասն է, մասնավորապես իր մասնագիտացված գրասենյակների և մասնակից պետությունների, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների ազգային կառույցների և միջկառավարական կազմակերպությունների հետ տեխնիկական համագործակցության և գործընկերության միջոցով: Բացի այդ, գրասենյակն ապահովում է փորձագիտական աջակցություն և օգնում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին:

Միջխորհրդարանական միություն, Chemin du Pommier 5, 1218 Le Grand-Saconnex, Շվեյցարիա, հեռ.՝ +41-22 919 41 50, ֆաքս՝ +41-22 919 41 60, էլ. փոստ՝ postbox@mail.ipu.org, էլ.կայք՝ www.ipu.org.

Միջխորհրդարանական միությունը (ՄԽՄ) խորհրդարանների համաշխարհային կազմակերպություն է: Այն աջակցում է խորհրդարանների անդամների միջև քաղաքական երկխոսությանը և խթանում է խորհրդարանական գործակցությանը և միջազգային օրակարգում բարձր տեղ զբաղեցնող բազմաթիվ միջոցառումներին: Դրա նպատակն է ապահովել, որ խորհրդարանները և դրանց անդամները կարողանան ազատորեն և արդյունավետ կատարել իրենց աշխատանքը, որի համար նրանք ընտրվել են, արտահայտեն ժողովրդի կամքը, ընդունեն օրենքներ, վերահսկեն կառավարությունների՝ իրենց գործողությունների համար հաշվետու լինելը: Այս նպատակով ՄԽՄ-ն իրականացնում է որպես ժողովրդավարական կառույցներ խորհրդարանների ուժեղացմանն ուղղված ծրագրեր: Այն աուդիտի է ենթարկում խորհրդարանները, ապահովում է տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն, ձեռնարկում է ուսումնասիրություններ ու մշակում է չափանիշներ և ուղեցույցներ: Այն հատուկ շեշտադրում է մարդու իրավունքների պաշտպանության աջակցությունը և աջակցում է կանանց ներգրավմանը քաղաքականության մեջ:

**ԲԱՑԱՌՈՒՄԻՑ
ԴԵՊԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների
իրականացումը

Ուղեցույց պատգամավորների համար

Թարգմանությունը և տպագրությունը՝
«Հուլյսի կամուրջ» ՀԿ-ի

Տպագրությանն աջակցել են
«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության
դանիական կազմակերպությունն ու
Դանիայի միջազգային զարգացման գործակալությունը



Միավորված
ազգերի
կազմակերպություն



Միավորված
ազգերի
կազմակերպություն

Մարդու իրավունքների
գերագույն հանձնակատարի գրասենյակ



Միջխորհրդարանական
միություն